¹ PG, t. 31, էջ 465:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

Հետքերը թերևս այնքան էլ դժվար չէ տեսնել Գր. Նարեկացու գլուխգործոցի առանձին դրվագների վրա¹:

Ստ. Ասողիկի Պատմության և «Պահոց գրքի» առնչակցության իրողությունը, առանց որևէ քննություն փորձի, առաջին անգամ արձանագրվել է Լ. Տեր-Պողոսյանի կողմից²: Համեմատությունը ցույց է տալիս, որ Ստ. Ասողիկը հիրավի ծանոթ է եղել «Պահոց գրքին», ձեռքի տակ ունեցել է «Ի ծնունդ Փրկչին» ճառի, ինչպես նաև Հարցմունքի հայերեն թարգմանությունները և օգտվել է դրանցից: Ահա այսպիսի տեսք ունեն մեր ունեցած նմանության օրինակները:

Ի ծնունդ Փրկչին

Ստեփանոսի Տարոնցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական
(Պետերբուրգ, 1885)

Աստուած ի մարմնում, ոչ առուածոյ Եւ սուրբն Բարսեղ ի ճառի գործովք, որպէս ի ձեռն մարգարէիցն, ալ բուսակից ինքեան եւ միաւորեալ ներկայացուցանելով զմարդն եւ ի ձեռն ազգակցին մերոյ մարմնոյն իւրոյ, ի վեր առ ինքն տանելով զամենայն մարդկութիւնս: Արդ, զիա՞րդ, վնասակարն: Եւ զի՞նչ աւրինակ ի մարմնում Աստուածաւոր, ի ձեռն միոյ յամենեսեան եկն վնասակարն: Եւ զի՞նչ աւրինակ ի մարմնում Աստուածութիւնն՝ որպէս հոլր երկաթում, ոչ փոխարկաբար, ալ փոխատրաբար: Քանզի ոչ եթէ արտաքս ինչ յիւրմէ հոլր իրկաթում, ոչ փոխարկաբար, ալ ընթանայ հոլր առ երկաթ, ալ մնափոխատրաբար: Քանզի ոչ եթէ արտաքս ինչ յիւրմէ ընթանայ հոլր առ իրկաթ, ալ մնալով յըստ բնութեանն ոչ տեղւոջ՝ փոխատրէ ի ան յիւրմէ զաւրութեանն, որ ոչ անազէ փոխատրութեամբ, եւ ընթանայ, որ ոչ անազէ փոխատրութեամբ, եւ զբոլորն լնու զընդունողն: Ըստ ընթանայ, որ ոչ անազէ փոխատրութեամբ, եւ զբոլորն լնու ընդունող: Ըստ այսմ եւ Աստուածայինն Բանն ոչ շարժի յիւրմէ, եւ բնակեաց ի մեզ, եւ ոչ յեղումն կրեաց, եւ Բանն մարմին չարժի յիւրմէ, եւ բնակեաց ի մեզ: Եւ եղեւ: Եւ զիա՞րդ, ասեն, ի մարմնաւոր յեղումն կրեաց (էջ 145բ), «եւ կան տկարութենէ ոչ լցաւ Աստուած

¹ Գր. Նարեկացու մատենագրական վաստակի եւ «Երեք մեծ կապաղովկացիների» գործերի հայերեն թարգմանությունների առնչակցությանը անդրադառնալու ենք առանձին քննությունում, ուստի այստեղ սահմանափակվում ենք ասվածով:

² Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1969, № 6-7, էջ 290-91: Ասողիկի Պատմության վրա Բարսեղ Կեսարացու ճառերի թողած հետքերին վերաբերող մեր սույն քննությունը հրատարակվել է առանձին հոդվածով (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1989, № 1, էջ 137-40):

³ Բ. Կեսարացի—Ստ. Սյունեցի ընդհանրության առիթով աստուածությունն հիմքի վրա առաջադրված սրբագրությունը հավասարապես վերաբերում է նաև Ստ. Ասողիկի համապատասխան աստուածությունն ընթերցմանը:

Բանն մարմին եղեւ» (ՅՊՀՆՆ. Ա. 14)... եւ Բան. ասեմ՝ եթէ ոչ հուրն ի յատկուզիւ՞րդ, ասեն, ի մարմնական տկարութենէն ոչ լցաւ Աստուած Բանն: Ասեմք՝ թէ եւ ոչ հուր ի յատկութեանցն երկաթոյ առնու ինչ: Սեաւ է երկաթ եւ ցուրտ, բայց սակայն հրացեալ՝ ցանէ զհուր. մանզի եւ ոչ ստեղծագործանալով ոչ սեւացուցանէ զհուրն, եւ ցրտանալով ոչ ցրտացուցանէ զբոցն: Այսպէս եւ մարմինն հաղորդելով Աստուածութեանն՝ ոչ փոխատրեաց ի նա զիւր տկարութիւնն: Քանզի եւ ո՞չ ստեղծականիս այսմ հրոյ հանգիտաբար տացես ազդել Աստուածութեանն... (էջ 146ա):

Բան. ասեմ՝ եթէ ոչ հուրն ի յատկութենէ երկաթոյն առնու ինչ. խեաւ է երկաթ եւ ցուրտ. բայց սակայն հրացեալ՝ զհրոյ կերպարան զգենու. եւ ինքն պայծառանալով՝ ոչ սեւացուցանէ զհուր. մանզի եւ ոչ ստեղծագործանալով ոչ սեւացուցանէ զբոցն: Այսպէս եւ մարմինն հաղորդելով Աստուածութեանն (էջ 212):

Հարցմունք եւ պատասխանիք

Ուղղափառ. երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն:

Ապողիմար. երկու կատարեալք մի կատարեալ ոչ լինին:

Ուղղափառ. առ մարդկան արդեաւք անկարելի լեալ, բայց Աստուծոյ կարելի:

Ապողիմար. զիւ՞րդ կարելի:

Ուղղափառ. որպէս Կուսէն ծնանելն, որպէս ի վերայ ծովուն գնալն, որպէս դարձնալ փակելով մարմինն թանձրամասն մտանել, ի մարմնոյ եւ յոսկերաց հաստատեալ: Արդ, զոր աւրինակ այսք, կարելիք եւ այնք (369բ-370ա):

Եւ դարձեալ Ապողիմարէս՝ եթէ «երկու կատարեալ ի մի կատարեալ կենդանի լինել ոչ կարէ»:

Եւ դարձեալ սուրբն Բարսեղ՝ «Ի մարդկանէ անկարելի, իսկ առ ի յԱստուծոյ կարելի. որպէս ի Կուսէն ծնանելն, եւ ի վերայ ծովուն գնալն, որպէս դարձնալ փակելով մարմինն թանձրամասն, հաստատեալ ի մտոյ եւ յոսկերաց՝ մտանելն: Արդ զոր օրինակ այս կարելի է Աստուծոյ՝ նոյնպէս եւ այն. քանզի Աստուծոյ է եւ աստուածային է ամենայն բնութիւն եւ կիրք եւ ներգործութիւն եւ կամք (էջ 214-215):

Ստ. Սյունեցու առիթով նկատեցինք, որ Հարցումից կատարած նրա իսկ քաղումի «որպէս կուսին ծնեալն...» սկսվածքով հատվածը նույնանում է Ստ. Ասողիկի համապատասխան քաղվածքի հետ: Ասվածին պիտի ավելացնել, որ Բ. Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմանությունից կատարած Ստ. Սյունեցու և Ստ. Ասողիկի ոչ միայն ընտրած հատվածն է նույնը, այլև նմանություն կետերն էլ ճշգրիտ եղանակով կրկնվում են. երկու դեպքում էլ դուրս են թողնվել բյուզանդական մատենագրի ճառի ճիշտ նույն հատվածները: Առաջին հայացքից այն տպավորությունն է ստացվում, որ Ստ. Ասողիկը օգտվում է ոչ թե բուն սկզբնաղբյուրից, այլ Ստ. Սյունեցու համապատասխան նմանություն օրինակից: Բայց դա իրականում այդպես չէ:

Միանգամայն տեղին է նկատել, որ «Պահոց գրքից» կատարվող հայ մատենագիրների փոխառությունների կրկնվող օրինակները ծագում են ոչ թե միմյանցից, այլ ընդհանուր սկզբնաղբյուրից: Ասվածը հաստատող տարբեր բնույթի օրինակներ կարելի է վկայակոչել: Ահա դրանցից մեկը. Ստ. Սյունեցուց օգտվելու դեպքում երկու մատենագիրների օրինակներում էլ (Սյունեցի-Ասողիկ) վրիպում-անճշտությունների նույն ցանկը պիտի ունենայինք, մինչդեռ դրանք բոլորովին տարբեր են: Համադրենք մի ոչ մեծ հատված.

Բ. Կեսարացի Ի ծնունդ Փրկչին Ասեմք՝ թէ եւ ոչ հուր ի յատկութեանցն երկաթոյ առնու ինչ (էջ 146ա):	Ստ. Սիմեցի Հակաճառութիւն Ասեմք, եւ թէ եւ ոչ հուր յերկաթոյ առնու ինչ (էջ 305բ):	Ստ. Ասողիկ Պատմութիւն... Ասեմ՝ եթէ ոչ հուրն ի յատկութեանէ երկաթոյ առնու ինչ (էջ 212):
--	--	---

Համեմատության նպատակով առաջադրված օրինակից դժվար չէ նկատել, որ Սյունեցու և Ասողիկի հատվածները Բ. Կեսարացու ճառի հետ կապող իրենց ուրույն ճանապարհն ունեն, ուստի և Ստ. Սյունեցու «Հակաճառությունը...» չէ Ստ. Ասողիկի Պատմության սկզբնաղբյուրը: Ստ. Սյունեցու առիթով անդրադարձել ենք Բարսեղի սույն հատվածի բնագիր-թարգմանություն խնդրին: Այժմ մի քանի խոսք «Ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմանության օգնությամբ Ստ. Ասողիկի պատմության համար առաջադրվող մեր սրբագրությունների մասին: Նոր հայկազյան բառարանագիրները առած և առուած բառերի բացատրության առիթով երկու դեպքում էլ վկայակոչում են Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» ճառի համադրության նպատակով վերևում բերված հատվածի սկզբնամասը, որը պահպանվել է Ստ. Ասողիկի Պատմության համապատասխան դրվագում:

ա. «Աստուած ի մարմնում, ոչ առածոյ գործովք՝ որպէս ի ձեռն մարգարէիցն, այլ բուսակից ինքեան և գմիաորեալ կացուցանելով մարմին» (ՆՀԲ, Ա. 282):

բ. «Աստուած ի մարմնում ոչ առուածոյ (կամ առածոյ) գործովք, որպէս ի ձեռն մարգարէիցն, այլ՝ բուսակից ինքեան և միաորեալ անկալացուցանելով գմարդն» (ՆՀԲ, Ա. 312, երկու դեպքում էլ ընդգծումները մերն են):

Ստ. Ասողիկի Պատմության բնագրի հրատարակիչ Ստ. Մալխասյանցը և ռուսերեն թարգմանության իրացնող Մ. Էմինը տեղյակ են, որ Ասողիկի սկզբնաղբյուրը Բ. Կեսարացու հիշյալ ճառի հայերեն թարգմանությունն է (բնագիրը այդ հնարավորությունը տալիս է) և որ, ըստ Մ. Էմինի, այն անհասկանալի է: «Աստուած ի մարմնում...» սկզբածքով հատվածի կապակցությունը Մ. Էմինը գրել է. «За этими словами следует место совершенно непонят-

ное, которое мы опустили»¹: Հենց սկզբից նկատենք, որ մեր ձեռքի տակ եղած Պահոցի գրչագրերը պահպանել են բառարանագիրների վկայած երկրորդ օրինակը: Մյուս՝ առաջին վկայությունը մեզ անձանոթ գրչական տարբերակ է: Առկա օրինակներում երկու քննարկելիք կա. ա) առուած-առուած ընթերցումների հարցը, բ) միատրեալ Աերկայացուցանելով գմարդն և գմիատրեալն կացուցանելով մարմինն կապակցությունների փոխհարաբերություն խնդիրը: Առուած-առուած բառերին անդրադառնալիս պիտի նկատել, որ «ոչ առուածոյ» արտահայտությունը դիմաց հունարենում ունենք «οὐκ ἐκ διαλειμμάτων»² ուր διαλειμματα-ն ունի ընդհատություն, միջոց, տարածություն, ընդմիջում³ նշանակությունները: Վերոբերյալ հատվածի համար շատ ավելի ընտանի են առուած բառի նշված իմաստները, քան առուած տարբերակի նշանակություններից որևէ մեկը, թեև հիշյալ երկրորդ օրինակում բառարանագիրները տվյալ կիրառության համար այդ ընթերցումները մի պահ նույնացվում են: Ասվածից հետևում է, թե Ասողիկի Պատմության «ոչ առածոյ»-ը նույնպես պիտի վերբերվի «ոչ առուածոյ»⁴: Ինչ վերաբերում է հիշյալ կապակցությունների տարբերությանը, ապա, ասվեց, ձեռագրական այլ տարբերակ չի պահպանվել և կրկին պիտի առաջնորդվել բյուզանդական մատենագրի ճառի բնագրի և թարգմանության փոխհարաբերությամբ: Խնդրո առարկա «միաւորեալ ներկայացուցանելով գմարդն» կապակցության դիմաց հունարեն նախօրինակում ունենք «συμφυῆ ἕαυτω τὴν ἀνθρωπότητα»⁵, ուր խօսքը մարդկային էությունը Աերկայացուցանելու մասին է և ոչ թե մարմինը կացուցանելու: Այս իրողությունն էլ հիմք է տալիս մտածելու, որ «գմիաւորեալն կացուցանելով մարմին» տարբերակը վկայակոչելիս բառարանագիրները հավանաբար ընտրություն-համեմատության հնարավորություն չեն ունեցել: Ուստի և Բ. Կեսարացու ճառի հայերեն թարգմանությունում և նրա ազդեցությամբ Ստ. Ասողիկի Պատմության համապատասխան հատվածում «միաւորեալ ներկայացուցանելով գմարդն» կապակցությունը բնագրային հիմնավորում ունի և պատահական չէ, որ այն ավելորդ չի նկատվել ապա. Ստ. Մալխասյանցի կողմից: Ասվածից հետևում է, թե նշված արտահայտությունը պիտի վերականգնվի նաև Ստ. Ասողիկի Պատմության ռուսերեն թարգմանությունում:

¹ Всеобщая История Степаноса Таронского Асохика, переведена с армянского и объяснена Н. Эминим, Москва, 1864, էջ 150, ծան. 24, հմմտ. «Զհատուածը գայդ սկսեալ ի բառիցս «Աստուած ի մարմնում»՝ ամենեւին արտաքս ընկենու ի թարգմանութենէն Մ. էմին, քանզի ասէ թէ ոչ կարաց ամենեւին վերահասու գոլ իմաստի նորին» (տե՛ս Ստ. Ասողիկ, Պատմութիւն... էջ 383, ծան. 118):

² PG, t. 31, էջ 1460:

³ Տե՛ս ДГ-РС, I, 375:

⁴ Ճիշտ նույն հիմքի վրա Ստ. Ասողիկի Պատմության ի մնա-ն պիտի ընթերցել ի Աս ոչ Աուագ է կապակցությունը՝ ոչ Աուագ է (οὐτε ἔλαττοντα, PG, t. 31, էջ 1460) և այլն:

⁵ PG, t. 31, էջ 1460:

ԺԲ-ԺԳ. դդ. մատենագիր Վարդան Այգեկցին նույնպս ծանոթ է «Պահոց գրքի» հայերեն թարգմանությունը, մասնավորապես Հարցմունք և պատասխանիք երկից բավական ընդարձակ քաղվածքներ է կատարում իր «Համառատ հաւաքումն սրբոց վարդապետաց» կամ ինչպես ընդունված է կոչել, «Արմատ հաւատոյ»¹ երկը շարագրելիս²: Այգեկցին Բարսեղ Կեսարացու Հարցմունքը հիշատակում է «Ընդդէմ Ապողինարի» պայմանական խորագրի տակ և, ի տարբերություն այս գործից օգտվող մեր մյուս մատենագիրների, վկայակոչում է նաև Ապողինարի մի դիտարկումը, մնացած ամբողջ ընդհանրությունը կառուցված է Բարսեղ Կեսարացու հիմնական բացատրությունների վրա: Կան բառացի քաղումներ, երբեմն էլ, նկատելի է՝ հոգեհարազատությունը, արտահայտությունների կրկնության եղանակով վերապատմում է սկզբնաղբյուրի այս կամ այն բացատրությունը: Առանձին դեպքերում էլ վերաշարագրում է առկա միտքը՝ որոշակի եղանակով լրացնելով այն, քննվող խնդրի շուրջ տալով իր դիտարկումը: Ահա այսպիսի տեսք ունեն Հարցումի և «Արմատ հաւատոյ» ժողովածուի մեր ունեցած ընդհանրության օրինակները:

Հարցմունք եւ պատասխանիք

Մեծափառ վարդապետին Վարդանայ արարեալ համնօտ հաւաքումն սրբոց վարդապետաց³: Ձեռ. 3295 («Ժողովածու», ԺԼ. դ., էջ 339ա-383բ):

Բարսղի ընդդէմ երկաբնակացն վկայութիւնք Ի. եւ Գ. Սաղմոսին մեկնութենէն: Կարողակից արար զմարմինն Աստուածութեանն եւ ի մի զօրութիւն

Ուղղափառ. ... եւ դարձեալ ասեմ՝ զոր զօրացոյց:

աւրինակ մարմինն բնութեամբ մարդկային եւ միաւորութեամբ տնայրեանութեանն աստուածային... (էջ 369բ):

Նորին մարմինն բնութեամբ մարդկային, իսկ միաւորութեամբն աստուածային եղև: Նորին՝ բանն որ ասէ, թէ ողջոյն մի տայք ի ճանապարհի կարծեմ, թէ վասն հերձուածողացն ասէ, որք երկու բնութիւն ասեն զՔրիստոս եւ ջրով եւ այլ խառնուածքով ապականեն զսուրբ խորհուրդն (էջ 349ա):

Ուղղափառ. զոր աւրինակ սպիտակութիւն ասուի ներկեալ գունով ծիրասն երկեալ ծիրանի անհետ լինի նեաւ ոչ երկգոյն է, այլ մի: Նոյնպէս սպիտակութիւնն, զի մի երկգոյն տե-

Նորին ընդդէմ Ապողինարի՝ որպէս ասը ներկեալ ծիրանի անհետ լինի նեաւ ոչ երկգոյն է, այլ մի:

¹ Վ. Այգեկցու եւ նրա հիշյալ աշխատանքի մասին տե՛ս Հ. Ս. Անապլան, Վարդան Այգեկցին որպէս համերաշխության գաղափարախոս («Էջմիածին», 1969, է-Ը, էջ 52-55, նույնի՝ «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լոյսի տակ», Վենետիկ, 1969):

² Այգեկցու երկի կազմության, ժամանակի, բնույթի ու անհրաժեշտության խնդիրներին անդրադարձել ենք «Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ» աշխատությունում (Երևան, 1983, էջ 157-158):

³ Յաղագս դաւանութեան ամենասուրբ Երրորդութեանն ընդդէմ հերձուածողաց հակաճառությունը:

եւ միտքն՝ պայծառացեալք եւ աստղացն երևես(ց)ի, այլ միագոյն ծիտուածացեալք՝ մի է, եւ ոչ եւ երկուս ըանի, սոյնպէս եւ մարդկային միտք առաջնորդականք: Քանզի ոչ այլ ինչ եւ մարմին խառնեալ եւ ներկեալ ասկամին միտքն եւ այլ ինչ կամին տուածային բնութեամբն չէ հնար միտքն եւ այլ ինչ բանն, այլ որպէս զնա երկատեսակ իմանալ կամ երկուս երաժշտական գործին ոչ երկու երաժշտականք, սոյնպէս Աստուածն թեր միմեանց եւ ի բաց բարձեալ ի Բանն եւ միտք մարդկայինք ոչ երկու նմանէ ամենայն մարդկային անձն իշխանականք: Քանզի փոխանակ իշխան կամք:

գործոյ մարդկային մտաւք վարէր Բանն (էջ 371):

Ապողիճար. երկու կատարեալք մի կատարեալ ոչ լինին:

Ուղղափառ. առ մարդկան արդեաւք անկարելի լեալ, բայց Աստուծոյ կարելի:

Ապողիճար. ապա զիա՞րդ կարելի:

Ուղղափառ. որպէս Կուսիճ ծնանելն, որպէս ի վերայ ծովուն գնալն, որպէս դրաքն փակելովք մարմինն թանձրամասն մտանել, ի մարմնոյ եւ լուսկերաց հաստատեալ:

Արդ, զոր աւրինակ այսք, կարելիք եւ այնք (էջ 369բ-370ա):

Ուղղափառ. թէ անկարելի էր նմա մարդ լինել, լինելով ի մարդ եւ անկարելի էր նմա մարմին լինել, լինելով ի մարմնի: Իսկ եթէ ի մարմնի լեալ՝ մարդ ասի լեալ՝ ոչ փոփոխելով ի մարդ (էջ 373ա):

Ապողիճար ասէ. Անկարելի է երկուցն մի գոյ կատարելութեամբ:

Բարսեղ ասէ. թէ ի մարդկանէ անկարելի է յոյժ [բայց Աստուծոյ կարելի], որպէս Կուսիճ ծնեալն, ի վերայ ծովուն գնալն եւ դրոքն փակելովք մարմինն թանձրամասն ի մտալ ի լուսկերաց հաստատեալ:

Նորին՝ բանն մարմին եղեալ եւ մարմնացաւ, նոյնպէս մարմինն աստուածացեալ եւ ոչ փոփոխեալ յանմարմնութիւն (էջ 349բ):

Ի հակառակելն Ապողինարի ասէ Բարսեղ. ես զծնունդն, զսնունդն, զկերակրելն, զչարչարանս Աստուծոյ ասեմ, եւ Աստուած հեռի է յապականութեանց:

Նորին յետ սակաւուց. ոչ փոփոխելի էր Քրիստոս, մի լիցի զի մի մեղանչումն ի ներքս մտցէ անմեղանչելին, իսկ թէ ապականութիւն կամ փոփոխումն էր նմայ, ապա հարկ է նախ մեղացն լինել, որ մայր է սոցա, չար է քան զսատանայ եւ զհրէայսն, որ այսպէս խորհի:

Նորին՝ զոր օրինակ մարմինն Քրիստոսի ոչ ետես զապականութիւն, նոյնպէս եւ ոչ միտք նորա իմացան զմեղս (էջ 357բ):

Համադրվող հատվածների սկզբնամասում «մարմինն... աստուածային» նմանության օրինակում, ինչպես ցույց ենք տվել Սահակ Պարթևի «Ընդդէմ երկաբնակաց» թղթի առնչակցությունը քննելիս, Հարցումի բնագրի ու թարգմանության հենքի վրա Վ. Այգեկցու հատվածում ևս պիտի կարդալ «միաւորութեամբն տնայրէնութեանն աստուածային», որով միտքը զառնում է ամբողջական ու ավարտուն:

Հաջորդ միջամտելի կետը վերաբերում է Վ. Այգեկցու «Թէ ի մարդկանէ անկարելի է յոյժ» կապակցութեանը, որ վկայակոչվում է իբրև Բարսեղ Կեսարացու միտք: Սակայն համեմատութիւնը ցույց է տալիս, որ այն թերի է, առկա տեսքով՝ անհասկանալի: Շարունակութիւնից դուրս է մնացել «բայց Աստուծոյ կարելի» լրացումը, որը թարգմանութիւնն է հունարեն «παρὰ» Θεῷ δυνάτουν»¹ կապակցութեան: Ուստի Բարսեղի բնագրի և թարգմանութեան հենքի վրա Վ. Այգեկցու վերոբերյալ միտքը պիտի կարգալ լրացված տեսքով. «Թէ ի մարդկանէ անկարելի է յոյժ, բայց Աստուծոյ կարելի»:

Համեմատովոյ հատվածների շարունակութիւնն ավելի շուտ մտքի, նույն խնդրի շուրջ ասելիքի ընդհանրութեան օրինակ է, ուր Վարդան Այգեկցին անհրաժեշտ է նկատում հիշատակել թե՛ Բարսեղ Կեսարացուն և թե՛ նրա հիշյալ աշխատանքը:

Վանական վարդապետ Տավուչեցին կամ, ինչպես ընդունված է կոչել, Վանական վարդապետը (1181-1251) իր «Պատճառք վասն առաջաւորաց պահոցն...»² աշխատութիւնը շարադրելիս ձեռքի տակ ունեցել է հայ ինքնուրույն և թարգմանական մատենագրութեան այլևայլ գործեր, այդ թվում է Բ. Կեսարացու Պահոցի «Յաղագս պահոց» ճառի հայերեն թարգմանութիւնը: Առկա սկզբնաղբյուրներին անդրադառնալիս Վանական վարդապետը մշտապես հիշատակում է համապատասխան աշխատանքի խորագիրն ու հեղինակը: Նրա ընտրած բոլոր կարգի քաղուամները, կարելի է ասել, առանձին արտահայտութիւններ են, երբեմն էլ վերապատմելու ճանապարհով առաջացած նմանութեան օրինակներ: Ընդհանուր առմամբ՝ Վանականը այս կամ այն մատենագրական հուշարձանին ու հեղինակութեանը դիմում է իր ասելիքը ավելի ստույգ ու վերջնական տեսքով ներկայացնելու միտումով միայն:

Բ. Կեսարացու «Յաղագս պահոց» ճառի հետ Վանական վարդապետի հիշյալ աշխատանքի առնչակցութեան մեր ունեցած օրինակում կա և՛ բառացի նման արտահայտութիւն, և՛ վերապատմելու օրինակ: Հիշատակվում է և՛ գործը, և՛ հեղինակը: Ահա այսպիսի տեսք ունեն նշված մատենագիրների ընդհանուր տեղիները:

Երանելոյն արքայն Բարսղի եպիսկոպոսի
Կեսարոյ Կապադովկացոյ՝ Յաղագս պահոց

Պատճառք վասն առաջաւորաց պահոցն, ասացեալ Վանական վարդապետի, վասն հակառակացն և այսպանողացն զՍուրբ Պահսն

Ամաչեա՛ ի ձերութենէ պահոցն: Հա- Երանելի Բարսեղ ասէ, թէ Պահքն անի ի սակակից է մարդկութեանս: Պահք ի դրախտին օրինադրեցաւ և հասակակից է դրախտին արինադրեցան: Զառաքիճն պահախաճօրն Աղամայ: Պահոց պատուի-

¹ PG, t. 26, էջ 1253:

² Հրատարակութիւնը տե՛ս Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Հովհաննես վանական Տավուչեցու անտիպ երկերից («Էջմիածին», 1959, Զ, էջ 35-41):

տուիրան էտ Ադամ: Ի փայտէն ճանա-
րանք եղ չուտել ի ծառոյն գիտութեան,
չելոյ զբարի եւ զչար ոչ ուտել: Պահոց զոր ոչ պահեաց, գողացեալ հեշտու-
է ժուժկալութեան արէնադրութիւնս: Թեամբ եւ մերկացեալ անկաւ ի հաւա-
նեթէ պահեալ էր ի փայտէն Եւայի, ոչ սարութիւն անասնոց եւ ի համարս
արդեաւք այնոցիկ այժմ կարաւտա-
մեռելոց (էջ 41):
նայք պահոց (էջ 2բ):

Եւ ամենայն անդրանիկքն պահէին Ե.
որ ի վախճանել հարցն, ի Սեթայ
սկսեալ եւ հայր որդւոյ աւանդելով,
որպէս ասէ Բարսեղ, թէ եկեալ եհաս
մինչ ի Մովսէս: Եւ նա կարգեաց ի
պահս վասն իւ-օրեայ առեալ տախտա-
կին (էջ 42):

Հովհաննես Երզնկացին լավածանութ է «Երեք մեծ կապաղովկացիները»
գործերի հայերեն թարգմանություններին և օգտվում է դրանցից¹: Ինչ վերա-
բերում է «Պահոց գրքի» հայերեն թարգմանության հետ ունեցած ծանոթու-
թյանը, ապա պիտի նկատել, որ Հ. Երզնկացին իր «Ի բան մարգարէին Դաւ-
թի» գործի առիթով իբրև սկզբնաղբյուր հիշատակում է հիմնականում երկու
աշխատանք՝ Հարցմունք և պատասխանիք, «Ի ծնունդն Փրկչին»: Համեմատե-
լի եզրերը առանձնապես շատ չեն, իսկ ուղղակի նմանությունները
ընդամենը առանձին արտահայտություններ են, երբեմն էլ միջանկյալ
ընդհանրությամբ նախադասություններ: Նկատելի է վերապատմելու, սկզբնաղբ-
յուրի այս կամ այն միտքը ցանկալի լրացում-հավելումով ներկայացնելու մի-
տում: Յուրաքանչյուր քաղվածք-վկայակոչություն ուղեկցվում է «սուրբն
Բարսեղ ասէ» հիշատակագրությամբ: Ե՛վ Հարցումի, և՛ «Ի ծնունդ
Փրկչին» ճառի նմանության օրինակները հանդիպում են նախորդ մատենագիրների
(Ստ. Սյունեցի, Ստ. Ասողիկ) ընդհանրական հատվածներում: Սակայն համե-
մատությունը ցույց է տալիս, որ երկու դեպքում էլ Հ. Երզնկացու անմիջա-
կան սկզբնաղբյուրը «Պահոց գրքի» հայերեն թարգմանությունն է: Ահա այս-
պիսի տեսք ունեն Բ. Կեսարացի – Հ. Երզնկացի առնչակցություն մեր ձեռքի
տակ եղած օրինակները:

¹ Գ. Նազիրանցացի – Հ. Երզնկացի ընդհանրության մասին տե՛ս «Գրիգոր Նազիրանցացին հայ
մատենագրության մեջ» աշխատանքում (Երևան, 1983, էջ 161-165):

Հարցմունք եւ պատասխանիք

Յոհանէս վարդապետի Երզնկայեցոյ՝ ի բան մարգարէից Դատթի Ձեռ. 2173 («Ժողովածու», ԺԴ. դ., էջ 101ա-131բ)

Եւ սուրբն Բարսեղ ասէ՛ մարմնոյն, որ ի բնութեանն յարմարագոյն էր պատահումն թուլացոյց (էջ 120ա): Որպէս սուրբն Բարսեղ ասէ՛ եկեր Տէրն եւ արբ ոչ այնոցիկ կարօտեալ, այլ զի քեզ չափս եւ սահմանս հարկաւորացն անձին ախտից թողցէ: Սոյնպէս եւ արտասուեաց, զի զսգացելոցն զսաստկացեալ ախտան նուաստացուցեալ ուղղեսցէ եւ զի ոչ ախտաւոր արտօսին Տեառն, այլ վարդապետութիւն, զի եւ ոչ սգայր, զոր եւ յարուցանելոց էր անդէն (էջ 121ա):

Ուղղափառ... եւ որպէս հարկաւոր է բնութեամբ զմարդկայից մարմինս, յԱղամայ ի մարմնոյն, եւ յարենէն ունել զբնութիւնն, նոյնպէս հարկաւոր է զմարդկային անձն գոլ: Եւ դարձեալ ասեմ՝ զոր աւրինակ մարմինն բնութեամբ մարդկայից եւ միաւորութեամբն տնայրեանութեանն աստուածային, սոյնպէս եւ միտքն՝ բնութեամբ մարդկային, իսկ տնայրէնութեանն միաւորութեամբն աստուածային միտք (էջ 369բ):

Զի բնութեամբ Բանն զանտեսանելին ունի եւ զանշօշափելին, որպէս եւ սուրբն Բարսեղ ասէ՛ բնութեամբ է մարմինն Քրիստոսի մարդկային, իսկ միաւորութեամբ տնայրեանն՝ աստուածային: Ըստ սմին օրինակի իմասցի, զի բնութեամբ է փրկչական մարմինն չարչարելի եւ մահկանացու, իսկ միաւորութեամբ տնայրեանն՝ անչարչարելի եւ անմահ: Եւ ըստ այսմ յեղանակի ասի Անմահին՝ մահ եւ մահկանացու մարմնոյն՝ անմահութիւն (էջ 126ա):

Ի Ծնունդն Փրկչին

Եւ զի՞նչ աւրինակ ի մարմնում Աստուածութիւնն՝ որպէս հուր երկայթում, ոչ փոխարկաբար, այլ փոխատրաբար: Քանզի ոչ եթէ արտաքոյ ինչ յիւրմէն ընթանայ, հուր առ երկաթ, այլ մնալով յըստ բնութեանն տեղւոջ՝ փոխատրէ ի հրոյն փոխադրի որակութիւնս եւ ոչ ի նա յիւրմէ զաւրութենէն, որ ոչ զիւրսն, այլ զնորայն ներգործէ զոնուագէ փոխատրութեամբն, եւ զբոլորութիւնսն: Իսկ բնութիւն հրոյն ոչ լորն լնու ընդունող: Ըստ այսմ եւ շփոթի կամ ի բաց դնէ զծայրս որաստուածայինն Բան ոչ շարժի յիւր-

Որպէս սուրբն Բարսեղ եւ Դիոնեսիոս ցուցանեն մեզ՝ զի որպէս երկայթ ընդ հրոյ միաբանեալ ընդունի զհուրն ոչ փոխարկաբար, այլ փոխատրաբար՝ զիւրն բնական որակութիւնսն ի բաց դնելով յըստ բնութեանն տեղւոջ՝ փոխատրէ ի հրոյն փոխադրի որակութիւնս եւ ոչ ի նա յիւրմէ զաւրութենէն, որ ոչ զիւրսն, այլ զնորայն ներգործէ զոնուագէ փոխատրութեամբն, եւ զբոլորութիւնսն: Իսկ բնութիւն հրոյն ոչ լորն լնու ընդունող: Ըստ այսմ եւ շփոթի կամ ի բաց դնէ զծայրս որաստուածայինն Բան ոչ շարժի յիւր-

մէ, եւ բնակեաց ի մեզ (էջ 145բ):

փոխութիւն ի միաւորելն ընդ երկաթոյն՝ զնորայն փոխազրէ՝ յիւրն որակութիւն ոչ ինչ կրելով ի նոր այնցն որակութեանց, այլ պարզեալ ձգէ ի ծայրս որակութեան իւրոյն բնութեանն (էջ 130ա):

Այսպիսով, եթե ընդհանրացնենք «Պահոց գրքի» հայերեն թարգմանութեան հետքերի առաջարկվող քննութիւնը, ապա առաջին հերթին պիտի նկատել, որ սույն առաջաբանի նպատակից դուրս է եղել Պահոցի հետքերի լիակատար մատենագիտութիւն կազմելը¹, մանավանդ որ հրատարակվող նյութերը որոշակի պատկերացում են տալիս այդ գրական հուշարձանի միջնադարյան թարգմանութեան դերի ու նշանակութեան, ազդեցութեան բնույթի ու ոլորտի մասին: Ուստի կատարված ուսումնասիրութեան շրջանակներում կարելի է անել որոշ եզրակացութիւններ:

1. «Պահոց գրքի» հետքեր կան Ե-ԺԳ. դդ. հայոց ինքնուրույն գրականութեան մի շարք անվանի հեղինակների, մասնավորապես Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Հովհան Մանգակունու, Հովհան Օձնեցու, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Նարեկացու, Ստեփանոս Ասողիկի, Վարդան Այգեկցու, Վանական Տավուշեցու, Հովհաննես Երզնկացու և այլոց դավանական խնդիրներ արծարծող թղթերում ու ճառերում: Նույնօրինակ ընդհանրութիւնների դասդասումից հետո կարելի է ասել, որ գոնե Ե-Ժ. դդ. ժամանակահատվածում դավանական խնդիրներ արծարծելիս հայ մատենագիրները միմյանցից բոլորովին անկախ ընտրել են «Հարցմունք և պատասխանիք» գործի ճիշտ նույն հատվածները:

¹ Վկայակոչված համադրութիւններով չեն ավարտվում «Պահոց գրքի» հետքերը հայոց միջնադարյան գրականութեան վրա: Համաբնույթ օրինակներ կան նաև Թեոդորոս Քոթեմալորի (Է. դ.) «Ընդգէմ Մայրագոմեցոյն» ճառում (տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1953, էջ 180), Ստեփանոս Սյունեցու «Առ Գերմանոս...» թղթում (տե՛ս «Գիրք թղթոց», էջ 380), Խոսրովիկ Թարգմանչի գործերում (տե՛ս Գարեգին վ. Յովսեփեան, Խոսրովիկ Թարգմանչի (Ը. դ.), պատմա-մատենագրական ուսումնասիրութիւն», Վարդապատ, 1899, էջ 121, 125, 158, 170), հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1969, № 7-9, էջ 289, Խաչիկ կաթողիկոսի (973-993) «Բան խոստովանութեան» ճառում (տե՛ս «Գիրք թղթոց», էջ 315), Ստ. Ասողիկի Պատմութեան էջերում (տե՛ս Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 218), Անանիա Սանահնեցու (ԺԱ. դ.) Հակաճառութեան մեջ (տե՛ս «Անանիայի հայոց վարդապետի [Յաղագս] լուծման եւ մաքառման երկաթնակացն», ձեռ. № 2174, էջ 185ա-196ա), Ստ. Օրբելյանի Պատմութեան էջերում (տե՛ս «Պատմութիւն նահանգին Սրսական», Թիֆլիս, 1910, էջ 125-126), Գեորգ փիլիսոփայի մի թղթում (տե՛ս «Գիրք թղթոց», էջ 354-355), «Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն» անանուն բնագրում (տե՛ս ձեռ. № 571, էջ 163բ, 181բ, 182աբ), Մաշտոցի անվան Մատենադարանի № 500 գրչագրում («Ժողովածու», 1293-1305 թթ., էջ 285բ, 286ա, 320ա), նույն Մատենադարանի № 563 ձեռագրում («Ժողովածու», 1691 թ., էջ 326) եւ այլուր:

2. Բացահայտված ընդհանրությունների օրինակների հիման վրա կարելի է ասել, որ հայ մատենագիրների քաղումները գերազանցապես կատարվել են դավանական հարցադրումներ-լուծումներ պարունակող «Հարցմունք և պատասխանիք», «գՎաշխողաց», «Յաղագս գոհութեան», «Ի ծնունդ Փրկչին», «Ի սուրբ նահատակն Քրիստոսի Ստեփանոս», «Յաղագս սուրբ Երրորդութեան», «Յաղագս պահոց» ճառերից: Գրեթե միշտ, չնչին բացառությամբ, հիշատակվում են սկզբնաղբյուրի խորագիրն ու հեղինակը:

3. Բարսեղ Կեսարացին հիշատակվում է ամենահակիրճ եղանակով՝ երանելի Արսեսի ասէ, Բասիլիոս վկայէ, ասէ Բասիլ, Սուրբն Բարսեղ ասէ և նման ձևակերպումներով: Խորենացու թղթում պահպանված «զայդ հարկաւորութիւն իմաստուն և առաւել բարգաւաճեալն հովիւ ուսոյց Բասիլիոս...» սկզբածքով բնորոշումը պահպանված միակ ընդարձակ գնահատական ձևակերպումն է:

4. Քաղումները հիմնականում, հատկապես բառացի նմանությունները տեսքով վկայակոչված օրինակները, սոսկ մեքենական վերաբնակեցումներ չեն, այլ սերտորեն միահյուսված են ընկալող մատենագրության շարադրանքի հետ:

5. Ամենահաճախադեպ հիշատակվող գործը «Հարցմունք և պատասխանիք» երկասիրությունն է (օգտվել են Ս. Պարթևը, Մ. Խորենացին, Հ. Օձնեցին, Ստ. Սյունեցին, Ստ. Ասողիկը, Վ. Այգեկցին, Հ. Երզնկացին), մանավանդ դավանական հարցերի շուրջ վերջինիս բանաձևային բացատրությունները բառացի քաղումների օրինակներ են:

6. «Պահոց գրքի» հետքերը առաջին հերթին ընկալելի են իբրև հայ մատենագիրների աշխարհայացքի բնորոշ դրսևորումներ: Ընկալող մատենագրական հուշարձաններից դժվար չէ նկատել, որ քաղումները պայմանավորված են առաջին հերթին տեղական հոգևոր-եկեղեցական խնդիրներին համապատասխան պատասխան-լուծում առաջադրելու անհրաժեշտությամբ:

7. Ինչպես պարզվեց բուն քննության ընթացքում, «Հարցմունք և պատասխանիք» (Մ. Խորենացի-Հ. Օձնեցի-Ստ. Սյունեցի-Ստ. Ասողիկ), ինչպես նաև «Ի ծնունդ Փրկչին» (Ստ. Սյունեցի-Ստ. Ասողիկ-Երզնկացի) երկերից հայ մատենագիրների քաղած նույնական հատվածների բնագրագիտական-աղբյուրագիտական նշանակությունը տարբեր է:

8. Առաջին անգամ համեմատության եղանակով շրջանառության մեջ դրվող հատվածների զուտ աղբյուրագիտական նշանակությունը հիրավի կարևոր է, մանավանդ որ խնդրո առարկա հայ մատենագիրների գործերի զգալի մասը կամ անտիպ է, կամ էլ մեկ-երկու ձեռագրի վրա կատարված հրատարակություն: Առաջարկվող համադրությունները հաճախ բնագրերի պահպանված վիճակը փոխադարձ հսկելու, երբեմն էլ սրբագրելու հնարավորություն են տալիս:

«ՊԱՀՈՑ ԳՐՔԻ» ԶԵՌԱԳՐԵՐԸ

1. Զեռագիր № 822 = A («Պահոց գիրք» 1285 թ.), գրիչ՝ Եղեկիել Սարկավազ, ստացող՝ Հովհաննես վարդապետ, թերթ՝ 270, թուղթ՝ 16, 7x12, միասյուն, բոլորգիր, տող՝ 23-25: Բովանդակում է 33 բնագիր: Գրչագրի առանձնահատկություններից արձանագրելի են հետևյալները. ա և ո ձայնավորներից հետո լ կիսաձայնը պահպանելու հարցում գրիչը հետևողական է: Միաժամանակ կողք-կողքի հանդիպում են լեալ և լիեալ ձևերը: Զայնավորից առաջ լ-ը մերթ պահվում է նույնությամբ, հաճախ էլ փոխանցվում է ու-ի (օրինակ՝ գին-ւոր>գինուորեցիր, պատւասէր>պատուասէր և այլն): Այս երկբարբառը պահպանելու ձգտումն այնքան նկատելի է, որ այն երբեմն տարածվում է նաև ու-ի վրա: Արև, լուսին, աշխարհ հասկացությունների համար գրիչը հազվադեպ է օգտագործում պատկերանշաններ: «Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի եւ Ապողինարի հերձուածողի՝ Տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին» (ԺԹ. բնագիր) Հարցումի մեջ գրիչը մի քանի անգամ Բարսղի փոխարեն Բասիլ կամ Բասիղ է օգտագործում: Գրչագրի սկզբնամասերում, թանաքի թափվածութեան պատճառով կան բազմաթիվ անընթեռնելի բառեր և արտահայտություններ:

№ 822 գրչագիրն ընդօրինակվելուց հետո հավանաբար համեմատվել է այլ ձեռագրերի հետ և նույն ձեռքով ու գրչությամբ լուսանցքներում ու բուն տեքստում որոշ ուղղումներ են կատարվել: Առանձին դեպքերում այդ բառական լրացում-ճշգրտումները ուղղակի քերվել հանվել են: Գրչագրում կան մի շարք հիշատակարան-հիշատակագրություններ.

ա) «Քրիստոս Աստուած, ողորմեա՛ աշխարհի եւ աշխատեցելոց ի բարի. ամէն» (էջ 155բ):

բ) «Դաւիթ թարգման Տարաւնացի զճառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ՝ ի Դամասկացոց քաղաքին՝ հրամանաւ Համագասպա կորսպաղատի Մամիկոնէնից տեառն. եւ եղիցի արհնութիւն Տեառնն ի վերայ անցին»¹ (էջ 156ա):

գ) «Եւ այսմ արիանակ Կոռնելի Է հարիւրապետն» (էջ 270ա):

դ) «Կատարեցաւ պայման գրոցս այսոցիկ ասացածք սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կապողկացոց՝ ի ձեռն Ստեփանոսի քահանայի և լետին կրաւնաւորի» (էջ 270բ):

ե) «Կատարեցաւ վարդապետական խրատս սրբոյն Բարսղի յամի, յորում կա թւականն 21 Դ. (1285 - Կ. Մ.), էր ամսեանն Արաց Իէ.: Ես բազմամեղս Եղեկիէլ գրեցի զսա, բայց ոչ զբաւանդակս, այլ զկէսն, քանզի այլն գրած էր, և զպակասն մեք կատարեցաք հրամանաւ բազմերջանիկ և սրբազան Յոհաննի-

¹ Սույն հիշատակարանին անդրադարձած Հայագետների ցանկը տե՛ս Կ. Մ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցաւրեան» հայ մատենագրութեան մեջ, Երևան, 1976, էջ 174: Հիշատակարանիս վերջին հրատարակությունը պատկանում է անվանի Հայագետ Հ. Պողոս Անանյանին (տե՛ս նրա «Դաւիթ Տարօնացի թարգման Ս. Բարսեղ Հայրապետի «Ի ծնունդ Փրկչին» ճառին», Վենետիկ, 1982, էջ 50, Հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ժԲ., աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 16:

սի վարդապետաց վարժապետի՝ ի վաելուամն անձին իւրոյ մաքրափայլի և յետ ելից իւրոյ յիշատակ հոգոյ իւրոյ անջնջելի ի պէտս մանկանցն որ Սիոնի:

Ես յերես անկեալ ամէնի՝
 Զբժշկութիւն խնդրեմ վիրի,
 Զի յոյժ խոցեալ նետիւք չարի
 Եւ հեծեծեմ յամէն ժամի՝
 Յորժամ ճաշիք յայսմ սեղանի
 Եւ տայք ալլոց, ում արժանի:
 Դուք յիշեսջիք զիս ի բարի
 Եւ ասասջիք՝ Տէր ողորմի
 Եղեկիէլ [Սարկաւ]ազի,
 Եւ ձեզ նոյնն հատուցի»¹ (էջ 270բ):

2. Ձեռագիր № 251 = A_1 («Հաւաքումն ճառից Ս. Բարսղի», Մխիթարյան միաբանության Վենետիկի մատենադարանի ԺԱ-ԺԲ. դ.), Հաղբատ, գրիչ՝ Սարգիս, թերթ՝ 262, թուղթ՝ 37,5x28, երկայուն, միջին երկաթագիր, տող՝ 25: Պարունակում է 33 ճառ և թուղթ: Ինչպես նկատել է Հայագետ Բ. Սարգիսյանը, գրչագիրս զժվարընթեռնելի է, «բայց անվրէպ ուղղագրութեամբ»², կան թափված թերթեր: Հայագետը ենթադրում է, որ «Գրիչն ընդօրինակելէն ետքը կ'երևի թէ բաղդատեր է նախագաղափարին հետ»³: Գրչագրիս հիմնական հիշատակարանին անդրադառնալիս Բ. Սարգիսյանը գրում է. «որովհետև Բարսեղ եպիսկոպոս Անոյ յիշատակում է, ուրեմն ձեռագիրս ևս այդ ժամանակամիջոցին, այն է՝ 1169-1180 գրուած ըլլալու է»⁴: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Պահոց գրքի» հնագույն ձեռագրերից (ձեռ. №№ 822, 5595, 1500) հարյուր տարով հին այս ձեռագիրը ևս պատկանում է Պահոցի մեր ձեռքի տակ եղած ամբողջական ձեռագրերի խմբին և, վստահ կարե-

¹ Սույն հատվածը եւս արձակ է շարադրված, նպատակահարմար գտանք այն հրատարակել չափածոյի տեսքով:

² «Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ» հ. Բ., Յօրինեց Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 1258:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում: Վենետիկի երկաթագրի եւ առհասարակ Բարսեղի գործերի հայերէն թարգմանությունների գրչագրերի հանգամանալից նկարագրություն ունի Ի. Գրիեսենը. տե՛ս **Driessen I. W.** Les recueils manuscrits arméniens de Saint Basile. "Le Muséon", Louvain, 1953, t. LXVI, 1-2, p. 65-95. Հմմտ. հայերէն թարգմանությունը՝ Իննովկենտիոս Տրիասեն Ս. Բարսղի հայ ձեռագիրներու հաւաքածոն («Բազմավէպ», 1954, էջ 6-10, 65-70, 237-242, 281-287): «Պահոց գրքի» Վենետիկի երկաթագրի հիշատակարանին անդրադարձել են Գ. Զարբնաւալյանը (տե՛ս «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 339-341), Լ. Թորոսյանը («Համեմատութիւն մը Յովհ. Մանդակունւոյ «Վասն փոխոց եւ վաշխից» եւ Ս. Բարսղի «Ընդդէմ վաշխողաց» ճառերուն», տե՛ս «Բազմավէպ», 1927, էջ 66), Գ. Հովսէփյանը (տե՛ս «Յիշատակարանք ձեռագրաց», Ա. Անթիլիաս, 1951, էջ 407-410):

լի է ասել, ընդօրինակվել է նույն ձեռագիր հիմք օրինակից: Նման ընդհանրացման համար կան բավարար կովաններ.

ա) Այս դեպքում ևս յուրաքանչյուր ճառի խորագրի համառոտ տարբերակը մատնացուցվում է նաև ճառի վերջնամասում.

բ) Նույնությամբ և նույն տեղում ունենք «Ի ծնունդ Փրկչին» ճառին կից, թարգմանության ժամանակ ցուցող հիշատակարանը.

գ) Առկա տարբերությունները բացառապես գրչական-ուղղագրական բնույթի են. այլահիմք մայր օրինակ ենթադրող ընթերցումներ չկան¹:

3. Զեռագիր № 5595 = B («Բարսեղ Կեսարացի՝ Մատենագրութիւնք», 1279 թ.), Եղիազարու վանք, գրիչ՝ Ստեփանոս, Եսայի, ստացող՝ Ներսես վարդապետ, թերթ՝ 400, թուղթ՝ 17x12, միասյուն, բոլորգիր, տող՝ 27: «Պահոց գիրքը» գրադեցնում է գրչագրի 229ա-400բ էջերը: Պակասում են Զ., ԻԸ., ԼԳ. ճառերը: Գրչագիրս ունի թափված թերթեր, ինչպես նաև թերթերի խառը դասավորության մի քանի օրինակներ (տե՛ս էջ 273ա, 282բ, 385ա-388ա, 395ա-398բ և այլն): Թերթերի թափվածության մասին համապատասխան նշում կա 242ա էջում՝ բան է պակաս: Գրչագիրս ունի լուսանցագիր ճշգրտումներ, լրացումներ, ուղղումներ, ինչպես նաև խմբագրական բնույթի առանձին գրառումներ: Ահա «Պահոց գրքի» ավարտին հարող հիշատակարանը² «Կատա[րեցալ]... գրոցս այսոցիկ՝ ճառք երեսուն և մի՝ ասացուածք սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարեայ Կապաղովկացոց: Զմեղապարտ գրիչս Եսայի (°) յիշել յաղաւթս աղ[աչեմ] և զստացող սորին զՆերսէս վարդապետ և զնորին եղանիկ ըբբունն զուսուցիչ և զվարժապետ, զմաքուր անձն և զպայծառ հոգի՝ զհոգիապատում և զճշմարտախաւսն բանին կենաց [...] գրոցս զվարդապետս Ներսէս, և զծնողքն նորա՝ զամենայն զարմն յիշեսջիբ յաղաւթս ձեր սրտի մտաւք, որք աւգտիք ի սմանէ՝ [առ]հասարակ ամենեցուն ողորմեսցի յիշատակեցելոցս և նմա փառք յաւիտեանս. ամէն» (էջ 400աբ): Կան նաև ընդհանուր բնույթի հիշատակութիւններ՝ «Աստուած աւգնէ վարդապետին Ներսէս... զգիրքս հրամ[ա]յեաց, որ կարդ[ա]ցաք և ոչ առնենք» (էջ 400բ): Հետագայի գրառում «[Ըն]թերձող զՅովաննէս յիշել աղաչեմ և Քրիստոս զձեզ» (էջ 400բ):

¹ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինության խնդրանքով Վենետիկի Մխիթարյան միաբանութիւնից ստացել ենք հիշյալ գրչագրի մանրաժապավենը, որի համար շնորհակալութիւն ենք հայտնում և՛ Մատենադարանի տնօրինութիւնը, և՛ Մխիթարյան միաբանութիւնը: Միաժամանակ նկատենք, որ Նյու Յորքի Կոլումբիա համալսարանի պրոֆեսորի ասիստենտ Պիտեր Քաուլին սիրով մեզ տրամադրեց Վենետիկի նույն երկաթագրի ԺԲ., ԺԳ., ԻԱ., ԻԲ., ԻԳ., ԻԴ., ԻԵ., ԼԱ., ԼԲ. ճառերի իր իսկ ընդօրինակութիւնները, որի համար հայտնում ենք շնորհակալութիւն:

² № 5595 գրչագրի հիմնական հիշատակարանին (էջ 228բ) անդրադարձել է Գ. Հովսեփյանը (տե՛ս նրա «Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1966, էջ 375):

4. Ձեռագիր № 1500 = C («Ճառընտիր», 1283 թ.), Գեղարդա վանք, գրիչ-ստացող՝ Մխիթար Այրիվանեցի, թերթ՝ 1189, թուղթ՝ 25,7x26,5, երկսյուն, բուրգեր, տող՝ 52-59: «Պահոց գիրքը» ընդգրկում է գրչագրի 879ա-936ա էջերը: Պակասում են ԻԸ. և ԼԳ. ճառերը: Այրիվանեցու ճառընտրի մեզ հետաքրքրող բնագիրը № 822 ձեռագրի նման ունի ճառերի և թղթերի հերթակարգը սահմանող համարակալում: «Տեսութիւն... Բարսղի եւ Գրիգորի» Հարցումի մեջ գրիչը ընդամենը 1-2 անգամ է կիրառում ասէ դիմաւոր բայաձևը: Սույն գրչագրին հատուկ են ձայնեղների խլացման դեպքերը (դ>տ, գ>կ), և և և ձայնավորների սղման օրինակները հաճախադեպ են (երթել, անկել, լել, պատմել, զկենան, գործօնայք, հրաշալաւքն, կարծաւք, թաքայց և այլն): Գրիչը հետևողականորեն ու-ի փոխարեն չէ օգտագործում (անկելի, դժւարալոյծ, պատւոյն, յաւելւած, թշւառական, ստացւած, սպառւած և այլն): Ամենուր չկիրսաձայնը օտարվում է: Պահպանվել են Պահոցին վերաբերող հետևյալ հիշատակագրությունները: «Յաղագս Սուրբ Երրորդութեանն» ճառի ԺԶ. ավարտամասում կարգում ենք. «Գ. ճառ Սուրբ Հոգոյն և Ա. կուսութեան, և այլ բազում ճառք այլ կան ասացեալ սրբոցս» (էջ 907): «Պահոց գրքի» վերջնամասում «Յիշեա՛ Տէր, զՏէր միովդ» (էջ 936ա):

5. Ձեռագիր № 2549 = D («Ժողովածու», ԺԴ. դար), գրիչ՝ Յոհան Եղնկացի, թերթ՝ 313, թուղթ՝ 17,3x12,3, միասյուն, բուրգեր, տող՝ 22-28: «Պահոց գիրքը» ընդգրկում է գրչագրի 72ա-254բ էջերը, պակասում են ԻԸ. և ԼԳ. ճառերը: Բավարար հիմքեր կան պնդելու, որ գրչագիրս ընդօրինակվել է № 5595 ձեռագրից: Այս դեպքում էլ ունենք «Պահոց գրքի» ձեռագրերին հատուկ նյութերի դասդասման և համարակալման նույն կարգը: Գրչագիրս ընդօրինակվելուց հետո համեմատվել է այլ օրինակի հետ և օտար ձեռքով ու գրչությամբ ընդունելի միջամտություններ, լրացումներ են կատարվել: Կան նման բառերի չփոփ հետ կապված բացթողումներ: Ի տարբերություն № 822, № 1500 գրչագրերի, սույն ձեռագիրը № 5595-ի նմանությամբ չունի նյութերի ավարտին հարող խորագրի որևէ տարբերակ: «Պահոց գրքի» շրջանակներում երկու հիշատակագրություն կա: Առաջինը վերաբերում է Բարսեղի և Ապողինարի Հարցումին, իսկ երկրորդը առհասարակ որևէ առնչություն չունի Պահոցի հետ: Ահա այդ հիշատակագրությունները. ա. «զճառս այս այլոց ոմանց փառամոլաց է Հարցումն եւ պատասխանի եւ ոչ Բարսղի սրբոյ եւ Աստուածաբանի, եւ սակս¹ ընդունելութեան սոցա անուամբ եմ վերագրեալ» (էջ 183բ): բ. «Ի թվիս Հայոց ՋԺԳ., ապրիլ ամսոյ ԻԲ. եղև վերափոխումն Տէր Ներսէս եպիսկոպոսիս Անկուրիոյ. էր սա յերկրէն Ղրիմեայ, աշակերտ Սարգիս վարդապետի, որ արեգակն փայլէր յերկրին Հոռմանց, բազումք երկրորդ Տէր Ներսէս կոչէին եւ...» (էջ 255ա):

¹ Գրչագրում՝ սակս:

6. Ձեռագիր № 436 = E («Ժողովածու», 1790 թ.), Կ. Պոլիս, էջմիածին, գրիչ՝ Բրաբրոն, Գեորգ, ստացող՝ Գեորգ վարդապետ, թերթ՝ 390, թուղթ՝ 28x20,5, երկսյուն, նոտրգիր, տող՝ 45: «Պահոց գիրքը» զբաղեցնում է գրչագրի 127ա-204բ էջերը: Գրչագիրս ընդհանուր առմամբ խնամյալ ընդօրինակություն է: Այս դեպքում ևս ունենք համառոտ և ընդարձակ խորագրեր: Ի տարբերություն նախորդ գրչագրերի, «Պահոց գրքի» սույն ընդօրինակությունն է մուծվել ևս երկու ճառ, որոնք ոչ միայն կապ չունեն սույն ժողովածուի հետ, այլև դրանց՝ Բարսեղ Կեսարացու գրչին պատկանելը կասկածելի է: ա) «Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Ի գալուստ Տեսնն ի տաճարն...» – «Ջամենայն տօնախմբութիւնս պարտ է մեզ կատարել Սաղմոսիւք եւ օրհնութեամբ, եւ դպրութեամբք ընթերցուածոցն» (էջ 138ա-141բ): բ) «Նորին Բարսղի սրբոյ Ի մալր որդոցն Ձեբեթայ» – «Վկայիցն մեզ տօն ժամանեաց եւ Քրիստոսի սէրն, եւ շնորհն ժողովեաց զմեզ» (էջ 206բ-209բ): Սույն գրչագրի մյուս նկատելի առանձնահատկությունն այն է, որ Ա. եւ ԻԹ. ճառերը իրենց նախնական վիճակից այնքան են հեռացել, որ, կարելի է ասել, տարբերակի տպավորություն են թողնում: Ամենուր երկիր, արև, լուսին, աստղ եւ նման հասկացությունների համար օգտագործվել են համապատասխան պատկերանշաններ: Կան բազմաթիվ լուսանցագրություններ, որոնք հաճախ լրացնում են բուն տեքստը, երբեմն էլ տարբերակի տեսքով են ներկայանում:

Ահա «Պահոց գրքին» վերաբերող միակ հիշատակարանը. «Գաղափարեցաւ ի ՌՄԼԹ. թուականիս մերոյ Յունիսի 12, ի Սուքիսս վարդապետէ ի սուրբ Երուսաղէմ՝ զծագրեցեալ հնագոյն օրինակէ, ի վայելումս սրբոյ Էջմիածնի բնիկ միաբան վարժապետ Մինաս աստուածաբան վարդապետի հոգևոր որդի Գեորգ վարդապետին՝ ի Կոստանդնուպալիս՝ ձեռամբ Մատթէոս Աուստ տպագրչի՝ քոյր Բրաբրոն Աուարիս» (էջ 206բ):

7. Ձեռագիր № 948 = F («Ժողովածու», 1190 թ.), գրիչ՝ Յովհաննէս (որդի Սարգիս բշկի), թերթ՝ 298, թուղթ՝ 26x17, միասյուն, բոլորգիր, տող՝ 24: Սույն գրչագրում ընդօրինակվել են «Պահոց գրքի» Ա. (էջ 250բ-261ա) և ԻԹ. (էջ 261ա-270ա) ճառերը: Նշված բնագրերը, Վենետիկի հիշյալ գրչագրից հետո, մեզանում պահպանվող Պահոցի ամենահին ընդօրինակություններն են: Գրչագիրս ընդհանուր առմամբ՝ խնամյալ ընդօրինակություն է: Ի տարբերություն նույն Ա. և ԻԹ. ճառերը պարունակող նախորդ գրչագրերի, սույն ձեռագիրը գրեթե գերծ է լուսանցագիր և բուն տեքստում տրվող լրացումներից:

8. Ձեռագիր № 1525 = G («Ճառքնտիր», ԺԳ. դ.), գրիչ՝ Յովաննես, Գեորգ, ստացող՝ Յովանես (գրիչը), թերթ՝ 523, թուղթ՝ 47x33,5, երկսյուն, բոլորգիր, տող՝ 33-36: Պարունակում է առաջին (էջ 205ա-211բ) և հինգերորդ (էջ 299ա-303ա) ճառերը: Նշված ճառերի հետ կապված որևէ գրառում-հիշատակագրություն չի պահպանվել:

9. Ձեռագիր № 3710 = H («Ժողովածու», ԺԳ. դ.), գրիչ՝ Հովհաննես Արքանդեայր, Թորոս, Ստեփաննոս Վահկացի, ստացող՝ Հովհաննես Արքանդեայր, թերթ՝ 383, թուղթ՝ 25x16, միասյուն, բոլորգիր, տող՝ 23-32: Պարունակում է «Պահոց գրքի» ԺԹ. (էջ 368բ-374բ) և Ի. ճառերը (363ա-368բ): «Բարսեղ ասէ», «Ապողինար ասէ» ընդունված ձևերը օգտագործում է առանց «ասէ» բայական կիրառության: Բացառությամբ սկզբնամասի մեկ-երկու դեպքի, ամենուր «Բարսեղի» փոխարեն օգտագործվում է «ուղղափառ», «ուղղափառն» ձևերը: № 436 գրչագրի նմանությամբ, սույն ձևազերծը ևս էապես տարբերվում է մեր ունեցած հիմնական տեքստից: Գրիչը առանձնապես հետևողական չէ ուղղագրության միօրինակության հարցում: Այսպես, օրինակ՝ միաժամանակ հանդիպում են Ապաղիմար-Ապողիմար, արդեաք-արդեք ձևերը: Թվում է, Հարցումի սույն տարբերակի վերջնամասի մի ընդարձակ հատված («Ամէն»-ից հետո) գրչի մտահղացման արդյունք է՝ գրված բուն նյութի ոգով ու գնահատության ցանկությամբ:

10. Ձեռագիր № 3787 = I («Ճառընտիր», ԺԴ. դ.), գրիչ՝ Գրիգոր քահանա, Սոսթենես, Աւագ, ստացող՝ Պարոն Տուած, Ռայիս Պարոնիկ, Յակոբ, թերթ՝ 688, թուղթ՝ 47x28, երկսյուն, բոլորգիր, տող՝ 43: Ընդօրինակվել է միայն ԻԹ. ճառը (էջ 232բ-237ա): Որոշակի ընդհանրության եզրեր ունի №№ 436, 1500 և 993 գրչագրերի հետ: Սույն ճառի վերջնամասը ինչ-ինչ պատճառով շատ է հեռացած բուն բնագրից (տե՛ս № 300 ծանոթությունը):

11. Ձեռագիր № 3782 = J («Ճառընտիր», ԺԴ. դ.), գրիչ՝ Գրիգոր, ստացող՝ Հովհաննես քահանա, թերթ՝ 267, թուղթ՝ 46x32, երկսյուն, բոլորգիր, տող՝ 46: Պարունակում է «Պահոց գրքի» միայն ԻԸ. ճառը: Սույն ճառի հետ կապված որևէ հիշատակագրություն-հիշատակարան չի պահպանվել: Գրչագիրս ինքնատիպ ընթերցումներով որոշակիորեն տարբերվում է նույն ճառի մյուս ընդօրինակություններից: «Դրուատ ի սուրբն Ստեփանոս Նախավկայ Քրիստոսի» խորագրի տակ (էջ 242բ-244ա) պահպանվել է նույն ԻԸ. ճառի № 6228 գրչագրում ընդօրինակված տարբերակը (տե՛ս № 290 ծանոթագրությունը):

12. Ձեռագիր № 7443 = K («Ճառընտիր», 1352-1353 թթ.), Քիմճակ (Ղրիմ, Ա), Իլով (Բ), գրիչ՝ Անտոն քահանա, Մելքիսեդ (Ա), Յովհաննես (Բ), ստացող՝ Քրիստոսատուր քահանա (Ա), Ամիր Սեթ (1377 թ.), թերթ՝ 609, թուղթ՝ 38x26, երկսյուն, բոլորգիր, տող՝ 40-60: Սույն գրչագրում ընդօրինակված ենք գտնում «Պահոց գրքի» միայն առաջին ճառը (էջ 91ա-95բ): Գրչագիրս որոշակի ընդհանրության եզրեր ունի № 4070 ձևազերծի հետ: Ահա «Յաղագս պահոց» ճառին վերաբերող միակ հիշատակագրությունը. «գրիստոսատուր արեղայն յիշեսչիք ի Քրիստոս, պատուական ընթերցողք» (էջ 95բ):

13. Զեռագիր № 2786 = L («ժողովածու», ժ.թ. դ.), թերթ՝ 208, թուղթ՝ 24, 8x19,5, միասյուն, նոտրգիր, տող՝ 30-32: Պարունակում է «Պահոց գրքի» միայն ժ.Ը. ճառը (էջ 41բ-43բ): Գրչագիրս որոշակի ընդհանրություն ունի № 5244, ինչպես նաև №№ 1500, 436, 996 ձեռագրերի հետ: Ճառի վերջնամասը բացակայում է ոչ թե թերթերի թափվածություն, այլ պարզապես համառոտելու (օտարելու) պատճառով:

14. Զեռագիր № 996 = M («Ճառընտիր», 1442 թ.), Սերկևիլի գյուղ, գրիչ, ծաղկող՝ Ոհաննես միայնակեաց, ստացող՝ պարոն Շալու, թերթ՝ 568, թուղթ՝ 30, 3x20,5, երկսյուն, բոլորգիր, տող՝ 33: Գրչագիրս ունի «Պահոց գրքի» առաջին (էջ 319ա-327ա) և ժ.Ը. (էջ 61բ-68բ) ճառերը: Առկա լուսանցագիր նշումները հիմք են տալիս մտածելու, որ սույն ձեռագիրը համեմատվել է այլ ընդօրինակությունների հետ և կատարվել են լրացումներ: Այդ մասին գրիչը մասնակի նշում է կատարել՝ «չալ ձեռագիր էր, որ ինչ» (էջ 319ա): Գրչագիրս որոշակի ընդհանրական եզրեր ունի №№ 5595, 1500, 2549, 436 և 5244 ձեռագրերի հետ: Կան ճառերի ավարտամասերին կցված մեկական հիշատակագրություններ:

ա) «Ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի սորա՝ պարոն Ծալուին և բարեպաշտ, և հաւատարիմ Ասիսնեաց իրոց, և խակակոտոր եղբար իրոյ՝ պարոն Գրիգորին: Փրկեա՛ յաիտեանական տանջանացն և յանշէջ հրոյն, արժանի արա՛ անմահ կեանացո, և երկնից արքայութեանո, և զՅակոբ կրանատր, և զԼարիպ գրագիրս, և անա փառք յաիտեանս» (էջ 327բ):

բ) «Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա՛ ստացողի սորա՝ պարոն Ծալուին, պարոն Գրիգորին և ծնողաց սոցին՝ պարոն Սարգսին, պարոն Թամսին և Քեզ փառք յաիտեանս» (էջ 68բ):

15. Զեռագիր № 993 = N («Ճառընտիր», 1456 թ.), Վերին Նորավան, գրիչ՝ Մատթեոս, ծաղկող՝ Եսայի, ստացող՝ Թագեոս, Ստեփանոս եղբարք, թերթ՝ 769, թուղթ՝ 34x25,5, երկսյուն, բոլորգիր, տող՝ 44: Գրչագիրս պարունակում է «Պահոց գրքի» Ա. (264ա-267ա), Բ. (301բ-302բ), ժ.Ը. (24բ-25ա), ԻԸ. (693ա-695բ), ԻԹ. (356բ-358բ) ճառերը: Կան խորագրային որոշ տարբերություններ. այսպես օրինակ՝ երկրորդ ճառի այլուր հայտնի խորագրի դիմաց ունենք՝ «Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի ասացեալ Յաղագս պահոց»: Ճառերի վերջնամասերում կան հատվածական տարբերություններ: Օտար բացատրություններ կան «Ի ծնունդն Փրկչին» ճառի այս տարբերակում: «Ի սուրբ անհատական Քրիստոսի Ստեփանոս» ճառը մասամբ խմբագրման է ենթարկվել: Թերթերի թափվածության պատճառով ճառի սկզբնամասը բացակայում է: Պահոցին վերաբերող միակ հիշատակագրությունը հետևյալն է. «Կարդայ՛ և գեղեղի ծողոս յիշեա՛ ի սուրբ յաղոթս քո» (էջ 358բ):

16. Ձեռագիր № 4822 = O («Ճառընտիր», 1491 թ.), Արծկե, գրիչ՝ Յակոբ, Մովսես, ստացող՝ Խալիֆ, թերթ՝ 473, թուղթ՝ 31x21, երկսյուն, բոլորգիր, տող՝ 33: Պարունակում է «Պահոց գրքի» առաջին ճառը (էջ 236ա-241ա): Սակայն նույն գրչագրում ընդօրինակվել է առաջին ճառի մեկ այլ՝ խմբագրված տարբերակ ևս (տե՛ս № 1 ծանոթագրությունը): Կա մեզ հետաքրքրող երկու հիշատակագրություն:

ա) «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա՛ ստացողի գրոցս Խալիֆիս¹ և ծնողաց նորին՝ Գորգուն և Սալչուկին և կնոջն Բէկուն և գրչի» (էջ 241ա):

բ) «Քրիստոս ողորմեա՛ և մեղաց թողութիւն շնորհեա՛ Գուլիջանին, հօրն Յոհաննիսին և սօրն Մարգարտին՝ Բէկիջանին, հօրն Կիրակոսին և Հասրաթին. ամէն» (էջ 241ա):

17. Ձեռագիր № 4774 = P («Ճառընտիր», մինչև 1425 թ.), գրիչ՝ Գրիգոր աբեղա, ստացող՝ Յոհաննես աբեղա, Յովաննես փիլիսոփոս, թերթ՝ 497, թուղթ՝ 27,5x18, երկսյուն, բոլորգիր, տող՝ 27-33²: Ընդօրինակվել է «Պահոց գրքի» միայն առաջին ճառը (էջ 210ա-213ա): Ձեռագրի գրչությունը միօրինակ չէ, հետագա միջամտություններ ու գրառումներ չկան:

18. Ձեռագիր № 4070 = Q («Ժողովածու» 1553 թ.), Իլով, գրիչ՝ Վարդան կրօնավոր, թերթ՝ 355, թուղթ՝ 20,5x14,5, միասյուն, նոտրգիր, տող՝ 25: Ունի «Պահոց գրքի» միայն առաջին ճառը (էջ 191ա-198բ), որի հետ կապված որևէ գրառում-հիշատակագրություն չկա: Կան նման բառերի հետ կապված առանձին բացթողումներ:

19. Ձեռագիր № 1924 = R («Ժողովածու», 1653 թ.), գրիչ՝ Ավետ, Աբրահամ, թերթ՝ 351, թուղթ՝ 25x19,5, երկսյուն, բոլորգիր, տող՝ 25: Պարունակում է «Պահոց գրքի» առաջին (էջ 127ա-134ա) և երկրորդ (էջ 134ա-137բ) ճառերը: Սակայն, ի տարբերություն ոչ ամբողջական մյուս ճառընտիր-գրչագրերի, սույն ձեռագրի ընդօրինակությունը «Պահոց գրքի» համար նախատեսված մասում ընդհատվել է. այդ են վկայում ազատ մնացած թերթերը: Նշված ճառերում կան նման բառերի շփոթով պայմանավորված բացթողումներ: Ահա գրչի մեզ հետաքրքրող միակ հիշատակարանը. «Օրհնեալ է Աստուած յամենայն ժամ: Գիտութեամբ ընդ Հրէիցն քաղաքաց եւ անգիտութեամբ ընդ Սողոմոնացիսն, որոց ինձէն յոյժ վկայէի անձին իմոյ բիրապատիկ առնույ հատուցումն, թէ արդարութեամբ դատեցայց, այլ փրկեցայց ողորմութեամբք: Այլ ակն ունելով յուսով սպասեմ սուրբ ընթերցողացդ աղօթից յիշել զիս անարժան Աւետ գրիչս, ընդ նմին եւ զծնողսն իմ, եւ զյիշողքդ յիշեալ յիշիք ի քաղցր ձայնին, որ ասէ, եթէ՛ Եկայք արհմեալք հօր իմոյ ժառանգել անզրաւ յուրախութեան տեղին. ամէն» (էջ 138բ-139ա):

¹ Անվանս վերևում ավելացված է՝ Մարտիրոսին:

² Այս ձեռագրի մասին տե՛ս Սեդա Մարաբյան, Գրիգոր Խլաթեցու ձեռագրական ժառանգությունը («Բանբեր Մատենադարանի», № 15, Երևան, 1986, էջ 181):

20. Ձեռագիր № 3239 = S («Ժողովածու», 1671-1675 թթ.), Ս. Գեորգ վանք, գրիչ, ստացող՝ Զաքարիա՞ երեց, թերթ՝ 276, թուղթ՝ 15,5x10,6, միասյուն, նոտրգիր, բոլորգիր, տող՝ 19: Պարունակում է «Պահոց գրքի» միայն առաջին ճառը (էջ 4ա-10ա):

21. Ձեռագիր № 5244 = T («Ճառքներ», ԺԸ. դ.), ստացող՝ Պատրոս Հռոմկ-լայեցի, թերթ՝ 259, թուղթ՝ 16,5x8, միասյուն, նոտրգիր, տող՝ 18: Ունի միայն ԺԸ. Ճառը (էջ 31ա-39ա), որը ընդհատվում է № 822 գրչագրի 151բ էջի «եւ վասն...» կապակցութեամբ սկսվող հատվածով: Կան բազմաթիվ բացթողումներ, խմբագրական բնույթի միջամտություններ, որոնք, թվում է, արվել են որոշակի նպատակով: Երբեմն հանդիպում են Ս. Գրքի հղման դեպքեր, կան մի քանի հետագա գրառումներ: Գրիչը իբրև ԺԸ. ճառի ավարտ թողել է հետևյալ գրառումը. «Ընկալցուք եւ մեք ուրախութեամբ մեծաւ ի սիրտս մեր, ընդ մոգուցն երկրպագեսցուք, ընդ հովիվսն փառաորեսցուք, ընդ հրեշտակսն պարեսցուք, զի եհաս մեզ այսօր Փրկիչ, որ է օրհնեալ Տէր ի քաղաքի, որում վայել է փառք, պատիւ եւ երկրպագութիւն յաիտեանս յաիտեանից. ամէն» (էջ 39ա):

22. Ձեռագիր № 8420 = U («Ժողովածու», ԺԸ. դ.), Կ. Պոլիս, գրիչ՝ Կարապետ Բերիացի, ստացող՝ Կարապետ Բիւզանդացի, թերթ՝ 112, թուղթ՝ 17,4x11,4, միասյուն, նոտրգիր, տող՝ 25-26: Ունի միայն ԻԸ. Ճառը (էջ 102ա-104բ), պատկանում է №№ 436, 993 ձեռագրախմբին: Մեզ հետաքրքրող ճառի ավարտամասում ընդօրինակվել է հետևյալ չափածո հիշակագրությունը.

«Մտաց նըրբից կարօտի բանդ երջանիկ,
Որոց ևս է գննելն ըստոյգ մեծ ջանիկ.
Ով սուրբ Բարսեղ մեծ ըաբունի անջանիկ
Զայս հիւսեցեր պսակին թագ երջանիկ» (էջ 105ա):

23. Ձեռագիր № 1330 = V («Ժողովածու», 1711 թ.), Շօռթ, գրիչ՝ Սարգիս, ստացող՝ Պետրոս Աստապատցի, թերթ՝ 239, թուղթ՝ 28,5x22, երկսյուն, բոլորգիր, տող 29: Պարունակում է «Պահոց գրքի» առաջին (էջ 230ա-234բ) և երկրորդ (էջ 234բ-237բ) ճառերը: Ամեն ինչով հիշեցնում է № 1924 գրչագիրը: Պահոցի ճառերին վերաբերող հիշատակագրություններ չեն պահպանվել:

24. Ձեռագիր № 659 = W («Կանոնագիրք Հայոց», 1368 թ.), Կաֆա, գրիչ, ստացող՝ Մաղաքիա, թերթ՝ 320, թուղթ՝ 17x12,3, երկսյուն, բոլորգիր, տող՝ 21: Պարունակում է «Պահոց գրքի» ԻԴ. (էջ 208բ-214բ) և ԻԵ. (էջ 198ա-204ա) թղթերը, որոնք համապատասխան փոփոխություններով օգտագործվել են Կանոնագրքում: ԻԴ. Ճառի «զի ոչ է պարտ...» սկսվածքով պատվիրանները առանձնացվում են ոչ թե այբբենական կարգով, այլ լուսանցագիր աստղանի-

չերով: ԻՆ. Թղթի սուլյն գրչագրի տարբերակը հրատարակել է պրոֆ. Վ. Հակոբյանը (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Ա., Երևան, 1964, էջ 620-621):

25. Ձեռագիր № 3956 = X («Ժողովածու», ԺԸ. դ.), թերթ 24, թուղթ 21x17, երկսյուն, նոտրգիր, տող՝ 28: Պարունակում է միայն առաջին ճառը (էջ 8ա-11բ): Անխնամ ընդօրինակություն է, կան մասնակի ուղղում-լրացումներ: Միակ հիշատակագրությունը հետևյալ կարճառոտ վկայությունն է. «Վայ ինձ բիր բերան» (էջ 11բ):

26. Ձեռագիր № 497 = Y («Ժողովածու», 1671 թ.), գրիչ՝ Սահակ, ստացող՝ Խաչատուր վարդապետ, թերթ 529, թուղթ 24.5x18.5, երկսյուն, բոլորգիր, տող՝ 22-30: Պարունակում է «Պահոց գրքի» ԺԹ. (էջ 463բ-470ա) և Ի. (էջ 458ա-463բ) ճառերը: Երկու բնագրերն էլ չունեն էական, ընդգծված առանձնացումներ, առկա տարբերությունները ընդօրինակման ճանապարհով առաջացած գրչական տարբերություններ են:

27. Ձեռագիր № 1330 = Z («Ժողովածու», 1771 թ.), էջմիածին, գրիչ՝ Պետրոս կրոնավոր, թերթ 331, թուղթ 20,8x16,2, երկսյուն, նոտրգիր, տող՝ 29-30: Ունի միայն ԻԸ. ճառը (էջ 171ա- 173ա): Ճառիս վերջնամասի փոխարեն № 822 ձեռագրի 221բ էջի «անյիշաչարութեամբ վարդապետին» արտահայտությունից հետո, նույն ձեռքով ու գրչությամբ, իբրև շարունակություն, ընդօրինակվել է մի օտար հատված, հետևյալ սկսվածքով՝ «և արդ թէպէտ ընդունելի վկայքն ամենեքեան և ցանկալի յիշատակ մարտի անցա, բայց առաւել նախամարտիկն և հօր զհնորն, որ առաջին կոխեսաց զպատերազմն զկնի թագաւորին...» (էջ 172բ): Ընդհանրության առումով սուլյն ձեռագիրը ավելի մոտ է №№ 436, 993, 8420 ձեռագրերին:

«ՊԱՀՈՑ ԳՐՔԻ» ՄԱՍԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պահոց գրքի» հայերեն թարգմանության քննական-համեմատական բնագիրը լույս է տեսնում առաջին անգամ, ուստի «Հրատարակություններ» հասկացությունը տվյալ դեպքում վերաբերում է տարբեր ժամանակներում, այլևայլ առիթներով լույս տեսած առանձին ճառերին միայն: Դրանք հիմնականում մեկ-երկու ձեռագրի հիման վրա կատարված հավուր պատշաճի հրատարակումներ են: Այս իմաստով բացառություն պիտի համարել «Ի ծնունդ Փրկչին» ճառի Հ. Պ. Անանյանի հրատարակումը, որը կատարվել է չորս գրչագրի, ինչպես նաև հունարեն բնագրի համեմատության եղանակով: Մեզ ծանոթ են առանձին ճառերի և թղթերի հետևյալ ամբողջական և հատվածական հրատարակությունները:

1. «Նորիմ սրբոյն Սեբերիանոսի ի հրաւիրեալս ի Մկրտութիւն» (տե՛ս Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոց եպիսկոպոսի ճառք ժԵ., Վենետիկ, 1830, էջ 183-197): Հրատարակիչը սույն ճառի առիթով ծանուցում է. «Այս ճառը կայ և ի կարգս մատենիցն սրբոյն Բարսղի» (էջ 183): Նա նույն կարգի վերապահություն ունի նաև նշված հրատարակության առաջաբանում՝ «և տասներորդն սրբոյն Բարսղի կարծեցեալ և այնպէս ի նորայսն ածեալ»: Սակայն համեմատությունը ցույց է տալիս, որ Սեբերիանոսի անվամբ հրատարակվածը բոլորովին օտար խմբագրություն է և որ «Պահոց գրքի» ձեռագրերի հետ ընդհանուր եզրեր ունի միայն: Այդ իսկ պատճառով մեր ունեցած տեքստի և Սեբերիանոսի անվամբ հրատարակվածի տարբերությունները արտացոլելու համար իսկ հարկ կլինի տպագիրը թերևս ամբողջությամբ վերարտադրել տարբերությունների բաժնում, որի անհրաժեշտությունը չկա:

2. «Սրբոյն Բարսղի, եպիսկոպոսի Կեսարու Կապուտկացոց՝ Յաղագս սուրբ Երրորդութեանն» = Z_1 (տե՛ս «Կնիք հաւատոյ» էջմիածին, 1914, էջ 78-83):

3. «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապօղիմարի հերձուածողի վիճաբանութիւն» = Z_4 (տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 84-98): Սույն հրատարակությունը շատ մոտ է Մաշտոցյան Մատենադարանի №№ 3710, 436 և 497 գրչագրերի համանուն տեքստի հետ: Առկա մասնակի տարբերությունները զուտ գրչական բնույթի են, բացառությամբ վերջընթեր հիշատակարանաբնույթ եզրակացության, որը, անկասկած, նշված ձեռագրի գրչի ստեղծածն է և հասկանալի պատճառով բացակայում է տպագրում:

4. «Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու, ի բանէն՝ Յաղագս գոհութեանն» (տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 259-260): Տպագրվածը համանուն ճառի միջնամասից մեկ պարբերություն է, ընդամենը ինը տող (տե՛ս ծանոթություն № 264):

5. «Երանելոյն Բարսղի, եպիսկոպոսի Կեսարու, ի բանէն եթէ՝ Ոչ է պատճառ չարեաց Աստուած» (տե՛ս «Կնիք Հաւատոյ», էջ 287): *Տպագրվածը համանուն ճառի միջնամասից յոթ տողանոց մի հատված է (տե՛ս ծանոթություն № 334):*

6. «Նորին, որ ի վկայն Յուդիտեայ» (տե՛ս «Կնիք Հաւատոյ», էջ 349): *Տպագրվածը վեց տող է¹ (տե՛ս ծանոթություն № 283):*

յամենայնի գոյսն իւր, նմա ինչ արժանաւոր¹ եգիտ ըղձայ Տեառնն: Եւ զի² նչ, ասէ, հատուցից Տեառնն. ոչ գոհս, ոչ ողջակէզս, ոչ որք աւրինացն պաշտամունք սպասաւորութեանն, այլ գնոյն ինքն զամենայն զիւր կեանսն: Յաղագս այսորիկ, ասէ, «բաժակ փրկուլթեան առ|132ա|ից», որք ածիցենն յաղագս բարեպաշտութեանն² կիրք³ մինչեւ ի մահ ընդ մեղացն ընդդէմ կացեալք: Բաժակ ասելով եւ այս է արդեաւք⁴, զոր ինքն ցոյց⁵ Փրկիչն յԱւետարանսն⁶: «Հայր, թէ կարողութիւն է անցցէ բաժակս այս» (Մ.Գ. Ի.Չ. 39), եւ դարձեալ յաշակերտսն: «Կարե՞ք ընպէլ գրաժակն, զոր ես ընպէտոց եմ» (Մ.Գ. Ի. 22): Յայտնէր զմահն, զոր ընդունէր յաղագս աշխարհիս փրկուլթեան: Յաղագս այսորիկ ասէ՝ զբաժակ փրկուլթեան առից այս է, ծարաւեալ իվկայութեանն կատարելութիւն⁷ եկից, հանգիստ անձին եւ մարմնոյ, ոռչ ցասմամբ վարելոյ⁸ յաղագս բարեպաշտութեանն, նահատակութիւնք եկեալք տանջանարանքն: Զիս ինքն, ասէ, զենումն բերից պատարագ Տեառն, վասն զի ամենայն փոքրագոյն գտանի քան զարժանաւորութիւն բարեգործին:

Եւ զայսոսիկ զաւետիս պատրաստագոյն ունելով՝ վկայէ ամենայն ժողովրդեանն պահանջիլ: Քանզի զաղաւթս ի մտաց առաջի ամենայն ժողովրդեանն նորա: Եւ ապա դառնայ առ լսողսն⁹ յաղագս ոչ առաւել սքանչանալոյ ընդ մահն: Պատուական¹⁰ է¹¹ առաջի Տեառն մահ սրբոց իւրոց: Մի՛ դանդաղիք, ասէ առ գեղեցիկ նահատակութիւնն, մարդի՛կ, եւ մի՛ զարհուրիք ի մահուանէն¹², քան|132բ|զի ո՛չ ապականութիւն է, այլ կենաց պատճառք, ո՛չ խանգարումն է ամենեւին, այլ փոփոխումն առ պատիւն: Առ¹³ մարդկան, որ ընչասէրքն են, քարինք ոմանք՝ ծաղկեալ գունովք, կարծեալք պատուականք¹⁴ բնաւորեցան անուանիլ¹⁵: Բայց պատուական¹⁶ ճշմարտապէս մահ սրբոց նորա: Յորժամ անձն մաքրեալ կենաւք, ազատ¹⁷ ի մարմնոյ աղտեղութեանց, ոչ ունելով աղտեղութիւն եւ կարկամութիւն, որք յաղագս բարեպաշտութեանն են նահատակութիւնք՝ փառաւորեալ զարդարութեանն¹⁸, ի վերայ կապէ պսակն, ամենեքումբք այ-

¹ C արժանաւոր] + եւ
² C բարեպաշտութեանս
³ C կիրք] իրք
⁴ C արդեաւք
⁵ BCDE ցոյց] ուսոյց
⁶ E յաւետարանին
⁷ ABD կատարելութիւն] կարաւտութիւն
⁸ BCDE վարելով

⁹ A լսաւոսն
¹⁰ AC պատուական
¹¹ ABDE է]
¹² AC մահուանէն
¹³ C առ] արդ
¹⁴ AC պատուականք
¹⁵ AC անուանիլ
¹⁶ AC պատուական
¹⁷ C ազատի
¹⁸ C զարդարութիւնն

սոքիւք¹ առաւել պայծառանայ գեղեցկութեամբ առաքինութեանն, մերձ կայցէ Տեառն եւ դատաւորին բոլորեցուն, քան զամենայն քար բազմակատար լուսաւորագոյն, որ ի շնորհէն լինին նշոյլք ստացեալք: Զիա՞րդ ոչ պատուական² այնպիսոյ³ մարդոյ առաջի Տեառնէ մահն: Արդ, մի՛ ողբասցուք արտաքուստ զելս ճանապարհաց⁴ սրբոց արանցն, այլ յաւէտ զլինելութիւնսն եւ ի կեանս⁵ յայտոսիկ զժանապարհն: Քանզի որ յաշխարհս է ճանապարհ անպատուութեամբ⁶ է, աղտով եւ⁷ ժանտահոտութեամբ⁸, զորոց⁹ եւ ոչ զտեսութիւնն արդեաւք¹⁰ դիւրաբար ներէ¹¹ ոք զկենս¹² 133ա|ացս¹² մերոց առաջնորդել: Զայնպիսեաւք¹³ է ճանապարհ մարմնական լինելութեանս, որ բնութեամբ հարկաւորութեամբք¹⁴ աւրինադրի¹⁵: Իսկ արտաքս ճանա-

պարհն եւ վճարումն աստուստ՝ պատուական¹⁶ եւ երեւելի ոչ միայն մարդկան, այլ որք¹⁷ սրբապէս եւ արդարութեամբ աստ զկենցաղս անցուցին¹⁸: Է պատուական¹⁹ ուրեմն մահ, ոչ պատուական²⁰ մարդկան է լինելութիւն: Քանզի սերմանի, ասէ²¹, անարգութեամբ²², եւ յառնէ փառաւք, սերմանի ապականութեամբ, եւ յառնէ առանց ապականութեան (Հմմտ. Լ. Կրնթ. ԺԵ. 43, 42): Հաւասարեա²³՝ այսուհետեւ զլինելութիւնն եւ զմահ²⁴, եւ դարեա՛ յողբալոյ, որ յանպատուութեանս²⁵ վճարեցաւ: Յորժամ հրէաբար մեռանէին՝ զարշելիք էին դիակունքն, բայց յորժամ յաղագս Քրիստոսի է մահն՝ պատուականք²⁶ են նշխարք սրբոց²⁷ նորա: Նախ քան զայտոսիկ ասացեալ լինէր քահանայիցն եւ նավովրէիցն՝ ո՛չ զարշանալ եւ ո՛չ միով իւրիք մեռելով²⁸: Եւ եթէ ոք մերձ²⁹ հպեսցի³⁰ ի մեռեալ՝ անմաքուր եղիցի մինչեւ յերեկոյ եւ

¹ C այսօքօք
² A պատուական C պատուականի
³ C այնպիսոյ] այսպիսի D այնպիսոյ
⁴ C սրբոցն արանց
⁵ C կեանս
⁶ A անպատուութեամբ C ամբարշտութեան D անպատուութեամբ
⁷ B եւ] ի
⁸ C ժանտահոտութեամբ] ժանգահոտութեամբ
⁹ C զորոց] զոր ոչ
¹⁰ C արդաւք
¹¹ E ներէ կարէ
¹² C զկենաց
¹³ BE զայնպիսեաւք] զի այնպիսեաւք C զի այնպիսօք
¹⁴ C հարկաւորութեամբք] հակառակութեամբք
¹⁵ D օրինադրի

¹⁶ AC պատուական
¹⁷ C որք] որ
¹⁸ C անցուցանէ
¹⁹ AC պատուական
²⁰ AC պատուական
²¹ D ասէ] աս
²² C անարգութեամբ] անպիտանութեամբ D անաղատութեամբք
²³ C հաւասարեց
²⁴ BC զմահն
²⁵ ABD յանպատուիենէս C յանպատուութենէ
²⁶ AC պատուականք
²⁷ C սրբոցն
²⁸ C մեռելովք E մեռանելով
²⁹ ABDE մերձ]
³⁰ CE հպեսցի] հպեսցի

լուսացէ¹ զհանդերձս իւր (Հմմտ. Ղեւր. ԺԼ. 39, 40): Իսկ այժմ, որ մերձենայ յոսկերս վկայի՝ առնու իմն փոխումն սրբութեան, որ ի մարմին² հաստատեալ է շնորհն: «Արդ, պատուական³ առաջի Տեառն մահ սրբոց իւրոց»: Մի՛ պատուէք քան |133բ| զմեծապատիւն⁴ զանպատուելիսն⁵ եւ մի՛ չար վաճառականք լինիք՝ զապականեալ կեանսս քան զանապականսն⁶ եւ զերանելի⁷ կեանսն⁸ պատուելով⁹: Քան¹⁰ զառանց¹¹ ախտից անպատուութեանն¹², ընդ որովք յոքունք ի հեշտասիրացն կան եւս ըստ կենցաղուս պէտք են, անձին մեծաբոյս պայծառացեալ, որպէս թէ ծառայեցողցանել զմարմինն՝ առ ի սպասաւորութիւնն իւր ձգելով: Զի ուրանաւր ծառայութիւն, անդ յայտ է թէ՛ եւ անպատուութիւն: Արդ, փախչելի են կեանք, որք¹³ յանպատուութիւն¹⁴ բնաւորեցան: Ոչ ինչ ասէ մեծ առնեմ՝ զիս տալով քեզ Տեառնդ: Քանզի ծառայ եմ¹⁵ քո,

քեզ ընծայեմ¹⁶ զքո ստացուած¹⁷: Զի ամենայն իրաւք արարչին ծառայ գտանի արարեալն, որպէս զի ոռչ յաւժարութեամբ է¹⁸ ծառայ, այլ բնութեամբ: Որդի եմ աղախնոյ, զոր գտղայն լեալ¹⁹, եւ զփոքր մանուկ²⁰ ի բաց տարաւ թշնամին, եւ հեռացոյց ի քումմէ ծառայութենէդ²¹, աղախին մեղաց արար: Այլ դարձայց եւ վերստին ընթացայց առ այն, որ ի սկզբանն էր Տէր եւ ծանեայց²² զառաջին ծառայութիւնն, վասն զի զիս ի կապանաց մեղացն ազատեաց՝ իջանելով ի դժոխս եւ լուծանելով մարդկային²³ կապանսն²⁴, որ ի մահուանէն եւ որք |134ա| յանչափելի բանտսն ի դժոխս արգելեալք էին: Յաղագս այսորիկ քեզ զէնից ոչ²⁵ չորքոտանիս երկակնդակս^{25b}, որոճողս²⁶ եւ ոչ²⁷ թռչունս մաքուրս²⁸ կամ նաչիհ զանկեալ իւղով, կամ զքաղբան^{25c} զերեւելի, կամ զխառնուածոյն²⁹ զայն խունկ (քանզի այնոքիկ ի³⁰ յերկրէ քեզ ընծային³¹ Տեառնդ),

¹ C լուսացէ
² D մարմինն E մարմին
³ AC պատուական C + է C պատուէք
⁴ D զմեծապատիւն] զմեզ պատիւն
⁵ AC զանպատուելիսն
⁶ C զանապական E զանապականն
⁷ AE զերանելի զերեւելի
⁸ BCD կեանսն] կայանս
⁹ AC պատուելով
¹⁰ CD քանզի
¹¹ C առանց
¹² A անպատուութիւն D անպատուութիւն
¹³ C որք] որ
¹⁴ A յանպատուութիւն
¹⁵ C քո քեզ ընծայեմ]

¹⁶ D ընծեմ
¹⁷ A ստացուած C ստացուածս D ստացուածս
¹⁸ C է]
¹⁹ B լիեալ C լիել
²⁰ C մանուկն
²¹ E ծառայութենէդ] + եւ
²² C ծանեայ
²³ BE զմարդկային
²⁴ C կապանս
²⁵ C ոչ] մի
²⁶ B որոճող
²⁷ C ոչ]
²⁸ C մաքուր
²⁹ AC զխառնուածոյն
³⁰ E ի]
³¹ C ընծային E ընծային C + քեզ

այլ, որ է իմ առանձինն զստացուած¹ եւ զսրտի² ծնունդ զիմոյ՝ քեզ ի փառաբանութիւն զայն նուիրեցից³ իբրեւ ի սեղանոյ իմեքէ ի մտացս: Եւ քահանայագործեցից քեզ զգովութեանն զոհս, քան զբիւր⁴ ողջակէզս պատուականագոյն քեզ անկարաւտիդ⁵ եւ կատարելոյդ⁶ Աստուծոյ, որ ոչ պահանջես մարմնական զոհս, որովք⁷ յղփանան ճոխքն, այլ որ ի սիրոյ եւ ի ճշմարտութենէ սրտի⁸ խոստովանութիւնն է, զոր մերձ է ամենեցուն զոյգ կամեցողացն¹⁵⁵: Զենուլ քեզ զգովութիւնն⁹ ոչ որպէս ամաչեցեալ գաղտ ուրեք եւ ի ծածուկ զէնից փախչելով ի բամբասանաց ամբարշտացն, այլ ի հրապարակի ուրեմն զոհս¹⁰ կատարեցից, զժողովուրդն¹¹ զբովանդակ¹² հաղորդս պաշտամանն առից: Եւ տեղի մեզ զոհիցն ցուցցի¹³ միջոց եւ երեւելագոյն¹⁴ Երուսաղէմ: [134բ| Լուարուք¹⁵, որք, զեկեղեցին թողլով, ի տունս եւ ի հրապարակս դեգերիք, ¹⁶զթշուա-

ռութիւն պատուական ի մարմնոյ զպատառումն եթէ պարտ է զազաւթս¹⁷ տալ ի մէջ¹⁸ Երուսաղէմի. այս է եկեղեցի Աստուծոյ: Քանզի ըստ հնում պաշտամանն առ անձինն¹⁹ իշխանութիւն²⁰ ոչ էր իւրաքանչիւր ումեք հաստատել սեղան, այլ մի ցուցեալ լինէր, որք զոհել յորդորագոյնք²¹ էին: Բայց դու կանգնես հարց զոհից սեղան եւ հուր լուցանես ակտար ի վերայ նորա՝ ոչ ըստ հնումն ակրինակին ողջախոհացուցանելով, զմարդիկ զապականեալս մտաւք ձգելով եւ զարշեցուցանելով զայնոսիկ²²: Նորոգեցին, յորոց փախերուք ի նմանութենէն դուք՝ ժողովուրդք Տեառն եւ մի՛ հեռանայք ի մասնէ ապրեցելոցն՝ մնալով ի հաւատն, կատարեալք պատուիրանաւքն²³ Տեառն, որում փառք եւ զաւրութիւն ²⁴յաւիտեանս յաւիտենից. ամէն:

¹ A զստացուած C ստացուած
² C սրտի
³ C նւիրեցից
⁴ B զբիւր
⁵ CDE անկարատիդ
⁶ ABDE կատարելոյ
⁷ C որով
⁸ C սրտի]
⁹ C զգովութիւնն] զգոհութիւնն
¹⁰ C զգոհսն D զգոհնն
¹¹ C զժողովուրդս
¹² C բօլնդակ
¹³ C ցուցանի
¹⁴ C երեւելագոյն
¹⁵ C լւարուք
¹⁶ AC զթշուառութիւն պատուական

¹⁷ C զաղթսն
¹⁸ C մէջ] վերայ
¹⁹ C անձին
²⁰ D իշխանութիւնն
²¹ D յորդորագոյնքն
²² C զայնոսիկ] զմարդիկ ADE + նոր
²³ A պատուիրանաւքն
²⁴ CE յաւիտեանս... ամէն]

ԺԶ. 'ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ
ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ'¹⁵⁶

1 ԶԱստուած յիշել հանապազ,
բարեպաշտութիւն է եւ յագումն
ոչ ունի աստուածասէր Հոգի:
Բայց բանիւ անցանել յա-
ղա|135ա|զս Աստուծոյ՝ յանդգնու-
թիւն է, մտաւք բազում չափով
յիրացն արժանաւորութենէ² ի բաց
մնացեալ³ եւ դարձեալ բանիւ ա-
ղաւտաբար մերձ կացուցանել զի-
մացեալն: Արդ, եթէ միտք մեր յո-
լովագոյն ի մեծութենէ իրացն⁴
նուագեն⁵, իսկ բանն⁶ նուագա-
գոյն⁷ եւս⁸ եւ⁹ քան զնոյն ինքն
զմիտսն¹⁰, զի¹¹ արդ ոչ հարկաւոր է
լուութիւնն, մի¹² երբէք բանիցն
տկարութեամբ թուեսցիս¹¹ վտան-
գել¹² յաստուածաբանութեանն
սքանչումն: Արդ, փառաւորելն
զԱստուած տենչալի յամենեսին
ի¹³ բանականսն¹⁴ սերմանեցաւ
ըստ բնութեան: Իսկ արժանաւո-

րապէս¹⁵ ասել՝ ամենեքեան նմա-
նաբար նուագին¹⁶: Եւ յաղագս բա-
րեպաշտութեան բաղձանաց¹⁷ այլ
յայլմէ գանազանիմք¹⁸, եթէ ոչ ար-
դեաւք¹⁹ ոք ամպարհաւաճեալ
մտամոլոր է զինքն, որպէս թէ²⁰
կարծել ի վերայ ծայրագունին ե-
լանել ըմբռնման, այլ որքան²¹
թուի²² յառաջատել ի գիտու-
թիւն²³, այնքան առաւել զտկա-
րութիւնն²⁴ իւր զգասցէ²⁵: Այսպի-
սի էր²⁶ Աբրահամ²⁷, այսպիսի էր
Մովսէս, յորժամ զԱստուած տե-
սանել կարացին, որպէս մարդոյ
տեսանել է կարելի, յայնժամ մա-
նաւանդ երկաքանչիւր ոք զինքն
անարգ|135բ|եաց, քանզի Աբրա-
համ²⁸ երկիր²⁹ զինքն եւ³⁰ մոխիր³¹
անուանեաց (Հմբ. Ծն. ԺԲ. 27), իսկ
Մովսէս³² 33 աղաւտաձայն¹⁵⁷ ասե-
լով (Հմբ. Եւ. Գ. 10) եւ յարմարայե-
զու³⁴: Վասն զի տեսանէր զլե-

¹ D նորին սրբոյն Բարսղի յաղագս Երրորդու-
թեանն E սրբոյն Բարսղի եպիսկոպոսապե-
տի Կեսարու կապաղօկեցւոց ասացեալ Z₁
սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու կա-
պուտկացոց Յաղագս սուրբ Երրորդու-
թեանն
² D արժանաւորութենէն
³ D մնացեալն
⁴ Z₁ իրացն] ի բաց
⁵ C նուագեն Z₁ նուագեալ
⁶ C բան
⁷ C նուագագոյն
⁸ Z₁ եւս] + է
⁹ D եւ]
¹⁰ C զմիտս
¹¹ C թուեսցի Z₁ թուեսցի
¹² Z₁ վտանգել] + եւ
¹³ B ի]
¹⁴ C բանականս Z₁ բանականսս

¹⁵ C արժանապէս
¹⁶ BDEZ₁ նուագեն C նուագեն
¹⁷ Z₁ բաղձանայ
¹⁸ Z₁ գանազանեմք
¹⁹ C արդօք
²⁰ Z₁ թէ] եւ
²¹ C որքան] որպէս
²² C թւի
²³ CE գիտութիւնն Z₁ գիտութեամբ
²⁴ Z₁ զտկարութիւնն
²⁵ C սգասցուք
²⁶ ACDE էր]
²⁷ A Աբրահամ
²⁸ AD Աբրահամ
²⁹ E երկիր] + եւ մոխիր
³⁰ EZ₁ եւ]
³¹ E մոխիր]
³² C Մուսէս
³³ Z₁ աղաւտաբար
³⁴ ABCDE յարմար լեզու

զուտոյն¹ իւրոյ զտկարութիւն՝ սպասաւորել² մեծութեան իմաստիցն ոչ կարացեալ: Այլ սակայն զի ամենայն³ լսելիք բացան այժմ առ աստուածաբանութեանն լսելութիւն, եւ յագումն ոչ է յեկեղեցւոջ⁴ այսպիսեաց լսաւորութիւն⁵, հաստատելով զժողովողին բան⁶, եթէ՝ ոչ լցցի ունկն⁷ ի⁸ լսել⁹ (Հմմտ. Ժ. 8), հարկաւոր է ասել ըստ կարի¹⁰: Եւ ասեմք՝ ոչ որքան է Աստուած, այլ որքան մեզ հասանի¹¹: Եւ ոչ՝ վասն զի միջոցս¹² երկնի եւ երկրի զտեղի զանցանել աչաւք զբովանդակն անկարանամք, եւ որքան կարիցեմք տեսանել հրաժարեմք¹³: Սոյնպէս եւ այժմ սակաւ բանիւք զբարեպաշտութիւնն լցցուք¹⁴, իսկ մեծի¹⁵ բնութեանն թողացուցուք ունել զամենայն բանի զյաղթանակն: Քանզի եւ ոչ հրեշտակացն լեզուք, ոյք¹⁶ երբէք իցեն, եւ ոչ հրեշտակապետաց¹⁷ հանդերձ ամենայն ի միասին, բանական

¹ A զլեզուոյն
² D սպասաւորեալ
³ Z₁ զի ամենայն]
⁴ C յեկեղեցոջ
⁵ ABCDE լսաւորութիւն] լուսաւորութեանց
⁶ E բանն
⁷ A ունկն
⁸ E ի]
⁹ E լսելով
¹⁰ E կարի] կարգի
¹¹ CE հասանելի E + է
¹² DE զի միջոցս] զմիջոջս
¹³ E հրաժարիցեմք
¹⁴ DZ₁ լցուցուք
¹⁵ Z₁ մեծ
¹⁶ C ոյք] որք Z₁ ոք
¹⁷ C հրեշտակապետացն E հրեշտակապետացն

բնութեամբն ժողովեալք յոլովմամբ¹⁸ հասանել կարացեն, ոչ¹⁹ ամենայնի²⁰ զինքեանս զուզել: Իսկ²¹ դու, եթէ կամիս²² յաղագս Աստուծոյ ասել ինչ կամ լսել, թող զմարմինդ քո, թող զմարմնական զգայութիւնսդ²³, [136ա] լքցես զերկիր, լքցես զծով, ի ստորեւ քան զքեզ արացես զաւզդ, զանց արա²⁴ զժամանակաց բարեկարգութեամբ²⁵, որ²⁶ յերկրի²⁷ զարդք, ի վերոյ քան զերկին²⁸ լիցես²⁹, զանցցես զաստեղաւք եւ շուրջ զնոցա³⁰ հրաշալեաւքն՝ զբարեզարդութեամբն նոցա, զմեծութեամբն³¹, զպիտոյիւքն³², զորս³³ ընձեռեն ամենեցուն, ³⁴ զքաջարկութեամբ¹⁵⁸ նոցա, զպայծառութեամբն, զդրութեամբն, զչարժմամբքն³⁵ ³⁶ եթէ³⁷ զիարդ առ ի-

¹⁸ E յոլովմամբ] յոլով մասամբքն Z₁ յոլով մասամբ
¹⁹ CEZ₁ ոչ] + զի
²⁰ C զամենայն
²¹ C իսկ]
²² E կամիցիս
²³ C սգաութիւնդ Z₁ զգայութիւնս
²⁴ Z₁ արա] + զժամուց եւ
²⁵ E բարեկարգութեամբն Z₁ բարեկարգութեան C + եւ
²⁶ C որ] որք
²⁷ E որ յերկրի]
²⁸ C զերկինս
²⁹ BDE լիցիս Z₁ ելցես
³⁰ Z₁ զնոցա] զնոսա
³¹ E զմեծութեամբն] + եւ
³² E պիտոյիւքն
³³ D զոր
³⁴ CDZ₁ զքաջարկութեամբ] զքաջակարութեամբ
³⁵ EZ₁ զչարժմամբն
³⁶ Z₁ եթէ... ունակութեամբ]
³⁷ E եթէ]

րեարս ունակութեամբ¹ եւ ²բացատուութեամբ¹⁵⁹ ունին: Ըստ ամենայն զանցեալ բանիւ, գերկնիւն³ ի վեր յառեալ եւ գեր ի վերոյ նորին լինելով՝ յատուկ մտաւք շուրջ տեսցես զանդ գեղեցկութիւնն, զաւրութեանցն երկնայնւոյն⁴, զպարակցութիւնս⁵ ⁶հրեշտակաց¹⁶⁰, զհրեշտակապետացն վերակացութիւնս, զփառս տերութեանցն, ⁷զնախհաստութիւնս¹⁶¹ աթոռոցն⁸, զգաւրութիւնս, զպետութիւնս գիշխանութիւնս: Զանցանելով ըստ ամենայն⁹ եւ զբոլոր ստացուածն¹⁰ ի վեր հայեսցիս¹¹ խորհրդովք, գեր ի վերոյ քան զայսոսիկ¹² գմիտսդ ի վեր բարձրացուցեալ¹³ իմասցիս գաստուածային բնութիւնն, կացեալ, անփոփոխելի, անայլայլելի, անախտ, պարզ, ¹⁴անշարադիր¹⁶², անբաժանելի, յոյս անմերձենայի (Հմգ. Ե. ՏՊ. Գ. 16), [136բ] զաւրութիւն անճառելի, մեծութիւն¹⁵ անսահմանելի, փառս առաւել փայլեալս, բա-

րութիւն ցանկալի, գեղեցկութիւն անհնարելի, ուժգնաբար¹⁶ վարժեցեալ հոգի¹⁷ մերձենալով ¹⁸եւ բանիւ յայտնել¹⁹ ըստ արժանւոյն անկարելի:

2 Անդ՝ Հայր եւ Որդի, եւ սուրբ Հոգին, անստացական բնութիւն, տիրական արժանաւորութիւն, բնական բարութիւն: Հայր՝ ամենեցուն սկիզբն²⁰, պատճառ գոլ²¹ էիցն²², արմատ կենդանութեանց: Ուստի յառաջեկն աղբիւր²³ կենաց, իմաստութիւն, զաւրութիւն, պատկեր անայլայլելի անտեսանելոյ²⁴ Աստուծոյ (Հմգ. Կղ. Ե. 15), ի Հաւրէ ծնեալ Որդի, կենդանի բան եւ Աստուած էն, եւ առ էն Աստուած (Հմգ. ՅՊԸ. Ե. 2): էն²⁵ ոչ յինելով գոյացեալ, նախ քան զյաւիտեանս, ոչ առ ստացեալ գկնի: Որդի, ոչ ստացուած²⁶, արարիչ՝ ոչ արարած, ստացող եւ ոչ ստացուած: Ամենայնէն²⁷, որ ինչ է Հայր, Որդի ասացի եւ Հայր: Պահեա՛ ինձ զայսոսիկ զառանձնաւորութիւնս²⁸: Բայց մնալով²⁹ ի գոյն Որդի՝ ամենայն է, որ ինչ է Հայր,

¹ CDE ունակութեամբք
² D բացատուութեամբք
³ E գերկնաւք Z₁ գերկնաւն
⁴ CDE երկնայնոցն
⁵ Z₁ զպարակցութիւնն
⁶ C հրշտակացն EZ₁ զհրեշտակացն
⁷ BD զնախհաստութիւնս] զնախ անստութիւնս C զնախանատութիւնս
⁸ B աթոռոց CZ₁ աթոռոյն
⁹ B ամենայն] + եւ ի վերայ քան D + եւ ի վերոյ քան C եւ] + ի վերո քան E + ի վերայ քան Z₁ ի վերո քան քան
¹⁰ AC ստացուածն Z₁ ստացուածսն
¹¹ Z₁ հայեսցիս] + մտօք
¹² D զայսոսիկ] զայնոսիկ
¹³ E բարձրացուցանելով
¹⁴ BDE անշարադիր] անշարադիր
¹⁵ E մեծութիւն] աստուածութիւն

¹⁶ ABDEZ₁ ուժգնաբար] + ի
¹⁷ D հոգիս
¹⁸ Z₁ եւ... անկարելի]
¹⁹ D յայտնեալ
²⁰ C սկիսբն
²¹ Z₁ գոլով
²² E էիցս
²³ B աղբիւր
²⁴ C անտեսանելոյ Z₁ անտեսանելոյն
²⁵ E էն]
²⁶ AC ստացուած E ստացեալն A ստացաւդ AC ստացուած E ստացող եւ ոչ ստացուած]
²⁷ C ամենայնէ E ամենայն Z₁ ամենայն էր
²⁸ C զառանձնաւորութիւնն
²⁹ CE մնալովն

ըստ իւրուժմ ճայնի¹ Տեառնն, ասելով. «Ամենայն գորս² ունի Հայր՝ իմ է» (Յ․ՎԺ․ Ժ․Գ․ 15): Քանզի էն³ պատկեր⁴ է, որ ինչ նախատպին դիմաց, վասն զի՝ «տեսաք, ասէ, աւետարանիչն, զփառս նորա զփառս⁵ իբրեւ զՄի|137ա|ածնի առ ի Հաւրէ, լի շնորհիւ⁶ եւ ճշմարտութեամբ» (Յ․ՎԺ․ Մ․ 14): Այս է, ոչ ի պարգեւէ եւ շնորհէ տուեալ նմա սքանչելեցան, այլ ըստ բնական հաւասարութեանն ունելով Որդւոյ⁷ զհայրենի աստուածութեանն պատիւ: Քանզի առնուլն հասարակ առստացուածն⁸, իսկ ունելն ի բնութենէ յատուկ ծնիցելոյն⁹: Արդ, իբրեւ Որդի՝ բնաբար ստացաւ զՀաւրն¹⁰, իբրեւ զՄիածին՝ զբովանդակ¹¹ ունի յինքեան բովանդակելով, ոչ ուրուք բաժանեցելոյ առ այլ: Զի ի նմին իսկ յՈրդւոյս¹² անուանէ¹³ վարդապետիմք, զի բնութենէ¹⁴ հաղորդ, ոչ հրամանաւ ստացեալ, այլ ի գոյութենէն պայծառացեալ անբաժանաբար, ¹⁵անժամանակապէս ընդ

Հաւր միաւորեալ, զոյգ բարութեամբ, զոյգ զաւրութեամբ¹⁶, հաղորդ փառացն: Քանզի ո՞ այլ զկնիք եւ¹⁷ զպատկեր զբովանդակ¹⁸ յինքեան ցուցանէ զՀաւրն¹⁹: Եւ որքան քեզ զկնի այսոցիկ ի մարմնական պատրաստութենէն խաւսի, զմարդկային փրկութիւն տնաւրինելով, էն²⁰ մարմնով երեւեալ մեզ ցուցաւ, առաքեալ ասելով զինքն, եւ ոչ ինչ կարել յինքենէ առնել, եւ պատուիրան²¹ առեալ²², եւ որքան այսպիսիք՝ մի²³ քեզ ընձեռեցեն²⁴ պատճառս առ ի փոքրացուց|137բ|անել զՄիածնին աստուածութիւն: Քանզի ոչ առ քո տկարութիւնն²⁵ խոնարհումն նուազութիւն²⁶ պարտի լինել արժանաւորութիւն ²⁷զաւրաւորին, այլ զբնութիւնն²⁸ իմա աստուածավայելչաբար²⁹, իսկ զխոնարհագոյն բանսն ընկալ տնաւրինաբար: Յաղագս որոյ, թէ կամեսցուք ի մերձակայիս հաւաստեալ պատմել, մոռանամք արդեաւք³⁰ զմեզ ինքեանս բազում ինչ եւ

¹ E ճայնին

² E գոր

³ E էն] էին

⁴ C պատկերի

⁵ E զփառս]

⁶ C շնորհուք DEZ₁ շնորհօք

⁷ C որդո

⁸ AC ստացուածն

⁹ BD ծնեցելոցն

¹⁰ Z₁ զՀաւրն] + եւ

¹¹ C զբովանդակն E բովանդակ

¹² C յորդոյս Z₁ յորդւոյ

¹³ AC անուանէ

¹⁴ D զի բնութենէ] զբնութեանն B բնութենէն

¹⁵ C անժամանակապէս... միաւորեալ]

¹⁶ ABCD զոյգ զօրութեամբ]

¹⁷ C զկնիք եւ] զկնիք եւ

¹⁸ C զբովանդակ Z₁ զբովանդակ

¹⁹ C զհայրն Z₁ զհայր

²⁰ E տնաւրինելով էն] տնօրինողէն

²¹ AC պատուիրան

²² Z₁ առնել

²³ C մի]

²⁴ C ընձեռեցեն

²⁵ Z₁ տկարութիւնդ

²⁶ C նւազութիւն

²⁷ CDZ₁ արժանաւորութեան

²⁸ C զբնութիւն

²⁹ D աստուածավայելչաբար

³⁰ C արդօք

անբաւ յոլովութիւն բանից ի ներքս ածեալ ի պատճառս:

3 Այլ յառաջիկայն վերստին երթիցուք: Զի միտք¹ կարասցեն ի նիւթականացն մաքրանալ եւ գամենայն իմանալի² ստացուածն³ լքանել, եւ⁴ որպէս ձուկն⁵ ինչ ի խորոց առ վերին երեւութիւն զողեսցուք⁶ ի մաքրութեան ստացուածի⁷ լեալք⁸: Անդ տեսանիցէք զՍուրբ Հոգին, ուր Որդին եւ ուր⁹ Հայրն, զամենայն ունելով, եւ նա գոյակից ըստ բնութեանն, զբարութիւնն, զուղղութիւնն, զսրբութիւնն, զկենդանութիւնն: Քանզի Հոգի քո բարի, ասէ, եւ դարձեալ՝ Հոգի ուղիղ¹⁰ (Հմգ. Սղ. ՃԽԲ. 10), եւ դարձեալ՝ Հոգի քո սուրբ (Հմգ. Սղ. Ծ. 12): Եւ առաքեայն՝ ակրէնք Հոգւոյն¹¹ կենդանութեան (Հմգ. Սղ. Ծ. 13): Այսոքիկ ոչինչ¹² ի վերայ ստացեալք նմա, եւ ոչ գկնի յեայ¹³ է, այլ որպէս անբաժանելի¹⁴ հրոյ ջեռուցանելն եւ յուսոյ պայծառացուցանելն¹⁵, նոյնպէս եւ

Հոգւոյն¹⁶ սրբելն եւ կենագործելն՝ [138ա] ուղղութիւն, սրբութիւն (Հմգ. Հմ. Բ. 2): Արդ, անդ եկաց Հոգին Սուրբ, անդ յերանելի բնութեանն¹⁷ ոչ ընդ բազումս թուեալ, այլ յերրորդութեանն տեսեալ¹⁸, միաբար պատմեալ¹⁹ ոչ շուրջ ըմբռնեալ բաղկացութեամբքն: Քանզի, զոր ակրինակ Հայր մի եւ Որդի մի, սոյնպէս²⁰ եւ մի²¹ Հոգին սուրբ: Իսկ սպասաւորականք²² Հոգիք ըստ իւրաքանչիւր²³ կարգի բազմութիւն երեւի դժուարաթուելի²⁴: Արդ, մի՛ խնդրէր ի ստացուածի²⁵ զառաւելն, քան զստացուած²⁶, եւ մի՛ ի վայր ածէր զսրբոցն²⁷ ընդ սրբեայսն: Նա յնու գհրեշտակս, յնու գհրեշտակայետս, սրբէ գաւրութիւնս²⁸, կենագործէ զամենայն: Սա²⁹ յամենայն ստացուածս³⁰ բաժանեալ եւ այլ յազգաբար յայլմէ ընկայեալ: Ամենեցուն զյիւրմէ³¹ շնորհս³² տայ

¹ D միտքն
² BCE գիմանալի
³ A ստացւածն C զստացւածն E ստացուածս
⁴ Z₁ եւ]
⁵ C գձուկն
⁶ A զաւղեսցուք CE զողեսցուք D լողեսցուք
⁷ AC ստացւածի
⁸ BZ₁ լիեալք
⁹ Z₁ ուր]
¹⁰ BCD ուղիղ] ուղեղ
¹¹ C Հոգոյն
¹² C այսոքիկ ոչինչ] այսուհետեւ ոչ ինքն
¹³ BZ₁ լիեալ
¹⁴ Z₁ անբաժանելի] + է
¹⁵ ABCDE եւ յուսոյ պայծառացուցանելն]

¹⁶ C Հոգոյն
¹⁷ E բնութիւնն
¹⁸ Z₁ տեսեալ] նստեալ
¹⁹ CE պատմել
²⁰ C սոյնպէս] այսպէս
²¹ C մի] + է
²² CD սպասաւորակն
²³ C իւրաքանչիւր] + իւրում E իւրաքանչիւրումն Z₁ իւրաքանչիւրում
²⁴ A դժուարաթուելի C դժուարթուելի
²⁵ A ստացւածի D ստացածի
²⁶ A զստացւած C զստացւածն
²⁷ A զսրբաւղն
²⁸ C զօրութիւնսն
²⁹ ABDE սա] + ի
³⁰ AC ստացւածս
³¹ C յիւրմէ Z₁ զիւրմէ
³² B շնորհն Z₁ շնորհսն

եւ ոչ ծախի¹ յընդունողսն², ³ այլ եւ ընդունողքն⁴ լցեալ լինին, եւ ինքն է աննուազ⁵: Զոր աւրինակ արեգական պայծառացուցանելով զմարմինս եւ զանազանաբար ի նոցանէ⁶ ըմբռնեալ⁷, ոչինչ նուազէ⁸ յընդունողացն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ ամենեցուն զառ ի յինքենէ շնորհն⁹ ընձեռելով անաղատելի մնա եւ անբաժանելի: Զամենեսեան լուսաւորէ առ¹⁰ յԱստուծոյ իմաստսն, շնչէ¹¹ ի մարգարէս¹², զաւրինադիրսն իմաստնացուցանէ, զաւր¹³ րացուցանէ զթագաւորս, զքահանայս¹³ կատարէ, հաստատէ զարդարս, պարկեշտացուցանէ¹⁴ զողջախոհս, գործէ շնորհս բժշկութեանց¹⁵, կենդանիս¹⁶ առնէ զմեռեալս, լուծանէ զկապեալս¹⁷, ուղղէ զի¹⁸ վայր¹⁹ անկեալս²⁰, որդեգրէ զաւտարացեալսն: Զայսոսիկ վերս-

¹ C ծախիցն
² A յնդունողսն
³ Z₁ այլ... լինին]
⁴ A ընդունաւղք
⁵ C աննուազ
⁶ Z₁ նոցանէ]
⁷ Z₁ ըմբռնեալսն
⁸ C նւազէ
⁹ C շնորհսն E զնորհն
¹⁰ ABCDZ₁ առ] +ի
¹¹ E շնչի
¹² CZ₁ մարգարէսն
¹³ E զքահանայսն
¹⁴ D պարկեշտացուցէ
¹⁵ Z₁ բժշկութեան
¹⁶ C կենդանի
¹⁷ C զկապելսն
¹⁸ A զի
¹⁹ BDZ₁ զի վայր] զվայր
²⁰ C զի վայր անկեալս] զվայրագնացելսն

տին ծննդեամբն²¹ գործէ: Եթէ մաքսաւոր ըմբռնէ (Հմմտ. Մ. 9) զհաւատացեալն՝ աւետարանիչ ցուցանէ, եթէ ի ձկնորս լինի՝ աստուածաբան կատարէ, եթէ զհալածիչ գտանէ ապաշաւեալ՝ առաքեալ հեթանոսաց գործէ, քարոզ հաւատոյն²², անաւթ ընտրութեան (Հմմտ. Գ. 15): Սովաւ տկարք զաւրանան, աղքատք ճոխանան, տգետք բանիւ իմաստնագոյն²³ են քան²⁴ զիմաստունս²⁵: Պաւղոս²⁶ տկար էր²⁷, այլ մերձաւորութեամբ Հոգւոյն վարչամակն նորա մարմնոյն բժշկութիւնս ընձեռէր կաւրաւտելոց (Հմմտ. Գ. 12): Պետրոս²⁸ եւ նա ի մարմնի տկարութեան²⁹ էր³⁰, այլ բնակեցելով ի նմա շնորհի Հոգւոյն անկեալ ի մարմնոյն³¹ ստուէրն³² ի բաց հալածէր զհիւանդութիւնս ախտացելոցն (Հմմտ. Գ. 15): Աղքատք Պետրոս եւ Յոհաննէս³³, քանզի³⁴ չունէին³⁵ ոսկի եւ արծաթ, այլ շնորհէին զառողջութիւն³⁶, քան զբազում ոսկի պատուականա-

²¹ C ծննդեմբ
²² C հաւատոցն
²³ C իմաստնագոյնք
²⁴ D են քանզի] քան
²⁵ DZ₁ զիմաստունս
²⁶ Z₁ Պաւղոս] + եւ նա
²⁷ Z₁ տկար էր] ի տկարութեան մարմնի էր
²⁸ C Պետրոս] Պողոս
²⁹ BDE տկարութեան] խոնարհութեան
³⁰ Z₁ այլ... էր]
³¹ C մարմնո
³² AC ստուէրն B + ի մարմնոյն
³³ C Յոհաննէս
³⁴ Z₁ քանզի] զի
³⁵ Z₁ չունէին] ոչ ունէին
³⁶ Z₁ զառողջութիւն] ողջութիւն

գոյն¹ (Հմմտ. Գործք. Գ. 6): Վասն զի ի² յոլովից առնլով ոսկի՝ կաղն³ եւ էր⁴ մուրացիկ, իսկ⁵ Պետրոս|139ա|է ընկալեալ զշնորհն՝ դադարեաց ի մուրանալոյն, վազելով իբրեւ գեղջերու ել՝ աւրհնելով զԱստուած: Ոչ գիտէր Յոհաննէս զաշխարհիս իմաստութիւն, այլ խաւսէր զբանս զաւրութեամբ Հոգւոյն, յորս եւ ոչ մի իմաստութիւն⁶ հայել⁷ կարէ: Սա եւ ի⁸ յերկնի⁹ եկաց եւ գերկիր ելից, եւ ամենայն ուրեք¹⁰ մերձ է, եւ ոչ ուրեք պարունակի: Բովանդակ¹¹ յիւրաքանչիւրում ընտանեաց¹² եւ բովանդակ է ընդ¹³ Աստուծոյ, ոչ սպասաւորաբար պաշտէ զպարգեւսն, այլ ինքնիշխանաբար բաժանէ զշնորհսն¹⁴: Քանզի «բաժանէ, ասէ, իւրաքանչիւր ումեք որպէս եւ կամի» (Լ. Կ. 11) եւ առաքի տնաւրինաբար: Իսկ մերձ յինի ինքն¹⁵ իշխանապէս: Զսա մերձ գոյ յանձինս մեր աղաւթեցուք, եւ ոչ զմիաժամանակ մեզ¹⁶ լքանել

շնորհաւք¹⁷ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ¹⁸ որում փառք¹⁶³ յաւիտեանս. ամէն¹⁹:

¹ A պատւականագոյն
² E ի]
³ E կաղն]
⁴ Z₁ էր
⁵ Z₁ իսկ] + ի
⁶ D իմաստութիւն] իմաստասիրութիւն Z₁ իմաստութեան
⁷ E հայել] խօսել Z₁ համեմատել
⁸ C ի]
⁹ C յերկինս
¹⁰ E յուրեք
¹¹ C բովանդակ] բօական
¹² C ընտանեաց] ընդանեկ Z₁ ընտանենայ
¹³ E ընդ] ընդդէմ
¹⁴ D զշնորհն
¹⁵ Z₁ ինքնն
¹⁶ C զմեզ

¹⁷ E շնորհիւ
¹⁸ C որում... ամէն]
¹⁹ E ամէն]

ԺԷ. «Ի ՍԿՁԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ՝»¹⁶⁴

(Յ՝ՎԸ. Ը. 1)

1 Ամենայն Աւետարանչացն² ձայն մեծաբուսագոյն³ այլոցն⁴ Հոգւոյն վարդապետութեան¹⁶⁵, վասն զի յայլս մարգարէիւք⁵, իսկ յԱւետարանսն ինքնադիմաբար խաւսեցաւ մեզ Տէրն: Եւ ինքն աւետարանական քարոզութեան⁶ մեծաձայնագոյն⁷, եւ ամենայն լսելոյ⁸ մեծն, եւ քան զամենայն միտս [139բ] բարձրագոյն⁹ բարբառեալ Յոհաննէս է, Որդի որոտման, զորոյ նախաշաւիղ աւետարանական գրոյն¹⁰ արդ ընթերցեալ լուաք¹¹: «Ի սկզբանէ էր բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր բանն» (Յ՝ՎԸ. Ը. 1): Զայսոսիկ գիտեմ զբազումս եւ արտաքոյ բանին ճշմարտութեան մեծամեծս խորհողացն¹² յիմաստութեանն աշխարհականի, եւ զարմացեալ¹³ եւ յինքնեանց կարգեցելոցն համարել իշխեցեալս: Քանզի գող է բանսարկուն, եւ զմերն արտաքս¹⁴ առասպելաբերացն¹⁶⁶ առ իւր տեսողսն: Արդ, եթէ մարմնական իմաստութիւնն

¹ C նորին ի սկզբանէ էր բանն DE նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի ի սկզբանէ
² BC աւետարանացն
³ E մեծաբուսագոյն] մեծաձայնագոյն
⁴ C Հոգոյն վարդապետութիւն
⁵ C մարգարէիւքն
⁶ C քարոզութեանն
⁷ D մեծաձայնագոյն
⁸ C լսելոց
⁹ C բարձրագոյնս E բարձրագոյն
¹⁰ D գրոյ
¹¹ C լաք
¹² AE խորհաւողացն C խորհողաց
¹³ B զարմացեալս C զարմացելս
¹⁴ BD առասպելաբերեաց C առասպելաբանեց

այնքան¹⁵ սքանչացաւ ընդ բանիցն զաւրութիւն¹⁶, զի՞նչ արասցուք մեք՝ աշակերտքս¹⁷ Հոգւոյն¹⁸. վարկպարազի՞ր լիցուք¹⁹ եւ փոքր ինչ զգոյսն ի նոսա զաւրութիւնս գոլ խորհեսցուք: Եւ ո՞ այնպէս զանգագայութիւնն²⁰ հիւանդանայ, որպէս թէ զայնպիսի գեղեցկութիւն մտաց եւ զխորութիւն աւանդից զանհասանելի ոչ զարմանալ, եւ փափագել նոցա ճշմարտութեան ըմբռնմանն: Բայց եւ ոչ հրաշանալ ընդ գեղեցիկս²¹ է²² դժուարին²³, այլ ի հաւաստի իմաստս²⁴ լինել սքանչացելոցն ապառում²⁵ եւ դժոխահասանելի: Վասն զի զարեգակն զայս զգալի²⁶ ոչ ոք է, որ ոչ մանաւանդ գովէ զմեծութիւն [140ա] սորա եւ զգեղեցկութիւն, եւ ճառագայթիցն²⁷ չափաւորութիւն, եւ զփայլեալ սորա զլոյսս²⁸ զստորինսս լուսաւորելով, բայց եթէ բռնաւորագոյն հակառակեսցէ բոլորակին ընդդէմ ածել զաչացն հայեցուածս²⁹, ոչ միայն ոչ տեսցէ զփութալին, այլ եւ զհաւաստութիւն տեսութեանս³⁰ ապականել³¹

¹⁵ C այնքան] + իմաստութիւնն
¹⁶ B զաւրութիւնն
¹⁷ BCDE աշակերտքս] աշակերտ քո
¹⁸ C Հոգոյն
¹⁹ BD լիցուք] լիցուք
²⁰ C զանգագայութիւն D զանգագայութիւնսն
²¹ C գեղեցիկ
²² C է]
²³ C դժուարին] A դժարին
²⁴ C իմաստն
²⁵ D այլապառումն
²⁶ C զգալի] սգալի
²⁷ C ճառագայթիցն
²⁸ C զլոյս
²⁹ A հայեցուածս C հայեցուածսն
³⁰ C տեսութեանս
³¹ B ապականեալ

զնասցէ: Այսպիսի ինչ թուի¹ եւ զմիտսն² արտանալ զհակառակողս հաւաստեալ առնել զառաջիկայ³ բանիս զքննութիւն: «Ի սկզբանէ էր բանն» (Յ․ՎԳ․ Ը․ 1): Ո՞ր իմասցի արժանապէս յաղագս ի սկզբանն: Ո՞ր բանից⁴ զաւրուութիւն գտցի համապատուաբար⁵ կարելով⁶ մերձ կացուցանել զմիտսն: Հանդերձեալ աւանդել մեզ յաղագս աստուածաբանութեան Որդւոյն⁷ Աստուծոյ եւ ոչ⁸ մի այլ սկիզբն⁹ բանին¹⁰, քան եթէ զսկիզբնն բոլորեցուն ետ: Գիտէր զի վերայ բուսանելոցն¹¹ կարծեալք¹² Միածնին Հոգին սուրբ, յառաջագոյն գիտէր զհանդերձեալսն¹³ բերել¹⁴ խաբեութիւնս, ի կործանումն լսողացն¹⁵ զինքեանք¹⁶ մենքենայս: Զի, եթէ ծնաւ¹⁷, ոչ էր, եւ նախ քան զծնանիլն ոչ էր: Եւ յոչ էից զգոյութիւնն¹⁸ էառ: Քանզի յայտոսիկ խաւսին լեզուք սրեալք եւ¹⁹ հաւանաբանութեամբք¹⁶⁷ առաւել քան զամենայն սուր երկբերան: Արդ,

զի մի ումեք²⁰ խաւսեսցի այսոքիկ, յառաջագոյն առնելով |140բ| Հոգին սուրբ ի ձեռն Աւետարանիս²¹: «Ի սկզբանէ²², ասէ, էր բանն» (Յ․ՎԳ․ Ը․ 1): Եթէ կալցիս զայս ձայն՝ ոչ երբէք ախտ դժնդակ²³ ի չար արուեստիցն²⁴ լինիցի քեզ: Եթէ, ասէ նա, եթէ ծնաւ՝ ոչ էր, դու ասա՝ «ի սկզբանէ²⁵ էր» (Յ․ՎԳ․ Ը․ 1): Այլ, ասէ նախ քան զծնանիլն²⁶ զիս²⁷ զդէր: Դու մի՛ թողուր զքոյն, մի լքցես²⁷ զսկզբանն²⁸: Զգագաթանն²⁹ ոչ ըմբռնի: Մի՛ խաբեսցէ որ զքեզ բազմանչան բանիւ³⁰: Քանզի բազումք³¹ սկզբունք³² բազում իրաց ըստ կենցաղոյս այսորիկ են, այլ մի է սկիզբն³³ ի վերայ ամենեցուն յառաջագոյն: «Սկիզբն³⁴ ճանապարհի բարոյ³⁵» (Ը․ՎԳ․ Ժ․Գ․ 5) ասաց Առակն: Այլ ճանապարհի սկիզբն³⁶ է առաջին շարժումն, ուստի սկսանիմք ի զնացսն, գորոյ եւ զնախկինն կարողութիւն էտանել: Եւ «սկիզբն³⁷ խրատու երկիր³⁸ Տեառն» (ՀմԳ․ ՍԳ․ ՆԺ․ 10): է եւ

1 C թւի
 2 C արտանալ զհակառակողսն հաւաստեալ
 3 C զառաջիկայ] + ի
 4 D բանիցն
 5 AC համապատուաբար
 6 D կարելով] կալելով
 7 BC որդոյն
 8 E մի այլ] միայն
 9 C սկիսբն E զսկիզբն
 10 C բանի
 11 E բուսանելոյն
 12 BD կարծեալք
 13 B զհանդերձեալ
 14 BE բերել
 15 A լսողացն
 16 BD զինքեանք
 17 B ծնեալ
 18 C զգոյութիւնն] զգոյացութիւնն
 19 C եւ]

20 C ումեք] երբէք
 21 C աւետարանիս
 22 C սկզբանն
 23 C դժնդակք D դժբնդակ
 24 C արուեստիցն
 25 C սկզբանն D զբանն
 26 C զծնանիլն
 27 C լքցես] + զիս բանն
 28 C սկսբան D զսկզբան E սկզբանն
 29 CDE գագաթն
 30 C բանիւք
 31 C բազում
 32 C սկզբունք
 33 C սկիսբն
 34 C սկիսբն
 35 C բարո
 36 C սկիսբն
 37 C սկիսբն
 38 C երկիր

սորա¹ սկզբանս այլ առաջի կացեալ որոյ արուեստիցն² վերստին առնլով³ սկիզբն⁴ է յարմարութիւնն⁵: Եւ տարր է իմաստութեանն երկիւղ⁶ Տեառնն, այլ այսորիկ⁷ ի սկզբանէ մինչ⁸ երիցագոյն, հաստատութիւն Ոգւոյն⁹, ոչ եւս իմաստնացելոյ¹⁰ եւ զերկիւղ¹¹ Աստուծոյ առելոյ¹²: Սկզբունք¹³ ասին¹⁴ եւ քաղաքական զաւրութիւնք, արժանաւորութեանցն առաւելութիւնք: Բայց այսոքիկ¹⁵ սկզբունք, ոմանց զսկզբունք¹⁶, քանզի իւրաքանչիւր ոք¹⁷ սկիզբն գծի նշանն¹⁸: Եւ սկիզբն¹⁹ վերերեւութեան գիծն, եւ սկիզբն²⁰ մարմնոյ վերերեւութիւնն, |141ա| եւ ըստ շարագրութեան²¹ բանին սկզբունք²² տառերք²³:

2 Այլ եւ ոչ այնպէս սկիզբն²⁴: Քանզի ո՛չ ընդ ումեք կապի, ո՛չ

1 C սորա] + ի
 2 AC արուեստիցն D յարուեստիցն
 3 CD առնուլ
 4 C զսկիսբն D զսկիզբն
 5 C յարմարութիւն
 6 C երկեղ
 7 C այսորիկ] այսոքիկ
 8 C մինչ] ինձ E մի ինչ
 9 BD ոգւոյս C ոգոց E ոգւոցն
 10 CE իմաստնացելոց
 11 C զերկեղ
 12 CE առելոց
 13 C սկսբունք
 14 C ասին
 15 D այսոքիկ] այսորիկ
 16 C սկսբունք E սկզբունք
 17 C ոքք]
 18 D նշանն] + է
 19 C սկիսբն
 20 C սկիսբն
 21 ABE շարագրութեան] շարագրութեան
 22 C սկսբունք
 23 CDE տարերք
 24 C սկիսբն

ումեք ծառայէ, ո՛չ ընդ ումեք տեսանի²⁵, այլ ազատ է, անտէր՝ լուծեալ առ այլ ունակութեան²⁶, անվերադիր մտածութիւն՝ ըստ որ²⁷ ոչ է ի վեր ելանել խորհրդովք, զորոյ ոչ է գտանել²⁸ զնախկինն: Քանզի²⁹ եթէ հակառակեսցես³⁰ երեւմամբ խորհրդոց³¹ գանցանել՝ զսկզբամբն գտցես նախքան գամենայն խորհուրդս³²: Թող զքո ընթանալ զմիտսդ, որքան կամեսցի եւ ձգեսցիս ի վեր³³, եւ ապա գտցես զքեզ բիւրս³⁴ մոլորեալս, ի բազում ունայնս³⁵ գնացեալ: Եւ դարձեալ վերստին եկեալ առ ինքն, յաղագս ոչ նկարելոյ³⁶ իւր զսկիզբն³⁷ առնել³⁸: Վասն զի իմանալոյն³⁹ արտաքոյ յոլովս⁴⁰ գտանի սկիզբն: Արդ, «ի սկզբսնէ էր բանն» (Յ՝ՎԿ. Ե. 1): Ո՛վ սքանչելոյս: Զիհ՛րդ իրերաց համապատուաբար⁴¹ ձայնքս⁴² լծակցեցան: Քանզի էրն, զոյգ կարէ, ի սկզբանս զոր: Ո՛ւր հայհոյիչն, ո՛ւր քրիս-

25 C տեսանէ
 26 C ունակութիւն
 27 C որ] որում
 28 C գտանել] + խորհրդովք
 29 BE քան
 30 E հակառակիցես
 31 CD խորհրդոց E խորհրդոյ
 32 C խորհուրդ E զխորհուրդս
 33 E վեր] + գոլ
 34 C բիւր
 35 CD ունայնս] ընդունայնս E յունայնս
 36 CE նկարելոյ] + ի ներքո
 37 D սկիզբն
 38 C առնել
 39 C իմանալոյ
 40 D յոլովագոյն
 41 C համապատուաբար
 42 B ձայնքն

տոսամարտ լեզուն¹, որ ասէ² էր³ երբեմն, յորժամ ոչ էր: Լո՛ւր Աւետարանին՝ «ի սկզբանէ էր բանն» (Յ․ՎԺ․ Ը․ 1): Իսկ եթէ ի սկզբան էր՝ ե՞րբ ոչ էր: Ընդ ամպարչտութիւնն նոցա հառաչեցից, եթէ յանուսումնութենէ⁴ նոցա զարչեցայց: Այլ նախ քան զծնանիլն՝ ոչ էր⁵: Գիտիցե՞ս արդեաւք⁶ երբ [141բ] ծնաւ, զի⁷ եւ զնա խնկարասցես⁸ ի վերայ բերել ժամանակին⁹: Վասն զի՝ նախ¹⁰ ժամանակական է ձայն, այլայլոյ ի վերայ եղեալ հնութեամբ, իսկ ժամանակին¹¹ արարիչ զիա՞րդ բարեբանագոյն ժամանակաց¹² ժամանեցայց¹³ ասացուածոց¹⁴ ի ներքոյ կայով ունել գլինելութիւնն: Արդ, եթէ էրն, ոչ ի բաց կացցէ էր եւ ոչ մի ինչ¹⁵ մուտ տայցես չար¹⁶ հայհոյութենէն: Այլ գոր աւրինակ, որք նաւենն, յորժամ ի վերայ երկուց շարժիցին¹⁷ խարսխաց, արհամարհեն գայիսն, սոյնպէս եւ դու զչարս զայս խռովութիւն ի չար

¹⁸ հոգւոյն լեալ ի կենցաղումս, եւ սասանողաց¹⁹ զբազմաց հաւատն ծիծաղեսցիս, եթէ զգուշութեամբ²⁰ բանիցս այսոցիկ զոգիդ ունիցիս յարմարեալ²¹:

3 Արդ, վասն զի խնդրեն միտք մեր զինչ էր ի սկզբան: Ասէ՛ էր բանն: Ո՞ր բանն, մարդկայի՞ն բանս, այլ՝ հրեշտակա՞ց բանն: Քանզի զեկոյց մեզ Առաքեալն²², որպէս թէ²³ հրեշտակաց²⁴ յատուկ ունել լեզու, ասելովն՝ «Եթէ զլեզուս մարդկան խաւսիցիմ եւ զհրեշտակաց» (Ը․ Վր՞Թ․ ԺԳ․ 1): Այլ եւ բանի կրկին է տեսակ²⁵: Քանզի ոմն է, որ ձայնիւ յառաջ բերեալ լինի, այն, որ զկնի յառաջն գայոյ յաւղդ կորնչի, իսկ միւսն է ի ներքս եղեայ գոյացեայ ի մերում սիրտս. ոմն իմացական եւ ոմն արուեստաւոր²⁶: Տե՛ս մի երբե՛ք խաբեսցէ [142ա] զքեզ համանունն²⁷ ձայն²⁸: Քանզի զիա՞րդ էր ի սկզբանն²⁹ մարդկային բանս, մարդոյն խոնարհագոյն ուրեմն ընկայեալ³⁰ գլինելութեանն: Նախ քան զմարդն՝ գազանք, սողունք, անասունք եւ ա-

¹ D լեզու
² CDE ասէր
³ C էր]
⁴ D յանուսումնութենէն
⁵ AE էր] է
⁶ C արդօք
⁷ C զի]
⁸ BC խնկարեսցես E նկարեսցես
⁹ DE ժամանակին] ժամանակ էին
¹⁰ C նախն
¹¹ CE զժամանակին D ժամանակեցայց
¹² E ժամանակաց]
¹³ BD ժամանեցայց] C ժամանակեայց
¹⁴ A ասացուածոց C ասացւածոյ
¹⁵ A մուտ տայցես] մուտայցես
¹⁶ C չար]
¹⁷ C շարժիցեն

¹⁸ C հոգոցն լիել
¹⁹ A սասանաւղաց
²⁰ B զգոյշութեամբ
²¹ C յարմարել
²² BD առաքեալ C առաքել
²³ C թէ] + եւ
²⁴ ABDE զհրեշտակաց] + մտածութիւն
²⁵ C տեսակն
²⁶ C արուեստաւոր
²⁷ C համանուն
²⁸ C ձայնն
²⁹ BD զբան C սկզբան E սկզբանն
³⁰ E ընկայեալ] + զսկիզբն

մենայն, որք¹ միանգամ ցամաքա-
 յինք եւ ջրայինք, թռչունք երկ-
 նի², աստեղք, արեգակն, լուսին,
 բոյսք, սերմանք¹⁶⁸, ծով, երկիրն:
 Արդ, ոչ եւս ի սկզբան էր մարդ-
 կային բանս³, այլ եւ ոչ հրեշտա-
 կացն⁴: Վասն զի ամենայն ստա-
 ցուած⁵ խոնարհագոյն քան զյա-
 ւրտեանսն⁶ է⁷, զսկիզբն⁸ լինելու-
 թեանն առնլով ի ստացողէն⁹: Իսկ
 որ ի սրտի բանն, եւ նա քան զիւ-
 րաքանչիւր ոք յիմանալեացն է
 կրտսերագոյն¹⁰: Բայց լսելի է
 զբանսն աստուածավայելչաբար,
 քանզի յաղագս Միածնին խաւսե-
 լով քեզ, Բան ասաց զնա: Զոր աւ-
 րինակ ե՛լ լոյս, ե՛լ յետ փոքր¹¹
 ինչ¹², ասէ կեանս, ե՛լ յարութիւն,
 ե՛լ ոչ լոյս լսելով՝ ի զգալիս¹³
 յայս¹⁴ եւ աչաց տեսանելի ի խո-
 նարհ բերես, եւ ոչ կեանս լուեալ¹⁵
 զհասարակաց զայս իմանաս, զոր
 եւ անբանք կեան: Այսպէս եւ բան
 լսելով¹⁶ պահեա՛, մի երբէք տկա-
 րութեամբ մտացդ ի ներքոյ¹⁷ անկ-

ցիս: Քննեա՛ զիմաստսն նախ քան
 զասացեալս¹⁸: Ընդէ՞ր բան: Զի ա-
 նախտաբար ծնաւ: Ընդէ՞ր բան:
 Զի ցուցցի¹⁹ թէ ի մտաց [142բ] յա-
 ռաջ եկն: Ընդէ՞ր բան: Զի պատ-
 կեր ծնողին²⁰ բաւական²¹ յին-
 քեանք²² ցուցանելով զծնողն, ո-
 չինչ անդուստ ի բաց բաժանեալ²³
 եւ կատարեալ գոյանալով ըստ²⁴
 ինքեան²⁵, քանզի որպէս մեր բանս,
 զբոլոր մեր կերպարան է զմիտսն:
 Զի զորս²⁶ ի սրտին իմանամք,
 զայնոսիկ բանիւ²⁷ յառաջ բերեմք
 եւ է ի սրտին իմաստից պատկեր
 խաւսեցեալսն: ²⁸Վասն զի յաւե-
 լորդացն սրտին բանն բերեալ լի-
 նի: Եւ է ի սիրտս մեր իբրեւ աղ-
 բիւր ինչ, իսկ յառաջ բերել²⁹
 բանն իբրեւ վտակ ինչ³⁰ յաղբերէ³¹
 յայնմանէ հոսեալ: Եւ այնքան³² ի
 բաց հոսեալ, որքան նախաբարն¹⁶⁹
 բերեալն է եւ որպիսի ծածկեալն
 է, նոյնպէս³³ եւ երեւեալն³⁴: Արդ
 բան ասաց, զի անախտ³⁵ քեզ

1 C որք] որ
 2 C երկնից ABE + եւ
 3 C բանն
 4 C հրշտակաց
 5 C ստացուածք
 6 C զյաւրտեանս
 7 C է]
 8 C սկիզբն
 9 A ստացաւդէն
 10 D կրտսերագոյն
 11 C փոքու
 12 C ինչ]
 13 C զգալիս] սգալիս E զգալւոյ
 14 D յայս] յայտ E այս
 15 C լուեալ
 16 D լսելով] ասելով
 17 E ներքոս

18 C գասացելսն
 19 E ցուցցէ
 20 A ծնաւողին
 21 C բաւական] բօրնդակ D բովանդակ
 22 D յինքեան
 23 D բաժանեալ] մերժեալ
 24 C ըստ]
 25 C յինքեն
 26 D զոր
 27 D բանիւն
 28 E վասն զի] քանզի
 29 DE բերեալ
 30 C ինչ] իմն
 31 B յաղբերէ C յաղբիւրէ
 32 D այնքան] այն
 33 C նոյնպիսի
 34 C երեւելն
 35 B գանախտ

զծնունդն ի¹ Հաւրէ² մերձ կացուցէ եւ զկատարեալն³ գործ⁴ քեզ զՈրդւոյն⁵ աստուածաբանեսցէ, եւ զանժամանակ Որդւոյ⁶ միաւորութիւն⁷ առ Հայր⁸ ի ձեռն այսոցիկ ցուցցէ: Քանզի եւ մեր բանս մտաց է ծնունդ⁹ անախտաբար ծնեալ, զի եւ¹⁰ ո՛չ¹¹ հատանի, ո՛չ բաժանի եւ ո՛չ ցնդի, այլ մնալով¹² բանն¹³ միտք¹⁴ յիւրում գոյացութեանն բովանդակէ¹⁵ զբանն¹⁶ եւ կատարեալ ի ներքոյ¹⁷ 18 կացուցանելով, եւ յառաջ եկեալ բանս՝ զամենայն ծնողին¹⁹ զիմաստն յինքեան պարունակէ: Արդ, որքան բարեպաշտ|143ա|ազոյն²⁰, այսքան առեալ²¹ ի Միածին²² աստուածաբանութիւն ի բանիս ձայնէ, որպէս զի²³ բաց երեւեայն գտցես անյարմարագոյն յեայ, յայնցանէ հրաժարեա՛ եւ զանց արա զմերե-

նայիւք ամենեքումք²⁴: «Ի սկզբանէ էր բանն» (Յ՝ՎՆ. Ը. 1): Եւ եթէ ի սկզբան էր՝ Որդին եմուտ ի քեզ արդեալք²⁵ ախտ ինչ մտածութիւն²⁶: Վասն զի ի մէնջ ծնեալն ժամանակաւ ծնանի, յաղագս այսորիկ յառաջագոյն առեալ՝ բան ասաց, նախ ուղղելով զանվայելուչ կարծիսն, զի զքո զոգիդ անվրէպ ապրեցուցէ²⁷:

4 «Եւ բանն էր առ Աստուած»: Դարձեայ զէրն²⁸ յաղագս հայհոյչացն, թէ ոչ էր: Ո՞ւր էր բանն: Ոչ ի տեղոջ²⁹, քանզի ոչ պարունակի շուրջ գրեայ: Այլ ո՞ւր էր: «Առ Աստուած էր»: Զի եւ ոչ Հայր ի տեղոջ³⁰ եւ ոչ Որդի ի պարունակութեան իմիք եւ շուրջ գրեցելումն³¹ խոստովանեալ ըմբռնելով: Այլ անբաւ Հայր, անբաւ Որդի: Զամենայն, որ զինչ³² իմասցիս, ուր եւ երթիցես ոգւովդ քով, Աստուծոյն գտցես լցեալ, ամենայն ուրեք ձգեալ գտցես³³ զՈրդւոյ գոյացութիւն: «Եւ բանն էր առ Աստուած»: Աքանչացիւր ընդ հաւաստութիւն³⁴ իւրաքանչիւր ձայնիս, ³⁵ ոչ ասաց թէ³⁶ յաշխարհի էր

1 AB ի]
 2 E հաւրէ]
 3 C զկատարեալն] զկատարել
 4 CD գործն
 5 C գորդոյն
 6 BD գորդւոյ C գորդո
 7 CD միաւորութիւնն C + որ
 8 C հաւր
 9 C ծնելն
 10 C եւ] եւս
 11 C ոչ]
 12 C մնալով] նովին
 13 E բանն] C + է
 14 C միտք] մի E միտքն
 15 A բաւանդակէ
 16 C զբանն] զբարի
 17 C ներքոյ] նմին
 18 C կացուցանելով... բանս] քո կենդանական գոացութիւն
 19 A ծնաւորին
 20 CE բարեպաշտագոյն] + է
 21 BCD առեալ] առ ի
 22 CD միածին
 23 C զի] + ի

24 CE ամենեքումք
 25 C արդօք
 26 C մտածութեան
 27 C ապրեցուցանէ
 28 C զէրն] + դարձեալ
 29 CE տեղոջ
 30 C տեղոջ
 31 D զգրեցելումն
 32 CD ինչ
 33 C գորդո գոյացութիւնն
 34 C հաւաստութիւն] հօտարմութիւն
 35 AB ոչ ասաց թէ յաշխարհի էր բանն այլ առ աստուծոյ զի յառանձնաւորութեանն գոացուցիւն մերձ կացուցէ]
 36 D թէ]

բանն, այլ առ Աստուծոյ, զի¹ զա-
ռանձնաւորութեանն գոյացու-
թիւն մեր կացուցէ: Ոչ ասաց՝
յԱստուած ում, զի մի պատճառս
տայցէ խառնակութեան գոյացու-
թեանն: Քանզի չար է եւ հայհո-
յութիւն² զանկանելն զամենայն
ձեռնարկողաց³, [143բ| եւ մի ի
ներքոյ կացուցելոցն⁴ ասողաց⁵,
զչայր եւ գորդի, եւ գսուրբ Հո-
գին անուանս⁶ զանագանս միում
իրի համբաւելի⁷: Չար ամպարչտու-
թիւն եւ փախչելի ոչ ինչ նուազ⁸
աննման գոլ աստ գոյացութեան
գորդին Աստուծոյ¹⁷⁰ ⁹եւ Հաւր
հայհոյցացն: «Եւ բանն էր առ
Աստուած»: Եւ ապա վարելով
¹⁰բանին ձայնիւ առ ի մերձակա-
յութիւն ըստ լինելութեանն ա-
նախտութեան, արագագոյն զի
բանէն վնաս լեալ մեզ մխիթա-
րեաց: Եւ որպէս յափշտակելով¹¹
զնա¹² զրպարտութեամբ¹³ հայհոյ-
չացն. զի¹⁴ նչ է¹⁴, ասէք¹⁵, բանն:
«Աստուած էր բանն»: Մի ինչ ա-
րուեստաբանեսցես¹⁶ զանագանու-

¹ D զի]
² C հայհոյութիւն] այնգոյացութիւն
³ CE ձեռնարկողացն
⁴ C կացելոցն
⁵ A ասաւղաց
⁶ AC անւանս
⁷ C համբաւելս
⁸ C նւազ
⁹ ABCD եւ Հաւր
¹⁰ C ձայնիւ բանին
¹¹ A յապշտակելով C յաբշտակելով
¹² C զնա] + նւաստութեամբ
¹³ C զրպարտութեան
¹⁴ ABCD է]
¹⁵ BE ասէ
¹⁶ A արւեստաբանեսցես

թիւնս ինչ բանից, մի՛ ի քուժմէ ի
չար արուեստիցդ¹⁷ շփեսցես¹⁸ հայ-
հոյութիւն ընդ¹⁹ վարդապետական
Հոգւոյն: Ունիս²⁰ զհրամանն, հնա-
զանդեցի՛ր Տեառնն: «Աստուած էր
բանն, սա էր ի սկզբանն առ Աս-
տուած»: Դարձեալ վերստին գլխա-
ւորէ սուղ բանիւք զամենայն
զիւր աստուածաբանութիւնն, յա-
ղագս Միածնին մեզ Աւետարա-
նիչս ականդեաց այսպէս. ո՞ սա,
Բանս Աստուած: Եւ իբր ի քեզ
ուղղեաց զիւր միտսն, որպէս
տպաւորելով ի քում ոգւոջդ²¹
վարդապետութեամբն զանգիտա-
ցեայն²² եւ ընտանեցոյց զԲանն
զՔրիստոս ի սրտի քում՝ սա ասէ:
Ո՞ սա: Մի՛ արտաքոյ հայեսցիս,
վարդապետական ձայնիս զցու-
ցեայն²³ քեզ շուրջ դիտելով²⁴, այլ
մոլ[144ա|տ ի գաղտնիս քո Հոգ-
ւոյդ²⁵ եւ, որպէս վարդապետե-
ցարն զԱստուած²⁶ զի²⁷ ի²⁸ սկզբանն
զէն²⁹, ³⁰իբր³¹ զԲան յառաջ եկեալ,
առ Աստուած զէն, զնա ճանաչե-
լով սքանչասցիս, երկիր պազցես
քում Տեառնն, զքո վարդապետու-

¹⁷ AC արւեստիցդ
¹⁸ CD շփեսցես] շփոթեսցես + ինչ
¹⁹ C վարդապետութիւն հոգոյն
²⁰ ABE ունի
²¹ C ոգոջդ
²² C զանգիտացել
²³ E զցուցեայն] զրուցեայն
²⁴ C դիտելով] դիտելով
²⁵ C հոգոյդ
²⁶ E զաստուած]
²⁷ D զի]
²⁸ C ի]
²⁹ C զէնն
³⁰ E իբր... աստուած]
³¹ CD իբրեւ

թեան զգենյով¹ զծանաւթութիւն, զի սա ի ²սկզբան էր: Այս է միշտ առ Աստուած առ իւր Հաւրն: Զայսոսիկ ինձ գտող ձայնս ողջ պահեցէք³ իբրեւ զկնիք ի յիշատակս ձեր նշանակելով: Այսոքիկ⁴ անպատուելի⁵ եղիցին պարիսպ առ դրժողացն⁶ ընթացս. սոքին պահպանութիւն են ոգւոց⁷ փրկութիւն առաջի⁸ նոցա: Եթէ ոք քեզ եկեալ ասէ՝ ո՞չ արդեաւք⁹ ծնաւ¹⁰, իբրեւ ի դիւաց ձայնէ ի բաց դարձցիս ի հակառակ փառաց Միածնին Հայհոյութենէ: Իսկ դու վերստին երթիցես առ Աւետարանացն ձայն: «Ի սկզբանէ էր բանն,¹¹ եւ բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր բանն¹²» (Յ․ՎԸ․ Լ․ 1): Սա էր ի սկզբանէ¹³ առ Աստուած (Հմմտ. Յ․ՎԸ․ Լ․ 2): Եւ չորիցս ասացես¹⁴ զէրն եւ խափանեսցես զնոցա զոչ էրն: Այսպէս¹⁵ անշարժք¹⁶ եղիցին հիմունք հաւատոյն¹⁷: Այսոքիկ ի վերայ շինեսցուք տուն, Աստուծոյ տալով եւ զմնացեալսն: Քան-

զի ոչ է¹⁸ կարելի յաղագս ամենեցուն միանգամայն մեզ խաւսել, մի արդեաւք¹⁹ անչափութեամբ²⁰ բանին անպիտանս առնիցեմք²¹ ձեզ գա|144բ|շխատասիրաբար ընտրեայսն: Վասն զի տկարանայով ամենեքումք²² ի միասին²³ շուրջ ըմբռնեալ նմանապէս խստանայ յորովայնի, որ առաւելութեամբ²⁴ յազեցութեանն²⁵ ի հալումն ածել, զի ներքս²⁶ ամբարեալն²⁷ ոչ կարաց²⁸: Արդ մաղթեմ ի ձեր քաղցրանալի ճաշակելիսդ, եւ ես կացից ձեզ պատրաստ առ²⁹ յիմաստս³⁰ ասացելոցն³¹ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր³², որում³³ փառք¹⁷¹ յաւիտեանս³⁴ յաւիտենից³⁵. ամէն³⁶:

1 C սգենյով
 2 C սկզբանէ
 3 CD պահեցէք
 4 D այսոքիկ] այսոսիկ
 5 ABDE անպատուելի] անպատկառելի E անպտուելի
 6 C դրժողացն] դաւողացն
 7 C ոգոց
 8 E առաջի] + անկեալ
 9 C արդօք
 10 B ծնեաւ
 11 E եւ բանն... բանն]
 12 D բան
 13 D սկզբանէ
 14 C ասացես] աստ տեսցես
 15 E այսպէս] սոյնպէս
 16 D անշարժ
 17 C հաւատոց

18 ABDE է]
 19 C արդեաւք
 20 E անչափութիւն
 21 C առնեմք
 22 C ամենեքումք
 23 ABDE միասին] մասին
 24 C առաւելու
 25 C յազեցութեամբն
 26 E ներքսն
 27 BCDE ամբարեալն
 28 C կարացել DE կարացեալ
 29 ABCD առ] + ի
 30 E իմաստս
 31 C ասացելոցս
 32 D մերում
 33 D որում]
 34 B յաւեանս
 35 BDE յաւիտենից]
 36 D ամէն]

ԺԸ. ¹⁷²Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿՁԻՆ¹

1 Քրիստոսի ծնունդն իւրականն եւ առաջինն, եւ յստակ իւրոյ աստուածութեանն լռութեամբ պատուեսցի, եւ մանաւանդ² մտածութեամբ³ մերովք⁴ ոչ խնդրել զայնպիսիսն եւ ոչ բազմախոյզ⁵ լինելով⁶ պատուիրեսցուք⁷: Քանզի ուր ոչ ժամանակ⁸ եւ ոչ յաւիտեան միջնորդեաց, եւ⁹ ո՛չ աւրինակ¹⁰ ինչ¹¹ ի վերայ իմանի, ¹²ո՛չ հայեցող ոք առննթեր եւ ո՛չ առաջնորդ, զիա՞րդ երեւութասցին¹³ միտք, եւ կամ զիա՞րդ սպասաւորեսցէ մտախոհութեանցն¹⁴ լեզու: Զի Հայր էր, եւ Որդի ծնաւ: ¹⁵Եւ մի՛ երբէք ասացես, թէ ուսիր

հարցմամբ, եւ մի՛ երբէք խնդրեսցես¹⁶ զզիարդն¹⁷: Անկարելի է¹⁸ եւ¹⁹ պատասխանին²⁰: Քանզի երբն ժամանակական²¹ է, իւսկ զիարդն՝ ոտնառական¹⁷³ ի մարմնական յեղանակս²²: Եւ ունիմ²³ ասել ի Գրոց, եթէ որպէս ճաճանչ փառաց, եւ որպէս պատկեր ինչ²⁴ ի |145ա| նախատպէն²⁵ (Հմբ. Եբբ. Ը. 3): Բայց վասն զի ոչ չաչարեցուցանէ խորհուրդը²⁶ զքո բազմախուզութիւնդ²⁷ այսպիսեաւք²⁸ պատասխանատրութեան²⁹ բանիւք ի յաճախութիւն³⁰ փառացն ապաւինիմ³¹ եւ խոստովանիմ³² անճառելի³³ գոլ խորհրդովք եւ անասելի մարդկային բայիւք³⁴ զյեղանակ աստուածային ծննդեանն: Մի՛ ասէր, թէ ծնաւ, ապա³⁵ ոչ էր

¹ C նորին ի ծնունդ Փրկչին D նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի ծնունդ Փրկչին EM սրբոյն Բարսղի արքեպիսկոպոսի Կեսարու կապաղովկեցոց ասացեալ ի ծնունդ Քրիստոսի LNT Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու կապաթովկացւոց ասացեալ ի ծնունդն Քրիստոսի Z₂ Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի կապաղովկացւոց ասացեալ ի ծնունդն Քրիստոսի Z₃ նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի ի ծնունդ Փրկչին L + եւ վասն անօրէն հայհոյութեանն արիոսի
² Z₂ մանաւանդ]
³ Z₃ մտածութեանց
⁴ LT մերով Z₃ մերոց
⁵ L բազմախորհ
⁶ CMNTZ₂Z₃ լինել
⁷ ACL պատուիրեսցուք
⁸ EZNZ₂ ժամանակ] օրինակ
⁹ Z₂ եւ]
¹⁰ ABCDE աւրինակ] ժամանակ
¹¹ LN ինչ]
¹² ABCDZ₂ ոչ հայեցող (LN հայցաւդ) ոք առննթեր եւ ոչ առաջնորդ]
¹³ E երեւութասցին] երեւեսցին
¹⁴ ENT մտախոհութեամբ
¹⁵ ABCDEZ₂ եւ մի երբէք (Z₂ զերբն) ասացես թէ ուսիր (Z₃ ուսցիս) հարցմամբ]

¹⁶ LN խնդրեսցես] ասացես
¹⁷ LNT զզիարդն] + կամ խնդրեսցես
¹⁸ E է]
¹⁹ ET եւ]
²⁰ E պատասխանի
²¹ ACEZ₂ ժամանակական] ժամանակ
²² Z₂ յեղանակս
²³ LNT ունիմ] կամիմ
²⁴ N ինչ]
²⁵ CZ₂ նախատպէ
²⁶ ABCDEZ₂ խորհուրդս LT խորհուրդս
²⁷ N բազմախուզութիւնդ] բազմորոնութիւնդ
²⁸ C այսպիսեաւք
²⁹ CL պատասխանատրութեամբ N պատասխանատրութեան Z₂ պատասխանատրութեամբք
³⁰ N յաճախութիւն] յանճախութիւն Z₃ յանճառութիւն
³¹ BLZ₂ ապաւինիմք
³² CMZ₂ խոստովանիմք
³³ BCD անճառելի] անհանճարելի
³⁴ ACLN բայիւք E բանիցդ Z₂ բանիւք
³⁵ LTN ապա]

եւ¹ մի² յափշտակէր չարագործութեամբ³ բանից անբարեփորձ⁴ մտածութեանց⁵ զառ ի յաստեցս ակրինակաց՝ քակտելով⁶ զճշմարտութիւնն եւ աղտեղացուցանելով⁷ զաստուածաբանութիւնն: Ծնաւ⁸ ասացի⁹, որպէս զի¹⁰ զսկիզբն¹¹ նորա եւ զպատճառն¹² ցուցից, եւ ոչ եթէ որպէս ժամանակաց վերջին գոլ զՄիածինն¹³ յանդիմանեցից: Բայց քո¹⁴ մի՛ ընդունայնակոխեսցեն¹⁵ միտքդ¹⁶, գերազանցելով¹⁷ յաւիտեանսն, որպէս երիցագոյնսն քան զՈրդի, յոչ գոյսն եւ յոչ եղեալսն: Քանզի¹⁸ զիա՞րդ կարեն երիցագոյն գոլ արարածք, քան զարարիչն իւրեանց: Քանզի ոչ¹⁹ մոռացայ յորմէ փախեայ, եւ յայս իւրովաբար եկեայ²⁰ ածայ²¹ ի²² բանիս²³ Հետեւողութենէ²⁴:

¹ T եւ] մի
² ABCDE մի]
³ LN չարագործութեան
⁴ E անբարեփորձութեամբք
⁵ E մտածութեանց] CZ₂ մտածութեանց
⁶ LZ₂ քակտելով] քակելով
⁷ C աղտեղացուցանելով
⁸ B ծնեաւ
⁹ NT ասի
¹⁰ ABCDE զսկիզբն նորա եւ զպատճառն ցուցից]
¹¹ E սկիզբն
¹² E զպատճառն NT գոլ նորա եւ պատճառ
¹³ DE զմիածինն] զմէնածինն
¹⁴ E քո]
¹⁵ E ընդունայնակոխեսցին
¹⁶ ABCD միտքդ] Z₂Z₃ միտք
¹⁷ N գերազանցելով] +ի
¹⁸ N քանզի] զի
¹⁹ Z₃ ոչ]
²⁰ LNT եկի
²¹ NT ածայ]
²² E ի]
²³ D զբանն LNT բանից
²⁴ L Հետեւողութեան

Արդ, թողցուք զբանս²⁵, որք²⁶ յաղագս մշտնջենաւորին այնորիկ եւ անճառելի ծննդեան²⁷, ²⁸ զայսոսիկ ածեալ²⁹ զմտաւ, եթէ միտք քան զիրա գոն³⁰ նուազագոյնք³¹, իսկ բան՝ դարձեալ քան զիմացեալսն տր[145բ]պայգոյն:

2 Ապա ուրեմն պարտ է զիտել, եթէ որչափ ինչ է ի ճշմարտութեանէն ի բանն անկումն, որովհետեւ³² միտք յառաջանալ ի³³ բնութիւն անհասիցն անկարողք գոն, եւ զբանի³⁴ բնութիւն³⁵ զարդարապէս³⁶ իմացելոցն մտացն³⁷ գտանել հաւասարեալ³⁸ անճառելի³⁹: ⁴⁰ Աստուած յերկրի, Աստուած յերկինս, ոչ ի ձեռն փողոյ եւ հրոյ, եւ յերին ծխեցելոյ⁴¹, եւ միգի⁴² եւ մրրկի զարհուրեցանելոյ⁴³ գանձինս յսողաց ակրինագրելով, այլ ի ձեռն⁴⁴ մարմնոյ⁴⁵ ընդելաբար եւ

²⁵ Z₂ զբան
²⁶ CLN որ
²⁷ C ծննդենն NT ծննդեանն CD + գոյ
²⁸ N զայսոսիկ... յերկրի]
²⁹ CD ածել E ածելով
³⁰ L գոն] են
³¹ C նուազագոյնք
³² Z₂ որովհետեւ] + եւ
³³ CLMT ի]
³⁴ CLMTZ₂ զբանին
³⁵ T բնութիւնն ABD + բանիւ
³⁶ L արդարապէս
³⁷ CELMZ₂Z₃ մտացն]
³⁸ D հաւասարել
³⁹ T անճառելի] անճար է
⁴⁰ N Աստուած... ի մարմնում]
⁴¹ TZ₃ ծխելոյ
⁴² ABCDR միգի] միջի
⁴³ D զարհուրեցանելոյ Z₃ զարհուրեցուցանելոյ
⁴⁴ E ձեռն
⁴⁵ ACDE մարմնոյ]

զգաւնաբար ընդ համազգեացս¹ խաւսելով: Աստուած ի մարմնում,² ոչ³ առուածոյ¹⁷⁴ գործովք⁴, որպէս ի ձեռն մարգարէիցն, այլ⁵ բուսակից⁶ ինքեան եւ միաւորեալ ներկայացուցանելով⁷ զմարդն¹⁷⁵, եւ ի ձեռն ազգակցին մերոյ մարմնոյն իւրոյ, ի վեր առ ինքն⁸ տանելով զամենայն մարդկութիւնս: Արդ, զիա՞րդ ասէ, ի ձեռն միոյ յամենեսեան եկն վնասակարն⁹: Եւ զի՞նչ աւրինակ ի մարմնում աստուածութիւնն՝ որպէս հուր յերկաթում, ոչ փոխարկաբար, այլ¹⁰ փոխատրաբար: Քանզի ոչ եթէ արտաքոյ¹¹ ինչ յիւրմէն ընթանայ հուր առ երկաթ, այլ մնալով յրստ բնութանն տեղւոյ¹² փոխատրէ ի¹³ նա յիւրմէ¹⁴ զաւրութենէն, որ ոչ նուազէ փոխատրութեամբն, եւ զբոլորն լնու ընդունող¹⁵: Ըստ այսմ եւ Աստուածախինն բան¹⁶ ոչ շարժի¹⁷ յիւրմէ, «Եւ

բնակեաց ի մեզ» (Յ․ՎԺ․ Լ․ 14): Եւ ոչ յեղու|146ա|մն կրեաց, «Եւ Բանն մարմին եղև» (Յ․ՎԺ․ Լ․ 14): Ոչ երկին անապատ¹⁸ էր յունողէն¹⁹ զնա²⁰, եւ երկիրս²¹ ի ծոց իւր ընդունէր զերկնայինն: Արդ, մի՛ անկումն ինչ իմասցիս աստուածութեանն, քանզի²² ոչ փոխաբերի²³ ը²⁴ տեղի ի տեղւոյ²⁵ որպէս մարմին: Եւ մի՛ դարձեալ այլայլեալ²⁶ երեւութասցիս զաստուածութիւնն եւ ի մարմին փոխարկեալ, քանզի անյեղելի²⁷ է եւ²⁸ անմահ²⁹: Եւ զիա՞րդ, ասեն, ի մարմնական³⁰ տկարութենէն ոչ լցաւ Աստուած Բանն: Ասեմք՝ թէ եւ ոչ հուր³¹ ի յատկութեանցն երկաթոյ առնու ինչ: Սեաւ³² է երկաթ³³ եւ ցուրտ, բայց սակայն հրացեալ՝ զհրոյն կերպարանս³⁴ զգենու³⁵, եւ ինքն պայծառանալով ոչ սեւացուցանէ զհուրն, եւ ցրտանալով³⁶ ոչ ցրտա-

¹ DN համազգեայս Z₂ համազգեացսս
² N ոչ... բուսականքն]
³ A առուածոյ C առուածոց DM առուածոց Z₂ առուածոց
⁴ M գործեաւք
⁵ Z₃ այլ
⁶ D բուսակից] + ըստ
⁷ Z₂ ներկայ ցուցանելով
⁸ B ինքին
⁹ Z₃ վնասակար LTZ₂ + ի ձեռն մջոյ ամենեքին առին զօգտակարն
¹⁰ Z₃ այլ
¹¹ BCEMT արտաքս E տեղւոյն
¹² C տեղոյ
¹³ E ի]
¹⁴ EL յիւրմէ]
¹⁵ M զընդունող
¹⁶ EL բանն
¹⁷ Z₃ շարժեաց

¹⁸ L անապատ] անքատ
¹⁹ E յունողէն] յարարողէն
²⁰ E զնա]
²¹ D երկիր D + ըստ
²² L քանզի] զի
²³ E ի տեղի]
²⁴ TZ₂Z₃ ի]
²⁵ CE տեղոյ E + ի տեղի
²⁶ M այլայլեր Z₃ այլայլեալ
²⁷ CZ₂ անյեղելի] անայլայլելի M այլայլի
²⁸ Z₃ եւ]
²⁹ ABCDEZ₂ անմահ] անհաս
³⁰ ACM մարմնականութենէն L մարմնական տնօրէնութենէն T մարմնական Z₂ մարմնականութեան T + սնընդենէն
³¹ L հուր] հնար
³² C սեւ
³³ D երկաթոյ
³⁴ L կերպարան M կերպարանն
³⁵ C սգենու
³⁶ E ցրտանալով] հրանալով

ցուցանէ զբոցն: Այսպէս եւ¹ մարմինն² հաղորդելով աստուածութեանն՝ ոչ փոխատրեաց ի նա զիւր տկարութիւնն: Քանզի եւ ո՞չ ստեղծականիս այսմ հրոյ հանգիտաբար տացես³ ազդել աստուածութեանն, այլ⁴ կի՞րս ինչ արդեաւք⁵ շուրջ զանախտականան ի մարդկայինս⁶ տկարութեան⁷՝ արտերեւութեանս¹⁷⁶ եւ տարակուսես⁹ զիա՞րդ ապականուցուք բնութեամբն¹⁰, որ¹¹ առ Աստուած, կարաց զանապականութիւնն նորա¹² ամբողջ պահել: Ուսի՛ր զխորհուրդն: Վասն այսորիկ¹³ Աստուած ի մարմնում՝ զի սպանցէ գործացեայն ի նմա գմահ¹⁴: Եկույ զնա մահ անգիտա|146բ|նայով¹⁵, եւ կրեայ ծանեաւ¹⁶, գոր եկույն: Եկույ զկենդանութիւնն¹⁷, ընկղմեցաւ ի կենդանութենէն: Եկույ զմին հանդերձ ամենեքումբ եւ կորոյս զամենեսեան¹⁸ վասն միոյն¹⁷⁷: Քանզի, որպէս եւ դե-

ղոցն, որք¹⁹ բուժականքն²⁰ են, ներկալողք²¹՝²² են ապականողացն ընտանեցեալք ի մարմնումն եւ որպէս ներգոյն²³ խաւար ի տան՝ վերածութեամբ լուսոյ լուծանի, այսպէս եւ հզաւրացեալն ի վերայ մարդկային²⁴ բնութեան²⁵ մահ՝ յարագայութեամբ²⁶ աստուածութեանն աներեւութացաւ: Եւ որպէս ի ջուրս սառն, որչափ ժամանակս²⁷ զիչերն է, եւ ստուեր²⁸ ունի զխոնաւութիւնն, իսկ ի ջեռուցանել արեգական²⁹ հալի ի ճառագայթիցն. նոյնպէս եւ մահ³⁰ թազաւորեաց մինչեւ ի³¹ գալուստն Քրիստոսի: Իսկ որովհետեւ երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ (ՏԻՊ. Բ. 11), եւ ծագեաց արեգակն³² արդարութեան (ՍՊՆ. Գ. 22) ընկղմեցաւ մահ³³ ի³⁴ յաղթութիւն (Հմմտ. Լ. ԿՊՆ. ԺԵ. 54), ոչ հանդուրժեալ³⁵ եկելութեան ճշմարիտն³⁶ կենդանութեան: Ով խորք մեծութեան եւ

¹ Z₃ եւ] + մարդկային
² Z₃ մարմինս
³ L տայցես
⁴ Z₃ այլ
⁵ C արդօք
⁶ E մարդկային
⁷ T տկարութեան] + է Z₃ տկարութենէ
⁸ A արդ երեւութեանաս արտերե
⁹ EMT տարակուսիս Z₃ + թէ
¹⁰ LTZ₃ բնութիւնս LTZ₃ + հաղորդութեամբն
¹¹ CZ₂ որ] զոր
¹² CZ₂ նորա]
¹³ Z₃ այնորիկ
¹⁴ B մահ]
¹⁵ B հանգիտանալով
¹⁶ C ծանեւ
¹⁷ L զկենդանութիւնն] + եւ
¹⁸ C զամենիսէն

¹⁹ LT որ
²⁰ CE բուժականք
²¹ D ներկալող
²² N են... նախասահմանեալն]
²³ EL ներգոյն] ներքնոյն M ներգոյն
²⁴ C մարդկայինս Z₂ մարդկայինս
²⁵ Z₃ բնութեանս
²⁶ M յարագայութեամբ] արագութեամբ Z₂ յարակցութեամբ
²⁷ CDZ₂ ժամանակ
²⁸ A ստեւուեր C սուէր
²⁹ LMZ₂ արեգականն
³⁰ E մահու
³¹ E ի]
³² C արեգականն
³³ CM մահու
³⁴ CM ի]
³⁵ B յանդուրժեալ
³⁶ ELZ₃ ճշմարիտ

մարդասիրութեանն¹ Աստուծոյ, վասն գերազանցութեան մարդասիրութեանն զժողերասանակք² լինիմք³ առ ծառայութիւնն: Վասն էր Աստուած ի մարդկան՝ խնդրեմք զբանն փոխանակ⁴, վասն պարտ գոլոյ երկրպագել քաղցրութեանն:

3 Ձի՞նչ արասցուք քեզ, ո՛վ մարդ: Ձմնացեալն ի բարձունս Աստուած⁵ եւ զիջեալ¹⁴7ալն ընդ քեզ ոչ խնդրես, եւ ⁶զի⁷ ձեռն մարմնոյ կաճառեալն ոչ ընդունիս: Երբ⁸ ընտանացիս Աստուծոյ՝ խուզես⁹ զպատճառսն¹⁰: Ուսի՛ր, եթէ¹¹ վասն¹² այսորիկ¹³ Աստուած ի մարմնում¹⁴, վասն¹⁵ զի պարտ է¹⁶ զանէծս մարմնոյս¹⁷ այսորիկ¹⁸ սրբել, եւ զաւտարացեալսն Աստուծոյ ընտանեցուցանել, եւ զանկեալն ի դրախտէն զնոյն յերկինս վերադարձուցանել¹⁹: Եւ զի՞նչ արդեալք²⁰ է գոր-

ծարան տնտեսութեանս²¹ այսորիկ²²: Սրբոյ Կուսի²³ մարմին²⁴: Ձի՞նչ են²⁵ սկզբունք²⁶ ծննդեանն: Հոգի²⁷ սուրբ եւ զաւրութիւն՝ Բարձրելոյն հովանաւորեալ, մանաւանդ նոցին²⁸ իսկ աւետարանականացն լուր²⁹: «Խաւսեցեալ³⁰, աւսէ, զմալր Ըորա Մարիամ Յովսեփայ³¹, եւ³² Ասի քան զգալն³³ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն³⁴ սրբոյ» (Հմմտ. Մ. Բ. 18): Եւ³⁵ կոյս, եւ առն³⁶ խաւսեցեալ³⁷ պատկանաւորք³⁸ առ տնաւրէնութեանն սպասաւորութիւն, որպէս զի ե՛լ³⁹ կուսութիւնն պատուեսցի⁴⁰, ե՛լ ամուսնութիւնն մի՛ յոռացի⁴¹: Քանզի կուսութիւնն որպէս պատկանաւոր առ սրբութիւնն ընտրեցաւ, իսկ⁴² առնխաւսութիւնն⁴³ սկզբունք ա-

¹ M մարդասիրութեանն] CTZ₂ մարդասիրութեան
² M զժողերասանակ
³ L լինիցիմք
⁴ ABCDEMZ₂ փոխանակ]
⁵ L զԱստուած
⁶ LT զի... ընդունիս]
⁷ A ըզի
⁸ Z₃ երբ] այդ թէ էր վասն
⁹ CZ₂ խուզես] խնդրես
¹⁰ C զպատճառն
¹¹ T եթէ]
¹² E վասն]
¹³ E այսորիկ] Z₃ այնորիկ
¹⁴ Z₂ մարմնոյն
¹⁵ LT վասն]
¹⁶ T է] էր
¹⁷ BC մարմնոյն
¹⁸ CZ₂ այսորիկ] այնորիկ
¹⁹ BCLMTZ₂ վերայ] ABCDE վերադարձուցանել] վերայ ցուցանելով LMTZ₂ ցուցանել

²⁰ C արդօք
²¹ L տնտեսութեանս] տեսութեանս
²² E այսորիկ] այսմիկ
²³ LM կուսին
²⁴ DM մարմինն
²⁵ D են]
²⁶ C սկզբունք E սկզբմունք
²⁷ MT հոգին
²⁸ LT նոցին]
²⁹ E լուր] + բանի LTZ₃ + բանից
³⁰ T խօսեալ
³¹ CEM Յուսեփոս Z₂ Յովսեփոս
³² CZ₂ եւ]
³³ BCEZ₃ զգալ
³⁴ ACE հոգոյն
³⁵ CZ₂ եւ]
³⁶ M առնն
³⁷ E խաւսեցեալ] եւ խօսել առն
³⁸ E պատկանաւոր
³⁹ Z₂ եւ]
⁴⁰ AC պատուեսցի
⁴¹ LT յորացի
⁴² T իսկ] եւ
⁴³ CLMZ₂ առնխաւսութիւնն] + եւ ոչ T + եւ զի ոչ
⁴⁴ C սկզբունք ամուսնութեանն

մոլանուլթեան առան¹: Միանգամայն՝ որպէս² զի եւ³ վկայ ընտանի մաքրութեանն Մարիամայ եղիցի Յովսէփ եւ ի զրպարտողս⁴ մի՛ մատնիչ⁵ նորին⁶, որպէս ոչ⁷ պղծեցելոյ⁸ զկուսութիւնն՝ զխաւսնայրն ունէր վարուց⁹ |147բ| պահապան: ¹⁰Ունիմ ինչ եւ այլ¹¹ պատճառս ասել ոչինչ անպատուականագոյն¹², քան զասացեալդ՝ եթէ պատկանաւոր ժամանակն առ մարդեղութիւնն Տեառն, ի վաղնջուց նախասահմանեալն¹³ եւ նախակարգեալն ի հիմնարկութենէ աշխարհի, յայնժամն¹⁴ ներկայացաւ¹⁵ ըստ որում եւ պարտն էր Հոգւոյն¹⁶ սրբոյ եւ գաւրութեան Բարձրելոյն, գրքիստոսագգեստն¹⁷ գայն գոյացուցանել մարմին: Եւ վասն զի համապատիւ մաքրութեանն Մարիամայ ոչ զոք¹⁸ ունէր՝ ըստ¹⁹ այնմ ժամանա-

կի ազգ մարդկան, որպէս²⁰ առ ի ընդունել²¹ զազգումն²² Հոգւոյն²³ սրբոյ, սակս այսորիկ յառաջահաս եղեալ ի ձեռն առնխաւսութեան՝ ընտրեցաւ²⁴ երանելի Կոյսն՝ ոչինչ կուսութեանն²⁵ ²⁶յառնխաւսութենէն¹⁷⁸ վնասեալ: Բայց ուրեմն ի հնոցն ասացեալ է եւ այլ²⁷ պատճառ, եթէ վասն զանխուլ²⁸ լինելոյ յիշխանէ յաւիտենիս²⁹ այսորիկ ³⁰կուսութեանն Մարիամու առ ի Յովսէփ³¹ հնարեցաւ առնխաւսութիւն³²: Զի³³ որպէս զբաղումն³⁴ չարին³⁵ զձեւ³⁶ առնխաւսութեան³⁷ Կուսին վճարեցաւ³⁸, որ ի վաղնջուց³⁹ սպասէր Կուսից⁴⁰, յորմէ հետէ յուաւ⁴¹ գասել մարգարէին՝ «առնա Կոյս յղասցի, եւ ծնցի Որդի» (Ե․․ Է․ 14): Արդ, պատրեցաւ⁴² ի ձեռն առնխաւսութեան⁴³ Կուսին չարախոր-

1 E առան] առն
2 LT որպէս]
3 CLTZ₂ եւ]
4 Z₃ զրպարտողս] զատապարտողս
5 LT մատնել
6 LT նորին]
7 Z₃ ոչ]
8 E պղծելոյ
9 BCDETZ₂ վարուցն
10 C ունիմ ինչ] ունի մինչ
11 Z₃ այլ E + ինչ
12 CLT անպատուականագոյն
13 N եւ... գոյր]
14 CM յայնժամ
15 ABE ներկայացաւ] երկուացաւ D երկայացաւ
16 CE հոգոյն
17 C գրքիստոսագգեստն] զաստուածասգեցն LM զաստուածագգեստն Z₂ զաստուածագգեացն
18 T գոք] C ոք
19 M ըստ] ընդ

20 L որպէս] + զի
21 TZ₂ ընդունել
22 T ազգումն
23 C հոգոյն
42. Դոթիսատեսակ (δυσειδός, էջ 211) բառի կիրառությունն այլ օրինակ ծանոթ է Հայ մատենագրությունը (ՆՀԲ, Ա. 616):

43. Փոքրամիտ (μικρόψυχος, էջ 212) բառի կիրառությունն ուրիշ օրինակ ծանոթ է Հայ բառանագրությունը (ՆՀԲ, Բ. 961):

44. Ոսկետախտակ-ը հունարեն «χρυσοκόλλητος» (էջ 212) բառի թարգմանությունն է, որը նշանակում է «ոսկի տախտակօք պատեալ, ոսկիապատ» (ՆՀԲ, Բ. 520) Բառի կիրառությունն այլ օրինակ արձանագրված է:

45. «Պահոց գրքում» չորս անգամ օգտագործված ἄτην (ῥοφος, էջ 213, Հմմտ. էջ 273, էջ 285) բառի ստուգաբանությունը տե՛ս Է. Բ. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 108-11:

46. Հմմտ. ծան. 43:

47. Հայերեն թարգմանությունն զօրիս արտահայտությունն ղիմաց հունարենում ունենք՝ «τινά πῶλον» (էջ 213), ուր «πῶλος»-ը ունի քուսակ, ստրուկ իմաստները (ՄԳ-ՄԿ, II, 1447):

48. «Եւ միումդ... եւ հաւանել» մտքի հայերեն թարգմանությունն և բնագրի մասնակի անհամապատասխանությունն կա (Հմմտ. «τὸ δὲ παθητικόν... καὶ καταπέθεισθαι», էջ 213): Հայերեն առկա ձեռագրերը բնագրին համընթաց ընթերցում չեն տալիս:

49. Չարութեան ընդդիմադրություն կապակցությունն հիմքը բնագրի «κακίας αἰσχος ἀποκαθηραμένη» (էջ 216) արտահայտությունն է: Հասկանալի է, որ թարգմանությունն և բնագրի կապը ընդհանուր-իմաստային է և ոչ բառական: Հայերեն թարգմանությունն հնագույն ձեռագրերը պահպանել են դարձալ սխալությունն տարբերակներ, որը, հավանաբար, ընդդիմադրությունն բառի աղավաղված տարբերակն է: Հայ բառարանագրությունը անծանոթ ընդդիմադրությունն ընթերցման հիմքը բնագրի «ἀποκαθαίρω» (էջ 216 մաքրել, սրբել ազատվել) բառն է (ՄԳ-ՄԿ, I, 203):

50. Վարսժուան (վերածել) ընթերցումը բնագրի «καταγωγίον» (καταγωγή, էջ 216) բառի թարգմանությունն է՝ դարձյալ անծանոթ Հայ բառարանագրությունը:

51. Հայերեն թարգմանությունն ինչ-ինչ պատճառով դուրս է մնացել բնագրի «πρὸς τήν γῆν βλέπει» (էջ 216) միտքը:

52. Բնագրում ունենք՝ «ἡ δόξα καὶ τὸ κράτος» (էջ 217) - փառք եւ զաւրութիւն:

53. Բնագրում ունենք՝ «τοὺς αἰῶνας τῶν αἰώνων» (էջ 217) - յաւիտեանս յաւիտենից:

54. Ծառիս հունարեն խորագիրն է՝ «Ὁμίλια περί μετάνοιας». Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 1476-1488:

55. Ուղղանկյուն փակագծով բոլոր վերականգնումները հունարեն բնագրի հրատարակչին են:

56. Բնագրի «ξένος»-ը (այլերկրացի, օտարերկրացի, *ΔΓ-PC, II, 1146*) մի դեպքում թարգմանվել է օտար (բարևոք աւտար - «καλῶς... ξένος», էջ 1477), մյուս դեպքում՝ հյուր (նմա հիւրն - «οὐτω ξένος», էջ 1477):

57. Բնագրի շարունակության «δίκαιοι ἐσμεν ὡς ἄνθρωποι ... ἡμεῖς δὲ μεταλήψει δικαιοσύνης δίκαιοι» միտքը հայերեն թարգմանությունում բացակայում է: Կատարվածը, հավանաբար, մեխանիկական վրիպման արդյունք է. թարգմանիչը բնագրի առաջին «δίκαιοι»-ից (=արդարք) հետո իբրև շարունակություն ընթերցել է հաջորդ նախադասության նույն բառը: Ասվածը դժվար է նկատել բնագրի և թարգմանության համապատասխան հատվածները համադրելիս:

58. Եթէ... յառաջագոյն ձևակերպումը բնագրային հիմք չունի, այլ թարգմանության ճանապարհով է հայտնվել հայերեն տեքստում (տե՛ս բնագիր, էջ 1480):

59. Բնագրում իբրև շարունակություն ունենք՝ «ἀγαθῶ Θεῷ» (էջ 1480): Հայերեն թարգմանության ձեռագրերը չունեն հունարենի հիշյալ բարի Աստուծոյ արտահայտությունը:

60. Բնագրում «ἀπὸ Ἑλλήνων» (էջ 1480): Այլուր նույն թեթանոսի դիմաց հունարենում ունենք «ἐθνικός» (տե՛ս էջ 1584):

61. Բնագրում ընդ Փրկչին արտահայտությունից դիմաց ունենք «τὸ σταυρῶ» (էջ 1485):

62. Բնագրում՝ «ἡ δόξα καὶ τὸ κράτος» (էջ 1480) - փառք եւ գաւրութիւն:

63. Բնագիրը տե՛ս *PG, t. 31, էջ 261-277*: Հունարեն խորագրին հաջորդում է Ավետարանից իբրև բնաբան վերցված հետևյալ միտքը. «Քակեցից զչտեմարանս իմ եւ ես մեծամեծս շինեցից. եւ անդր ժողովեցից» (Ղուկ., ԺԲ. 18): Հայերեն թարգմանության մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում սույն ավետարանական հղում-վկայակոչումը չի պահպանվել:

64. Քաշարերիս (ἐυφορέω, էջ 261) բառի ՆՀԲ բառարանագիրների բացատրության միակ օրինակը սույն կիրառությունն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 982):

65. Ագափսաձեռք (ագահաձեռացն) բառն անձանոթ է հայ բառարանագրությունը: Թարգմանության ճանապարհով առաջացած սույն բառի հիմքը հունարեն «τῶν πλεονεκτικῶν χειρῶν» կապակցությունն է:

66. Վարակացումն - «καταστάσεις» (էջ 264) բառի բացատրության առիթով Նոր հայկազյան բառարանագիրները համապատասխան դրվագը համարում են «անհարթ թարգմանութիւն» (ՆՀԲ, Բ. 779): Նշված բառի կիրառության ուրիշ օրինակ-վկայություն բառարանագիրներին ծանոթ չէ:

67. «Պահոց գրքում» երկիրս օգտագործված անարտանմանապարհ բառը թարգմանիչը ստեղծել է հունարենի «ἀδιέξοδος»-ը (էջ 264, Հմմտ. էջ 271) թարգմանելու ճանապարհով: Այն անձանոթ է հայ բառարանագրությունը:

68. Բոնակոնի (բոնակոնաց) բառի կիրառությունն այլ օրինակ ծանոթ է է Նոր հայկազյան բառարանագիրներին (տե՛ս ՆՀԲ, Ա. 516): Այն առաջացել է հունարեն «παγκρατιαστής» (παγκρατιασταίς, էջ 265) բառի հիմքի վրա:

69. Նգոտիլ (ἐνρωτάω, էջ 273) բառի կիրառություն ուրիշ օրինակ ծանոթ է է հայ բառարանագրությունը (տե՛ս ՆՀԲ, Բ. 410):

70. Մասոնա-ն (μαμωνά, էջ 273) ասորերեն բառ է, որը նշանակում է «մթերք ընչից, ինչք, մեծութիւն. մանաւանդ ժողովեալ անիրաւութեամբ և վաշխիւք» (ՆՀԲ, Բ. 200):

71. Հանդերձակապուտ (λποδούης, էջ 277) բառը միայն սույն վկայությունում է հայտնի (տե՛ս ՆՀԲ, Բ. 41):

72. Բնագրում ունենք՝ յաիտեանս յաիտեանից (τοὺς αἰώνας τῶν αἰώνων, էջ 277):

73. Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 277-304:

74. Ամենաբազում (= ամենայնի բազում, կարի շատ, բազմապատիկ և հանդիսական, հասարակաց) բառի բացատրությունն առիթով վկայակոչելով սույն միտքը և մի օրինակ «Թէ էլ պատճառ չարեաց Աստուած» ճառից Նոր հայկազյան բառարանագիրները ճառիս լեզվի մասին նկատում են. «են առհասարակ հելլենաբանութիւնք» (ՆՀԲ, Ա. 58):

75. Դատելով Նոր հայկազյան բառարանագիրների հղումից, տապանակ (τάπητος, էջ 285) բառի կիրառություն ուրիշ օրինակ հայտնի է է (տե՛ս ՆՀԲ, Բ. 847):

76. Հմմտ. ՆՀԲ, Բ. 494:

77. Բնագրում՝ «λακωνικής» (էջ 285):

78. Գրական ծաղկուք պանդեպաք կապակցությունը հունարեն «γραφικῆς ἄνθεσι καλλωπίζεται» (էջ 285) արտահայտության թարգմանչի ձեռքով կատարված փոխադրություն է:

79. Բնագրում ի բաց ստանալով կապակցությունը հաջորդում է հետևյալ միտքը՝ «φησί. τί δὲ τὸ σχῆμα τοῦ βίου ἔσται» (էջ 288), որը չի պահպանվել հայերեն թարգմանության մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում:

80. Հմմտ. ՆՀԲ, Բ. 741:

81. Հմմտ. ՆՀԲ, Բ. 858:

82. Բնագրում՝ «τοὺς αἰώνας τῶν αἰώνων» (էջ 304) – յաւիտեանս յաւիտենից:

83. *Ճառիս հունարեն խորագիրն է՝ «Τοῦ αὐτοῦ ὀμίλια εἰς μέρος. τεσσαρεσκαίδεκάτου ψαλμοῦ, καὶ κατὰ τοκιζόντων», բնագիրը տե՛ս PG, t. 29, էջ 177-187:*

84. Տարակուսելոյն (ἄπορος, ἀπόρου, PG, t. 29, էջ 268) բառի կապակցութեամբ Հ. Թորոսյանը նկատել է. «Հայր ամբողջ ճառիս մէջ՝ առանց ուշ դնելու իմաստին՝ միշտ տարակուսելու և տարակուսանք կը թարգմանէ ἄπορος և ἀπορία բառերը... Հարկ էր ըսել լանդնէնի կարօսելոյն» (Յ. Թորոսեան, Համեմատութիւն մը Յոհ. Մանդակունեոյ «Վասն փոխոց եւ վաշխից» եւ Ս. Բարսղի «Ընդդէմ վաշխողաց» ճառերուն, տե՛ս «Բազմավէպ», 1927, էջ 72):

85. Արգանակն դէպ արտահայտութեան դիմաց բնագրում ունենք ἄλεξιφόρμακον, ἀλεξιφόρμακκα (PG, t. 29, էջ 26), որը նշանակում է противоядие, предохранительное средство (ՃԴ-ՔՇ, I, 77). Հ. Թորոսյանի կարծիքով՝ սովյալ դեպքում հայերեն թարգմանութեանը ճիշտ չի արտացոլում բնագրի իմաստը (տե՛ս «Բազմավէպ», 1927, էջ 72):

86. Ստացումս (αὐτοαὐτοαὐδῆ) բառի դիմաց հունարենում ունենք ἔκτισις, ἔκτισιν (PG, t. 29, էջ 268) – выплата, вы́плата (ՃԴ-ՔՇ, I, 501), որը, ինչպես նկատել է Հ. Թորոսյանը, ճիշտ չէ. «ἔκτισις, որ է՝ հատուցումս, կատարումս, վճարումս... Հայր միշտ ստացումս կը թարգմանէ, անշուշտ շփոթելով կտիսիս բառին հետ» («Բազմավէպ», 1927, էջ 72):

87. «Զի ոմն իբրեւ գշուն ընթանայ ի հրապարակի» նախադասութեան հունարենում ասված է. «ὁ μὲν ὥσπερ κύων ἐπιτρέγει τῇ ἄγρᾳ» (PG, t. 29, էջ 269): Բնագիր-թարգմանութեան ընդհանուր համապատասխանութեանը ակնհայտ է, միակ տարբերութեանը հունարեն ἄγρᾱ-ի դիմաց հայերեն թարգմանութեան հրապարակ ընթերցումն է (ձեռագրերում բառիս այլ տարբերակ չի պահպանվել): Հ. Թորոսյանը իրավացիորեն նկատում է, որ հայերենի թարգմանիչը հունարենի ἄγρᾱ-ն (= οχота, ловля, ՃԴ-ՔՇ, I, 25) շփոթել է ἄγορά-ի հետ (= нарядное собрание, место собраний, городская площадь, ՃԴ-ՔՇ, I, 24), որոնք, ինչպես տեսնում ենք, բոլորովին տարբեր նշանակութեան բառեր են:

88. Բնագրում ունենք՝ «ὀποζύγιον» (էջ 269), որը ավելի շուտ լծկան կեանքի է նշանակում (ՃԴ-ՔՇ, II, 1688): Հայերեն թարգմանութեան գրաստը իրականում բեռնատար կենդանի է:

89. «Լաւագոյն է առ փոքր խորհուրդս գձեռն մխիթարել» միտքը ձեռագրական այլ տարբերակ կամ բառական ուրիշ ընթերցում չունի: Այն հիմնականում համընթաց է բնագրի հետ. «βέλτιον ταῖς κατὰ μικρὸν ἐπινοίαις τὴν χρεῖαν παραμυθίσασθαι» (PG, t. 29, էջ 269): Միակ շփոթք, ինչպես նկատել է Հ. Թորոսյանը («Բազմավէպ», 1927, էջ 72), կապված է χρεῖα-ἀνά- անհամապատասխանութեան հետ, ուր բնագրի χρεῖα-ն (=нужда, необходимость, надобность, ՃԴ-ՔՇ, II, 1782) թարգմանիչը շփոթել է նմանահունչ χεῖρα (=рука,

ՄԴ-ՔԸ, II, 1769) բառի հետ, որի հետևանքով էլ առաջացել է առկա վրիպումը:

90. Յտանախոսութիւն (ύστεροβουλία, էջ 273), բառի բացատրութեան առիթով Նոր Հայկազյան բառարանագիրների վկայակոչած միակ օրինակը «Պահոց գրքի» սույն կիրառութիւնն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 356): Հ. Թորոսյանը գտնում է, որ ճիշտ կլիներ յետանախոսութիւն ընթերցման փոխարեն կարգալ ստրջանք, սպաշաւ (տե՛ս «Բազմավէպ», էջ 72): Պահոցի թարգմանութեան ձեռագրերը նշված բառի որևէ տարրն ընթերցում չեն պահպանել:

91. Բազմանան գազանին (πολυτόκος θηρίω, էջ 273) արտահայտութեան բազմանան բառը անծանոթ է Հայ բառարանագրութեանը: Այն առաջացել է հունարեն «πολυτόκος» բառի հենքի վրա, որը ունի հաճախ ծնող, բեղուն, բեղմնատր նշանակութիւնները: «Պահոց գրքի» տվյալ հատվածում խոսքը շան մասին է:

92. Ծնունդը բնագրի տոկոս-ի թարգմանութիւնն է (տե՛ս PG, t. 29, էջ 273): Հ. Թորոսյանը, նկատի ունենալով բառի նշանակութիւնները, (рождение, плод, дитя, приплод, потомство, молодняк, лихва, проценты և այլն, տե՛ս ՄԴ-ՔԸ, II, 1634) նկատել է, որ «Հոս հարկ էր ըսել սոկոս» («Բազմավէպ», 1927, էջ 72): Պահոց ձեռագրերը այլ ընթերցում չեն պահպանել:

93. Բազմանսութիւն (բնագրում՝ πολυσαρκία, PG, t. 329, էջ 276) բառի բացատրութեան Նոր Հայկազյան բառարանագիրների օրինակները, այդ թվում նաև Պահոցի սույն կիրառութիւնը, բացառապես թարգմանական մատենագրութիւնից են քաղված (տե՛ս ՆՀԲ, Ա. 411): Հ. Թորոսյանի կարծիքով, «սոյն եւ նման բառեր աւելորդ է փնտռել Ոսկեդարու շրջանին մէջ» («Բազմավէպ», 1927, էջ 72): Հետազոտողի համոզմամբ՝ այդ կարգի բառեր «կը գտնուին միայն է. և Ը. դարուց յունաբան թարգմանիչներուն մօտ» (նույն տեղում):

94. «Քանիք անուրջք ընչաւետացեալք՝ առաւել վայելեցին ի տուգանս» (πόσοι ὄναρ πλουτήσαντες ὑπεραπήλουσαν τῆς ζημίας, PG, t. 29, էջ 277) նախադասութեան Հայերեն թարգմանութեան առիթով Հ. Թորոսյանը գրել է. «Հոս թարգմանիչը փոխանակ ὄναρ-ի, որ հակադիրն է ὄναρ-ին, կարգացեր է ὑπέρ, որ կը նշանակէ առաւել, ի վերոյ («Բազմավէպ», 1927, էջ 72): Հայերեն գրչագրերը հիշյալ մտքի այլ տարբերակ չեն պահպանել:

94. Բազմանսութիւն բառի կապակցութեամբ վկայակոչված է Հ. Թորոսյանի դիտողութիւնը (տե՛ս ծան. 93) հավասարապես վերաբերում է նաև վաճառարան (πρατήριο, PG, t. 29, էջ 277) բառի սույն կիրառութեանը:

96. Հ. Թորոսյանի պնդմամբ՝ հարիրաժողովք, եւ տասնաժողովք (έκατοστολόγοι καὶ δεκατηλόγοι, PG, t. 29, էջ 280) բառերը նույնպես ոչ թե ոսկեդարյան, այլ VII-VIII դ.դ. հունաբան թարգմանութեան արդյունք պիտի դիտել (տե՛ս «Բազմավէպ», 1927, էջ 72):

97. Բնագրում՝ «τοὺς αἰῶνας τῶν αἰώνων» (էջ 280) – յաւիտեանս յաւիտեանից:

98. Հունարենի խորագիրն է՝ «Ὁμιλία Ι Κατὰ οργιζομένων»: Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 353-372:

99. Հմմտ. ՆՀԲ, Ա. 766:

100. Անշուշտ, հունարենի նմանությամբ (տե՛ս էջ 364) հայերեն թարգմանությունում ևս սպասելի էր «եւ զՏէրն մեր ապտակեցաւ» շարունակությունը, որը չի պահպանվել հայերեն թարգմանության ձեռագրերից և ոչ մեկում:

101. Հայերեն թարգմանության «զրպարտեցա՞ր՝ եւ դատաւորն» ձևակերպումը հստակ չէ, բառ է պակասում: Ծիշտ կլիներ այն վերընթերցել «զրպարտեցա՞ր, եւ դատաւորն զրպարտեցաւ» տեսքով, մի բան, որ հիմնավորվում է ոչ միայն հունարեն նախորինակով, այլև համապատասխան հատվածի բովանդակությամբ: Սակայն առկա ձեռագրական հավաքածոները նման միջամտության հնարավորություն չեն տալիս:

102. Բնագրում՝ «Ζαμβρι καὶ τῆς Μαδιανίτιος» (էջ 368):

103. Բնագրում շարունակաբար ունենք եւ գալղութիւն - «καὶ τὸ κράτος» (էջ 372), որը հայերեն թարգմանության ձեռագրերում չի պահպանվել:

104. «Ὁμιλία ΙΑ΄. Περὶ φθόνου». բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 372-385:

105. Այս և նախորդ ճառերում տրվող կենսաբանական տեղեկությունները որոշակի ընդհանրություն ունեն նույն հեղինակի «Վեցաւրեայ» երկասիրության համաբնույթ հաղորդումների հետ:

106. Հմմտ. ՆՀԲ, Բ. 990:

107. Հմմտ. ՆՀԲ, Բ. 986:

108. Բնագրում՝ «ἀδελφός» (ἀδελφός, էջ 376): Սակայն տվյալ պարագայում հանցանք-զանցանքի մերձավորությունն է ակնարկվում և ոչ թե իրական քրոջ կամ եղբոր անձը մատնացուցվում: Հայերեն թարգմանության ձեռագրերում եղբայր բնագրային ընթերցումը չի պահպանվել:

109. Γεθιμαδενναρική (δυσμεταχειρεστότατος, էջ 376) բառի կիրառության միակ օրինակը սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 615):

110. Բառարանագրությանը ծանոթ է հրապարակապաշտ բառը. նոր հայկագյան բառարանագիրների վկայած չորս օրինակներից երկուսը «Պահոց գրքից» են վերցված: Սակայն բառարանագրությանը անծանոթ է նույն հիմքի վրա առաջացած հրապարակապաշտել բայական տարբերակը, որի միակ կիրառությունը սույն օրինակն է: Այն առաջացել է հունարենի «δημοσιεύοσι»-ն (էջ 381) թարգմանելու ճանապարհով:

111. Վատխաւութիւն (κατηγορία, էջ 381) բառի կիրառության այլ օրինակ ծանոթ չէ բառարանագրությանը (տե՛ս ՆՀԲ, Բ. 786):

112. Ճառիս Հայերեն թարգմանություն ավարտը պակասավոր է՝ շնորհեաց սեպ կապակցությունից հետո բնագրում ունենք՝ «ἐν Χριστῷ Ἰησοῦ τῷ Κυρίῳ ἡμῶν, μεθ' οὗ ἡ δόξα τῷ Πατρὶ σὺν τῷ ἁγίῳ Πνεύματι» (էջ 386), որը ինչ-ինչ պատճառով Հայերենում բացակայում է:

113. Բնագիրը տե՛ս PG, t. 29, էջ 210-228:

114. Անձնաձուլիս (ψυχολογία, էջ 212) բառի կիրառություն միակ օրինակը սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 193):

115. Բառարանագրությունը Աերանուագ (ἐμμελής, էջ 212) բառի կիրառություն այլ օրինակ ծանոթ չէ (տե՛ս ՆՀԲ, Բ. 415):

116. Հմմտ. ՆՀԲ, Բ. 448:

117. Հմմտ. ՆՀԲ, Բ. 448:

118. Հմմտ. ՆՀԲ, Բ. 316:

119. Հմմտ. ՆՀԲ, Բ. 1106:

120. Հմմտ. ՆՀԲ, Ա. 447:

121. Հմմտ. ՆՀԲ, Ա. 541:

122. Դժվարանում ենք ասել Հայերեն թարգմանությունից ինչ պատճառով է դուրս մնացել բնագրի հետևյալ միտքը. «εἶτα ἰστώμεν τὸ βούλευμα» (էջ 220):

123. Դիրավայր (εὐρύχωρος, էջ 221) բառի կիրառություն միակ վկայությունը սույն օրինակն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 634):

124. Հմմտ. ՆՀԲ, Բ. 807:

125. Հմմտ. ՆՀԲ, Ա. 630:

126. Հունարենին համընթաց շարունակություն-ավարտ ունենալու համար պակասում է «եւ գաւրութիւն... յաւիտենից» ձևակերպումը, որը կա բնագրում (տե՛ս էջ 228):

127. Բնագիրը տե՛ս PG, t. 29, էջ 460-469:

128. Բնագրում՝ «τὴν Συρίαν Ῥωβὼ καὶ τὴν Συρίαν Σωβᾶ » (էջ 461):

129. Բառարանագրությունը ծանոթ է ձեռնարուեստ բառը (տե՛ս ՆՀԲ, Բ. 153), սակայն սույն հիմքից կազմված ձեռնարուեստակ տարբերակը տակավին արձանագրված չէ: Այն առաջացել է հունարենի «χειροτέχνης»-ը (էջ 461) թարգմանելու ճանապարհով. նշանակում է արհեստավոր, վարպետ (DPC, II 1770): Հմմտ. Մալիս. «Զեռնարուեստ - ձեռքի արհեստավոր, ձեռագետ» (Գ, էջ 164):

130. Մէջս գետնց (Μέσην τῶν ποταμῶν, էջ 461), անվանման տակ նկատի ունի Արաբիայի և Փյունիկի միջև ընկած տարածքը:

131. Հայերեն թարգմանությունում տեղանուն է օտարված, հունարենում ունենք՝ «Ἀδραζᾶρ βασιλέα Σωβᾶ» (էջ 461):

132. Բնագրում սույն միտքը արգելական-ժխտական է՝ «μη εἰρησθαι» (էջ 464):

133. Նշանատրոփում (σημείωσις, էջ 465) բառի վկայվածության միակ օրինակը սույն կիրառությունն է (տե՛ս ՆՀԲ. Բ, 436):

134. Բնագրին համընթաց թարգմանություն ակնկալելու դեպքում պիտի ունենայինք՝ յեկեղեցի Տեառն (Հմմտ. εις Ἐκκλησίαν Κυρίου, էջ 468):

135. Հայերեն թարգմանությունն այս մասում անհարթ է այն պատճառով, որ օտարվել է համապատասխան կոչականը՝ Տէ՛ր, որը կա հունարենում՝ «Κύριε» (էջ 468):

136. Բնագիրը տե՛ս PG, t. 29, էջ 469-484: Խորագրին հաջորդում է հետևյալ ծանուցումը՝ «εις τὸ τέλος ὑπὲρ Ἰδιθοῦμ, ψαλμὸς τῷ Δαβίδ» (ի կատարած յաղագս ի Դիթումայ, Սաղմոս Դավթի), որը բուն խորագրին ձուլված տեսքով պահպանվել է հայերեն թարգմանության ձեռագրերից երկուսում:

137. Հմմտ. ՆՀԲ. Բ, 317:

138. Հմմտ. ՆՀԲ. Ա. 41:

139. «Զի... զայրացուցանէ» նախադասության տրամաբանական շեշտը բնագրում ժխտական է (Հմմտ. բնագիր, էջ 472), հայերեն թարգմանությունում՝ հաստատական: Հայերեն թարգմանության ձեռագրերը այլ տարբերակ չեն պահպանել:

140. Հմմտ. ՆՀԲ, Բ. 254:

141. Փրագովություն բառն անծանոթ է բառարանագրությունը. այն առաջացել է բնագրի «φυσάται» (էջ 477, φυσάω - փչել, φυσαι, φυσացնել. ΔΓ-PC, II, 175) հիմքի վրա, որը տվյալ պարագայում ընկալելու է իբրև որակում հարստություն, ուռճացածություն մեծամտողի մասին:

142. Հմմտ. ՆՀԲ, Բ. 100:

143. Բնագիրը տե՛ս PG, t. 29, էջ 484-494:

144. Բնագրում Աստուծոյ փոխարեն առկա է Քրիստոսի (τοῦ Χριστοῦ, էջ 485):

145. Թվարկումների ցանկը հայերեն թարգմանությունում պակասավոր է. բացակայում են՝ թե՞ հալածումն (= ἡ διωγμός, էջ 485), թե՞ սերկություն (= ἡ γυμνότης, էջ 485) հարցադրումները:

146. Հայերեն թարգմանության խստություն բառը իր բոլոր տարբերակներով (խստովանություն, խոսություն) ըստ էության չի արտացոլում բնագրի «περίστασις» (τῶν περιστάσεων, էջ 488) բառի տվյալ հատվածի համար պահանջվող ծանր հանգամանք, անկալունություն, անհաստատություն հիմաստներից և ոչ մեկը:

147. Բնագրում՝ յաւիտեանս յաւիտենից (αἰῶνας τῶν αἰώνων, էջ 493):

148. Բնագիրը տե՛ս PG, t. 30, էջ 104-116:

149. Նոր հայկազյան բառարանագիրները մեկական օրինակ-վկայություններ արձանագրել են քաջընտրաբար, քաջընտրութիւն նույնահիմք բառերը (ՆՀԲ, Բ. 989), բայց ծանոթ չեն քաջընտիր բառի սույն կիրառությունը, այլապես կանգ-րադառնային դրան: Հասկանալի է, որ այն առաջացել է հունարեն «εὐδόκιμος» (էջ 104) բառը թարգմանելու ճանապարհով (նշանակում է բարի համբավ ունեցող, փառապանծ, տե՛ս ԸԳ-ՔԸ, I 686) Բառս վկայված է Ստ. Մալ-խասյանցի բառարանում (Մալխ., Դ, 553):

150. Հմմտ. ՆՀԲ, Ա. 163:

151. Հմմտ. ՆՀԲ, Ա. 251:

152. Այս դեպքում հայերեն թարգմանությունից, հավանաբար ընդօրինակ-ման ճանապարհով, դուրս է մնացել աստվածաշնչյան հետևյալ քաղումը. «καὶ υἱοὶ Ἰησοῦ παντες· ὑμεῖς δὲ ὡς ἄνθρωποι ἀποθνήσκετε» (էջ 109): Հմմտ. Սղւ., ԶԱ. 6-7 «կամ որդիք բարձրելոյ ամենեքեան: Դուք աւաղիկ որպէս մար-դիկ մեռանիք...»:

153. Սույն վկայությունը երկակից (δίχηλος, էջ 113) բառի կիրառության միակ օրինակն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 687):

154. Հմմտ. ՆՀԲ, Բ. 971:

155. Հայերեն թարգմանության այս հատվածում միջամտություն հետք կա. ինչ-ինչ պատճառով բացակայում է բնագրի հետևյալ միտքը՝ «Τὰς εὐχὰς μου τῷ Κυρίῳ ἀποδώσω ἐναντίον παντὸς τοῦ λαοῦ αὐτοῦ» (էջ 113):

156. Բնագրի խորագիրը մի փոքր այլ է՝ «Ὁμιλία ΙΕ΄. περὶ πίστεως»: Հունա-րենը տե՛ս PG, t. 31, էջ 464-472:

157. Աղառաքից (ἰσχνόφωνος, էջ 464) բառի կիրառության միակ օրինակը սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 48):

158. Քաջարկութիւն (εὐταξία, էջ 465) բառի կիրառության ուրիշ օրինակ հայտնի չէ բառարանագրությանը (տե՛ս ՆՀԲ, Բ. 999):

159. Հմմտ. ՆՀԲ, Ա. 473:

160. Պարակցութիւն հրեշտակաց (χοροστασίας ἀγγέλων, էջ 465) արտահայտու-թյունը կիրառված ենք գտնում նաև Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբեր-գութեան» պոեմի ԻԴ. գլխում՝ «Թէ ընդ հրեշտակսն պարակցութեա՞ն, յորմէ տրոհեցայ» (Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրություններ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազիզյանի, Երևան, 1985, էջ 355):

161. Նախահաստութիւն բառը անծանոթ է բառարանագրությանը. այն առա-ջացել է հունարեն «προεδρία» (էջ 465) բառի հիմքի վրա, որը նշանակում է «переднее, первое или почетное место, сидящий на первом месте, впереди или на престоле» (ԸԳ-ՔԸ, II, 1377):

162. Հմմտ. ՆՀԲ, Ա. 213:

163. Հայերեն թարգմանության ավարտը դարձյալ չունի բնագրի բանաձևային ձևակերպումը՝ «καὶ τὸ κράτος εἰς αἰῶνας τῶν αἰῶνων» (էջ 472):

164. Հունարենում ձառիս խորագիրն է՝ «Ὀμιλία Ις»: Հայերեն թարգմանության համար բուն խորագիրը ընտրված ավետարանական քաղվածքը հունարենում ենթախորագրի տեսքով է ներկայացված: Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 472-481:

165. Սույն դրվագի հայերեն թարգմանությունը պակասավոր է. բնագրի «καθ' ὅτι ἐν ἐκείνοις μὲν διὰ τῶν δούλων ἡμῖν ἐλάλησε τῶν προφητῶν» (էջ 472) միտքը հիմնականում օտարվել է:

166. Առասպելաբեր բառի կիրառության բառարանագրությանը ծանոթ միակ օրինակը սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 293):

167. Հալալաբանութիւն (πειθανολογία, էջ 473) բառի կիրառության օրինակ Նոր հայկազյան բառարանագիրներին ծանոթ չէ (տե՛ս ՆՀԲ, Բ. 72):

168. Հայերեն թարգմանությունում սույն թվարկումը պակասավոր է. դուրս է մնացել երկիր անվանումը, որը կա հունարենում (γῆ, էջ 477):

169. Հմմտ. ՆՀԲ, Բ. 384:

170. Բնագրի շարունակությունում ունենք «τῷ Θεῷ» (էջ 480), որը չի պահպանվել հայերեն թարգմանության ձեռագրերում:

171. Բնագրի «τὸ κράτος»-ը (էջ 481) հայերեն թարգմանությունից դուրս է մնացել:

172. Ձառիս հունարեն խորագիրը մի փոքր ավելի ընդարձակ է՝ «Ὀμιλία εἰς τὴν ἄγιαν τοῦ τον Χριστοῦ γέννησις»: Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 1457-1476:

173. Հմմտ. ՆՀԲ, Բ. 525:

174. Բ. Կեսարացու առուածոյ և Ստ. Ասողիկի առածոյ ընթերցումների առնչակցությունն անդրադարձել ենք սույն հրատարակության առաջաբանում, «Պահոց գրքի» հետքերը քննելիս:

175. «Միաւորեալ ներկայացուցանելով զմարդն» կապակցությունը առած և առուած բառերի բացատրության առիթով Նոր հայկազյան բառարանագիրների հղած օրինակներից մեկում ունի «զմիաւորեալն կացուցանելով մարմին» տարբերակը: Այդ խնդրին անդրադարձել ենք Հայոց միջնադարյան գրականության վրա Պահոցի հետքերը քննելիս:

176. Արտերադարձումս (φαντάζη, էջ 1461) բառի միակ վկայությունը սույն կիրառությունն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 382):

177. «Եկու... վասն միոյ» միտքը բնագրային հիմք չունի. այն հավանաբար թարգմանչի միջամտության արդյունք է:

178. Առնիստուփիս (μνηστεία, էջ 1464) բառի նոր հայկազյան բառարանագիրներին բացատրության միակ հիմքը «Պահոց գրքի» սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 309):

179. Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում լատիներեն ընթերցման փոխարեն ունենք աշխարհի, որը պահպանվել է նաև «Պահոց գրքի» ուշ շրջանի երկու ձեռագրում: Սակայն Պահոցի հունարենում ունենք «τοῦ αἰῶνος» (էջ 1468) ուստի և սույն տեքստի համար նպատակահարմար գտանք լատիներեն ընթերցումը:

180. Հմմտ. ՆՀԲ, Ա. 650:

181. Հայերեն թարգմանությունից դուրս է մնացել շարունակության «τῶν Ἰουδαίων» - Հրէից (էջ 1472) անվանումը:

182. Հմմտ. ՆՀԲ, Բ. 626:

183. Հեծան (հեծանակք, δοκίς, δοκίδες, էջ 1472) բառի բացատրության նոր հայկազյան բառարանագիրներին միակ աղբյուրը սույն կիրառությունն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 81):

184. Գուպար-ը (βόθυνον, էջ 1472) այս դեպքում նշանակում է «անուն գիսաւոր աստեղ, որ իցէ խորանիստ խոռոչաւոր» (ՆՀԲ, Բ. 582): Անվանման կիրառության այլ օրինակ ծանոթ չէ բառարանագիրներին:

185. Անկատարելակից (ασυντελής, էջ 1473) բառի կիրառության միակ օրինակն է սույն վկայությունը (տե՛ս ՆՀԲ, Ա. 170):

186. Երասանակազանց (ἀφηνιάζομεν, էջ 1473) բառի կիրառության միակ վկայությունը սույն օրինակն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 671):

187. Բնագրում մտաց-ի փոխարեն ունենք՝ «τῆς καρδίας» (էջ 1473):

188. Բնագրում ունենք նաև՝ «καὶ τὸ κράτος» (էջ 1476), որը հայերեն թարգմանության ձեռագրերում բացակայում է:

189. Բնագիրը տե՛ս PG, t. 28, էջ 1249-1265: Սույն գործը Բարսեղ Կեսարացու երկախրություններից դուրս թողնելու և Աթանասի անվամբ հրատարակելու իրողությունն ինքնին հեղինակային պատկանելության կասկած է նշանակում: Այդ առթիվ հայագիտության մեջ եղել են տարբեր կարծիքներ: Այսպես, օրինակ, Գ. Զարբհանյանը գտնում է, որ «այս Տրամախօսութիւնը Ապողինարի՝ որ ի մեր հայ գրչագիրս սրբոյն Բարսղի կ'ընծայուի, յունական քանի մը հեղինակաց քով Աթանասի տրուած է և անոր անունովն ալ հրատարակուած: Ոմանք ի քննադատից Մաքսիմոսի վկայի ընծայեցին՝ որ եօթներորդ դարուն մէջ էր. այլ Թէոդորեսոսի: Հայկական հին թարգմանութիւնս՝ այս ամէն կարծիք և երկմտութիւն կը փարատէ: Վաւերականութեանն վկայ է և սուրբ հայրապետ Շնորհալի ի Թողթա իւր» (Գ. Զարբհանյան, էջ 330): Մի փոքր այլ է Կարապետ եպիսկոպոսի մեկնաբանությունը. «Իրենց տեղում չեն նաև ս. Բարսեղի անունը կրող հատուածները, մանաւանդ որ կասկածելի ծա-

գուժն ունեցող և այնքան երկար «վիճաբանութիւնը» ամենևին յարմար նիւթ չէր այնպիսի մի ամփոփ ժողովածուի համար, ինչպիսին եղել է ըստ երևոյթին նախնական «Կնիք հաւատոյն» («Կնիք հաւատոյ», էջ XVII-XVIII): Բարսեղ Սարգսիյանը տեղյակ է Ջարբհանալյանի վերոբերյալ կարծիքին և ինքն էլ գտնում է, որ Շնորհալու ծանոթությունն ինքնին խոսում է «ի նպաստ Ս. Բարսղի հարազատ գործ ըլլալուն: Չեռագրիս հնութիւն իսկ նոր կռուան մ'է այս բանիս» («Մայր ցուցակ», էջ 1262-3): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դավանական խնդիրներ արծարածող սույն գործին դիմել է ոչ միայն Շնորհալին, այլև հայ միջնադարյան գրականության մի շարք անվանի դեմքեր: Ավելին, այս նույն գործի հետ եղած մշտական շփման ու տեղական անհրաժեշտության թելադրանքով բուն թարգմանությանը զուգահեռ առաջացել են նաև զուտ տեղական խմբագրություններ: Ստորև ներկայացնում ենք «Տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին...» գործի հայերեն թարգմանության մի տարբերակ, որը, կարելի է ասել, բուն տեքստի երեք մասի բաժանած և այդ մասերը վերադասավորած խմբագրություն է ներկայացնում: Այս դեպքում շարադրանքը հաճախ ընդմիջարկվել է զանազան նոր հարցադրում-լուծումներով կամ եղած մեկից ավելի հարց ու պատասխանները երբեմն ընդհանրացվել, մեկտեղվել են, երբեմն էլ մասնատվել-վերածվել նոր հարց ու պատասխանի: Ասվեց, այդ ամենը կատարվել է տեղական անհրաժեշտության թելադրանքով: Միաժամանակ նկատելու է, որ հայ մատենագիրները օգտվում են հիմնականում, այսպես կոչված, չմիջամտված, հունարենին համընթաց թարգմանությունից: Ասվածը նշանակում է, որ այդ երկասիրության խմբագրված տարբերակը ունեցել է օգտագործման ոչ մեծ շրջանակ:

/156ա/ ԺԹ. ՏԵՍՈՒԹԻԻՆ Ի ՄԱՐՄՆԱԻՈՐՈՒԹԻՆ ՓՐԿՉԻՆ՝ ԲԱՐՍՂԻ ՈՒՂՂԱՓԱՌԻ ԵՒ ԱՊՈՂԻՆԱՐԻ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԻ¹

Բարսեղ ասէ՝ մարմին մարդկայի՞ն ունէր Քրիստոս, թէ՞ ոչ:

Ապողինար ասէ. ոչ:

Բարսեղ ասէ. այլ զո՞ր:

Ապողինար ասէ. աստուածային:

Բարսեղ ասէ. բնութեա՞մբ, եթէ՞ միաւորութեամբ տնաւրէնութեանն:

Ապողինար ասէ. միաւորութեամբ տնաւրէնութեանն:

Բարսեղ ասէ. ապա ուրեմն՝ բնութեամբ մարդկային, իսկ միաւորութեամբ՝ տնաւրէնութեանն՝ աստուածային:

¹ CD նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի եւ Ապողինարի հերձաձողի տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին

² ABCD ասէ] + իսկ

³ A միաւորութեամբ] միացուցանելով

Ապողինար ասէ. այո:

Բարսեղ ասէ. եւ համաբնութիւն մեզ:

Ապողինար ասէ. որ ի Մարիամայ մարմինն՝ համաբնութիւն մեզ:

Բարսեղ ասէ. ձայնակիր¹ց ուրեմն մեզ լիցես² յայսմ²:

Ապողինար ասէ. եթէ այդպէս՝ այո:

Բարսեղ ասէ. ապա տեսցուք յաղագս անձինն:

Ապողինար ասէ. տեսցուք:

/156բ/ Բարսեղ ասէ. անձնաւո՞ր էր մարմինն, թէ՞ առանց հոգւոյ³:

Ապողինար ասէ. հոգեւոր:

Բարսեղ ասէ. հոգի ունէ՞ր՝ յայտ է ահա:

Ապողինար ասէ. ո՛չ ունէր հոգի:

Բարսեղ ասէ. զի ա՞րդ⁴ հոգեւորն ոչ ունէր հոգի:

Ապողինար ասէ. աստուածային⁵ էր՝ հոգեւորութեամբ հոգիացեալ:

Բարսեղ ասէ. իսկ դու անաստուածութեա՞մբ հոգիացար:

Ապողինար ասէ. բնաբար անձնացայ:

Բարսեղ ասէ. առանց Աստուծոյ զաւրութեա՞ն:

Ապողինար ասէ. այլ ո՛չ այսպէս Տէրն: Քանզի յայտասիկ անձն բանական՝ ի մարմնի միանալով հրամանաւ Աստուծոյ՝ մարդ կատարէ: Իսկ Քրիստոսին ոչ այսպէս, այլ Աստուած բանն ի՞նչ⁶ մարմնի⁷ միացեալ՝ մարդ կատարեաց զԱստուածն:

Բարսեղ ասէ. ուրեմն զա՞յն ասես աստուածային անձնաւորութիւն⁸:

Ապողինար ասէ. ամենեւին իսկ:

Բարսեղ ասէ. փոխանակ Հոգւո՞յ⁹ ուրեմն էր Բանն:

Ապողինար ասէ. այո:

Բարսեղ ասէ. իսկ ո՞վ էր, որ¹⁰ ասէրն՝ զանձն իմ ոչ ոք¹¹ բառնայ յինէն, յորժամ կամիմ՝ դնեմ զնա¹² եւ յորժամ կամիմ՝ առնում զնա՝ Բանն, եթէ մարմինն¹³:

Ապողինար ասէ. բանն:

¹ CD լիցիս

² C յայս

³ AC հոգո

⁴ D զիարդ]

⁵ D աստուածոյ] աստուածային

⁶ C ի]

⁷ C մարմին

⁸ A անձնաւորութիւն] անձնաւորութիւն

⁹ AC հոգո

¹⁰ AD որ] նոր

¹¹ C ոք]

¹² C եւ... զնա]

¹³ A մարմինն] մաւմինն

Բարսեղ ասէ. եւ զո՞ր |157ա| անձն¹ ասէր², զոր ունէ՞րն, թէ զո՞ր ոչն ունէր:

Ապողինար ասէ. զմարդկային կենացն ասէր:

Բարսեղ ասէ. եւ կարելի՞ է զմարդկային կեանսս³ գոլ առանց մերձաւորութեան անձին:

Ապողինար ասէ. ամենեւին իսկ: Քանզի Աստուած բանն ինքն «ի վերայ երկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ»:

Բարսեղ ասէ. երեւեցաւ բնութեամբ անտեսանելին՝ զիս՞րդ:

Ապողինար ասէ. մարմնով:

Բարսեղ ասէ. արդ՝ որպէս մարմնոյն երեւելն⁴, նոյնպէս եւ անձինն շրջելն, եւ անկարելի է բնութեամբ⁵ անտեսանելոյն տեսանիլ առանց մարմնոյ⁶, եթէ ոչ միասցի ի մարմնի, որ կարէին երեւել լինել, եւ անկարելի է բնութեամբ անչարչարելոյն չարչարիլ եւ շրջիլ ընդ մարդկան՝ ոչ միացեալ ի մարմնի անձնաւորի: Իսկ մարմին անձնաւոր հոգի ունելի է, եթէ կամիս եւ եթէ ոչ կամիս:

Ապողինար ասէ. մարդ ուրեմն չարչարեցաւ յաղազս մեր:

Բարսեղ ասէ. մի՛ լիցի: Այլ Աստուած՝ կամելով երեւել՝ միացոյց ինքեան մարմին անձնաւոր զկարելին չարչարել՝ ոչ յառաջագոյն գոյացեալն եւ յայնժամ ըստ առաքինութեան միաւորեալ եւ ոչ ի մարդոյ պարզ|157բ|արար⁷ Մարիամայ, այլ յառաջագոյն զնա սրբեաց եւ յայնժամ ի նմանէն ընկալաւ⁸ Աստուած բանն զմարդկութիւնն եւ միացոյց ըստ ինքեան տնաւրէնութեանն⁹ հոգեւոր մարմին, որպէս զի գոլ զմինն¹⁰ եւ զնոյն Աստուած եւ մարդ:

Ապողինար ասէ. անձնաւոր մարմին¹¹ մա՞րդ է:

Բարսեղ ասէ. ո՛չ պարզաբար հոգեւոր մարմինն ասեմ մարդ, այլ¹² մարդկային մարմին անձնաւորեալ մարդ է:

Ապողինար ասէ. մարդ Յիսո՞ւս է:

Բարսեղ ասէ. առանց բանին ոչ մարդ զիտեմ զնա լեալ¹³: Քանզի զգոյացութիւնն իւր միաւորութեամբ բանին ծանեայ:

¹ AB անձն] .

² C ասէր] ասէ

³ C կենս

⁴ D երեւալ

⁵ BD առանց մարմնոյ]

⁶ C անտեսանելոյն... բնութեամբ

⁷ B պարզաբար] + ի

⁸ ACD ընկալաւ] կալաւ

⁹ AB տնաւրէնութեանն] անաւրէնութեանն

¹⁰ C զմինն] զմարմինն

¹¹ B մարմինն

¹² C մարդ այլ]

¹³ B լիեալ C լինել

Ապողինար ասէ. ուրեմն փոխանակ բանականի՞ն էր բանն:

Բարսեղ ասէ. ո՛չ, այլ զբանականն էր բանին՝ միաւորեալ եւ բանականաւն եկն ի կամաւոր չարչարանս յոգւոյն¹ ի բանականէ եւ սակայն մարդ ի յանձնէ բանական է եւ ի մարմնոյ գոյանայ: Սոյնպէս Աստուած ասեմ, զի Մարիամայ ծնեալն ի հոգւոյ² եւ ի մարմնոյ միացեալ: Վասն զի, զոր աւրիճակ, միացեալ ոգւոյ ի մարմին՝ ծնանի մարդն ի ձեռն կնոջն³, սոյնպէս⁴ միացեալ Աստուած բանն ոգւոյ⁵ եւ մարմնոյ⁶՝ ծնաւ Աստուած եւ մարդ՝ ի ձեռն կնոջ:

Ապողին/158ա/ար ասէ. եւ սակայն ի կնոջէ գրեցաւ:

Բարսեղ ասէ. ի կնոջէ՛ ըստ մարմնոյ, ի ձեռն կնոջ՝ ըստ հոգւոյն⁷:

Ապողինար ասէ. իւր որդին Աստուծոյ, զոր ետն յաղագս մեր, ո՞ է՝ բա՞նն, եթէ՞ մարդն:

Բարսեղ ասէ. իւր որդին Աստուծոյ նոյն ինքն է, որ խոնարհեցոյց զինքն զպատկեր ծառային եւ նորին ծառայական պատկերաւն⁸ տուաւ⁹:

Ապողինար ասէ. ո՞չ ծնեալն ուրեմն ի Մարիամայ Յիսուս, այլ ծնեալն ի ձեռն նորա բանն ինքն զինքն խոնարհեցոյց մինչեւ ի մահ:

Բարսեղ ասէ. մի բաժանէր զընտացեալ¹⁰ միաւորութիւնն: Քանզի ասացի, թէ նոյն ինքն է իոր որդին Աստուծոյ եւ ի Մարիամայ՝ ըստ մարմնոյ, եւ ի ձեռն նորա՝ ըստ հոգւոյ¹¹:

Ապողինար ասէ. որ ի ձեռն նորա արդեաւք¹² բանն խոնարհեցոյց զինքն մինչեւ ի մահ:

Բարսեղ ասէ. որ ի ձեռն Մարիամայ Աստուած բանն ոչ կարելով բնութեամբ աստուածութեանն խոնարհել մինչեւ ի մահ, որ է պատկեր ծառայի:

Ապողինար ասէ. Աստուած ուրեմն մեռաւ վասն մեր:

Բարսեղ ասէ. Աստուած՝ միացուցանելով ինքեան հոգեւոր մարմին, զկարելին /158բ/ մեռանել: Վասն զի ոչ բնութեամբ աստուածութեանն վասն մեր մեռաւ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն:

Ապողինար ասէ. եթէ հոգի բանական ունէր մարմինն՝ ոչ Աստուած, այլ մարդն¹³ մեռաւ:

¹ AC հոգոյն
² A հոգոյ C ոգո D հոգւոյն
³ C կնոջ
⁴ C սոյնպէս] նոյնպէս
⁵ A ոգոյ
⁶ BCD մարմնի
⁷ A հոգոյ C հոգո
⁸ C պատկերովն
⁹ A տուաւ
¹⁰ B զընտանաց C զընդանացել
¹¹ A հոգոյ C հոգո
¹² C արդօք
¹³ B մարդ

Բարսեղ ասէ. որ ի մարմնոյն բաժանուամն մա՞հ ասի, թէ՞ ոչ:

Ապողինար ասէ. այո:

Բարսեղ ասէ. արդ՝ զոր աւրինակ՝ ուրեմն ոչ կարէ ասել ի գերեզմանին եւ ի թաղմանն լինել, եթէ ոչ ունէր գեղեալ մարմինն, սոյնպէս ոչ ստացաւ՝ եթէ բաժանեցաւ ի մարմնոյն, ամենայն ուրեք էր¹ եւ զամենայն բովանդակէր, եւ ունէր զանբաժանելի հոգին, ընդ² որում եւ որոց³ ի դժոխս լինել: Եւ այս յաղագս մեր, Աստուած ի գերեզմանի եղեալ՝ ի ձեռն մարմնոյն եւ ի դժոխս՝ ի ձեռն հոգւոյն⁴:

Ապողինար ասէ. ես հաւատացի, թէ Աստուած բանն իւրով մերձաւորութեամբն հոգիացոյց մարմինն եւ պետս ինչ ոչ ունէր հոգւոյն⁵:

Բարսեղ ասէ. որպէս ի խաչելն եւ ի թաղելն, եւ ի յառնելն պէտս ունէր մարմնոյ, զի մի՛ կարծեալք⁶ խաչն լինիցի, այլ ճշմարտութեամբ, նոյնպէս եւ ի մեռանելն եւ ի դժոխս լինելն⁷ պէտս ունէր հոգւոյն⁸: Քանզի յաղ/159ա/ազս ո՞յր ասացաւ, եթէ՛ «սկսաւ տրտմել եւ հոգալ» մինչեւ ի⁹ մահ: Յաղագս մարմնո՞յն անզգալոյ¹⁰, եթէ՞ բանին Աստուծոյ:

Ապողինար ասէ. եւ մեք ասեմք, եթէ զգայութիւն¹¹ ունէր մարմինն, որով զգայր¹² չարչարանացն:

Բարսեղ ասէ. եւ մարմին զգայութիւն¹³ ունելով հոգեւոր է: Քանզի առանց հոգւոյ¹⁴ անզգայ¹⁵ է: Զի որ խոնարհեցոյցն զինքն մինչեւ ի մահ եւ մեռաւ, Աստուած էր, ոչ բնութեամբ աստուածութեանն մեռանելով, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: Վասն զի զմարդկութեանն¹⁶ չարչարանս կրեաց: Եւ զոր աւրինակ անկարելի էր բեւեռել զնա ի խաչին եւ պատել պատառակալաւ, եւ զնել ի գերեզմանին՝ առանց մարմնոյ, նոյնպէս¹⁷ անկարելի էր նմա¹⁸ տրտմելն եւ հոգալ¹⁹ առանց հոգւոյ²⁰ բանականի, զի անբան անձն ոչ

¹ C էր]

² C ընդ] ըստ

³ ADE որոյ

⁴ ACD հոգոյն

⁵ AC հոգոյն

⁶ B կարծեալք

⁷ D լինել

⁸ A հոգոյ C հոգո

⁹ B է]

¹⁰ C անզգալոյ] անզգալ D անզգալոյ

¹¹ C զգայութիւն] սգայութիւն

¹² C զգայր] սգայր

¹³ C զգայութիւն] սգայութիւն

¹⁴ AC հոգո

¹⁵ C անզգայ անզգա

¹⁶ C մարդկութիւնն

¹⁷ C նոյնպէս] սոյնպէս

¹⁸ C նմա] նորա

¹⁹ C հոգալն

²⁰ A հոգոյ

տրտմի յառաջագոյն անգիտանալով զմահն, այլ իբրեւ զարջառ ի սպանումն ածեալ լինի եւ կամ իբրեւ զայլ ինչ յանբանիցն:

Ապողինար ասէ. ոչ ուրեմն եղեւ մարդ որդին Աստուծոյ, այլ ի մարդում եւ անկարելի, որ ի մարդում լեալ¹, գոլ զնա Աստուած:

Բարսեղ ասէ. /159բ/ ասես լեալ զբանն մարմին², թէ³ ոչ:

Ապողինար ասէ. «բանն մարմին եղեւ» գրեալ է:

Բարսեղ ասէ. փոփոխեալ⁴ մարմին, թէ⁵ ի մարմնի լինելով:

Ապողինար ասէ. ի մարմնի լինելով:

Բարսեղ ասէ. թէ անկարելի էր նմա մարդ² լինել լինելով ի մարդն եւ անկարելի էր նմա մարմին լինել լինելով ի մարմին: Իսկ եթէ ի մարմնի լեալ³ մարմին ասի լինել ոչ փոփոխեալ⁴ ի մարմին եւ մարդ լեալ մարդ ասի եղեալ ոչ փոփոխելով ի մարդ:

Ապողինար ասէ. ո՞վ էր, որ ասէրն⁵ «Աստուած իմ, ընդէր թողէր զիս»: Աստուածն բա՞ն է, թէ⁶ մարդն:

Բարսեղ ասէ. ես եւ զթաղումն մարմնոյն նորա ասեմ բանին ոչ բնութեամբ աստուածութեանն, ⁶այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: Նոյնպէս⁷ զձայնս⁸ զանձնականս եւ զտրտմութիւնն, եւ զփալն, եւ որքան ասի վասն նորա յԱւետարանսն⁹ Աստուծոյ բանին ասեմ, ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: Արդ, զոր աւրինակ զմարմինն իւր առնէ, ասելովն՝ այս է մարմին իմ: Նոյնպէս եւ զհոգին իւր առնէ, ասելովն՝ զհոգի իմ ոչ ոք բառնայ յինէն: Նոյնպէս եւ զչարչարանսն երկաքանչիւրոցն ընտանեցուցանէ, քանզի որպէս նոր/160ա/ա մարմինն տնաւրինաբար, նոյնպէս եւ նորա թաղումն մարմնոյն տնաւրինաբար: Եւ, զոր աւրինակ, նորա անձնն տնաւրինաբար, նոյնպէս եւ նորա ձայն անձինն տնաւրինաբար, զի եւ թաղումն մարմնոյ¹⁰ նորա¹¹ բանին թաղումն տնաւրինաբար, եւ ձայն անձին նորա բանին, ձայն տնաւրինաբար: Քանզի ինքն բանն ձայնելով զանձինն յատկութիւն:

Ապողինար ասէ. մեք ասեմք եթէ մարդասէրն Աստուծոյ բան մարդ լինել արժանի արար՝ մարմին առնլով ի սուրբ Կուսէն Մարիամայ, եւ էր Աստուած մարմնացեալ իբրեւ զմարդ գտեալ:

¹ B լիեալ

² C լինել... լինել]

³ B լիեալ

⁴ BD փոփոխելով

⁵ C ասէր

⁶ C այլ... տնաւրէնութեանն]

⁷ C նոյնպէս] + եւ

⁸ C զձայնս] զայնս

⁹ C յաւետարանն

¹⁰ C մարմնոյն

¹¹ C նորա]

Բարսեղ ասէ. մի՛ ասէր Աստուծոյ բանին մարդասէր, այլ մանաւանդ՝ մարմնասէր, քանզի թէ ոչ արժանի արար միանալ ի մարդ՝ զիա՞րդ մարդասէր:

Ապողինար ասէ. սիրով զմարդն ի մարդկային մարմին միացեալ, զի իցէ նոյն ինքն Աստուած եւ մարդ:

Բարսեղ ասէ. ոչ եւս մարդկային մարմին, որ ոչն է անձնաւոր բանական¹: Քանզի զիա՞րդ ոչ անձնացեալն անձամբ² բանականաւ մարմին մարդկային կարաց գոլ: Քանզի մարմին՝ մարմին, եւ անձնն անձնէ: Եւ յայնժամ մարդ ասի, յորժամ բանական անձամբ մարմնանայ եւ մարմինն անձնանայ³: |160բ| Արդ, ոչ ոք մարդկային մարմին է, որ ոչ հաւասարեաց⁴ հոգւոյն⁵ բանականի:

Ապողինար ասէ. երկրային մարմինքն⁶ յորժամ ինչ առ ընկալցի անձն բանական՝ մարդ լինի: Եւ եթէ անբան անձն առնկալցի, այլ կենդանի ի մարդոյ լինի⁸: Եւ յայտ նիւթոյ Տէրն ինքեան մարմին ստեղծանելով, եւ զնոյն կենդանացուցեալ իւրով բնութեամբն (որպէս բնաւորեցաւն, անձն ունելով, հաւասար կատարեալ եւ նմա), զիւր զզաւրութիւնն տալով՝ առնէր կենդանի Աստուած՝ ըստ տեսակին եւ մարդ՝ ըստ նիւթոյն:

Բարսեղ ասէ. ըստ տեսակին ոչ իմանամ, կամիս ասել՝ ըստ աստուածութեանն:

Ապողինար ասէ. մարմինն կերպարանեալ՝ աստուածայնովքն⁹ պայծառացեալ զաւրութեամբքն:

Բարսեղ ասէ. զաստուածային ուրեմն զզաւրութիւնն¹⁰ տեսա՞կ¹¹ ասես:

Ապողինար ասէ. այո:

Բարսեղ ասէ. զի յորժամ ինչ զերկրային մարմնոցն առցէ անձն¹² ¹³ բանական՝ մարդ լինի, յայնժամ եւ մարդկային մարմինն լսի եւ լինի: Բայց ոչ առնլով անձն բանական, ոչ¹⁴ մարդկային մարմին է¹⁵: Եւ որ ոչն է մարդկային մարմին¹⁶, զիա՞րդ ասես ըստ¹⁷ նիւթոյն, նիւթոյն յայնժամ մարդկային եղելոյ,

¹ C անձնաւոր բանական] անձնաւորական

² C անձամբ]

³ C եւ մարմինն անձնանայ]

⁴ C հաւասարեաց] հասարակաց

⁵ A հոգոյն

⁶ C մարմինք

⁷ C մարդն

⁸ D լինի] եղելոյն

⁹ B աստուածայնովքն

¹⁰ C զզորութիւնն

¹¹ C տեսակ] տեսական

¹² C անձն] անձնական

¹³ C բանական... եւ]

¹⁴ C ոչ է մարմին է]

¹⁵ C է]

¹⁶ C մարմին] +է

¹⁷ C ըստ] վասն

յորժամ անձն բանական առ ընկալցի: Ես ընթերցայ եւ զվարդապետին ձերոյ զԱպողինարի զխոստովան/161ա/ութիւն, յորում համաբնական ասէ զմարմինն Տեառն¹ Մարիամայ: Եւ զՄարիամ մեզ: Ապա ուրեմն համաբնութիւն մեզ է² տէրունական մարմինն, վասն զի մարդկային:

Ապողինար ասէ. ընդէ՞ր ասես տէրունական մարմին, զոր երբէք մարդոյն կազմեսցես:

Բարսեղ ասէ. ես եւ զմարմինն Տէրունական ասեմ, եւ զանձն Տէրունական, եւ զմիտսն Տէրունական, եւ զարիւնն Տէրունական, եւ զմարդն բոլորովին Տէրունական՝ միաւորութեամբ Աստուածն բանի: Այսպէս, որպէս զի մի Տէր լսեմ³ զնոյն ինքն⁴ զԱստուածն եւ զմարդն⁵: Եւ երբեմն զնոյն ինքն Աստուած, եւ Տէր լսեմ, եւ երբեմն զնոյն ինքն բովանդակ մարդ: Քանզի ինքն յաղագս իւր ասէ, զի՞ «խնդրէք զիս սպանանել մարդ, որ զձջմարտութիւնն ձեզ խաւսեցայ»: Եւ Պաւղոս՝ մարդ «զՅիսուս Քրիստոս երեկ եւ այսաւր, նոյն ինքն եւ յաւիտեանս»: Եւ զնոյն զայս⁶ մարդ թոմասու⁷ շաւշափեալ՝ ասէր. «Տէր իմ եւ Աստուած իմ»: Նմանաբար եւ Պաւղոս ասէ. «յորոց հարքն, յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյն⁸, որ է ի վերայ ամենեցունց Աստուած՝ աւրհնեալ յաւիտեանս. ամէն»: Արդ⁹ Աստուած եւ¹⁰ մարդ բանն յաղագս հաճութեան միաւորութեանն: Քանզի թէ՛ «որ յարին ի Տէր, մի հոգի են», բազում առաւել՝ յորժամ Տէրն ասի լեալ¹¹ մարդ՝ ոչ կորուսանելով զգոլն Աստուած է, /161բ/ նոյն ինքն Աստուած եւ մարդ: Աստուած յաղագս բնութեանն, իսկ մարդ՝ յաղագս հաճութեամբ ընդունելով զմարդկութիւնն:

Ապողինար ասէ. միտս մարդո՞յ ուրեմն ունէր Քրիստոս:

Բարսեղ ասէ. մի ասէր՝ Քրիստոս բաժանելով զմիտսն ունէր: Քանզի երկոքին՝ միտքն եւ բանն, ասի Քրիստոս: Եւ այսպէս՝ միտս մարդկային ասեմ, յորում էր բանն, որպէս ի սկզբան¹² բանիս ասացաք մարմին մարդկային բնութեամբ եւ տնաւրէնութեամբ զԱստուծոյ: ¹³Սոյնպէս եւ զանձն բնութեամբ մարդկային, եւ տնաւրէնութեամբ զԱստուծոյ, եւ զմիտս մարդկային բնութեամբ, եւ տնաւրէնութեամբ զԱստուծոյ: Եւ, զոր աւրինակ, մարմինն ոչ ե-

¹ C տեառն] + մերո

² C է]

³ C զմարդն] տէր լսեմ

⁴ A զմարդ

⁵ C աստուած... երբեմն]

⁶ C զայն

⁷ D թովմասու

⁸ C մարմնո

⁹ D արդ] արդարե

¹⁰ D աստուած եւ]

¹¹ B լիեալ

¹² A սկզբան

¹³ C սոյնպէս... զԱստուծոյ]

տես զապականութիւնն, նոյնպէս¹ եւ ոչ միտք² արարին զմեզս: Եւ որպէս հարկաւոր է բնութեամբ զմարդկային զմարմինս³, յԱզամայ մարմնոյն, եւ յարեւնէն ունել զբնութիւնն, նոյնպէս հարկաւոր է զմարդկային անձն բանական գոյ: Եւ դարձեալ ասեմ, զոր աւրինակ, մարմինն բնութեամբ մարդկային եւ միաւորութեամբ տնաւրէնութեանն՝ աստուածային: Սոյնպէս եւ միտքն՝ բնութեամբ եւ մարդկային եւ միաւորութեամբ տնաւրէնութեանն՝ աստուածային:

Ապողինար ասէ. երկուք ուրեմն կատարեալք:

Բարսեղ ասէ. երկուց զոյութեանց կատարելոց⁴ միաւորութիւն:

Ապողինար ասէ. երկու կատարեալք մի կատարեալ ոչ լինին⁵:

Բարսեղ ասէ. առ մարդկան արդեաւք⁶ անկարելի լինել, բայց առ Աստուծոյ կարելի:

Ապողինար ասէ. զիա՞րդ կարելի:

Բարսեղ ասէ. որպէս կուսին ծնանելն⁷, որպէս ի վերայ ծովուն գնալն⁸, որպէս դրաւքն փակելովք⁹ մարմին թանձրամասն մտանել՝ ի մարմնոյ¹⁰ եւ յուկերաց հաստատեալ: Արդ, զոր աւրինակ այսօքիկ, կարելիք Աստուծոյ եւ այնք:

Ապողինար ասէ. մա՞րդ ուրեմն ծնաւ Մարիամ:

Բարսեղ ասէ. սոսկ ոչ, այլ Աստուած մարդացեալ: Քանզի յառաջագոյն ընդ նմա Տէրն աստուածաբար եւ յայնժամ ի նմանէ տնաւրինաբար մանուկ¹¹, յաղագս որոյ եւ աստուածային Մարիամ:

Ապողինար ասէ. մա՞րդ ուրեմն խաչեցաւ յաղագս մեր:

Բարսեղ ասէ. սոսկ ոչ, այլ Աստուած էր Աստուծոյ Որդին եւ կամեցեալ խաչիլ յաղագս մեր. միացոյց ինքեան մարմին անձնաւոր բանական, զկարելին խաչիլ՝ հանդերձ կամաւոր չարչարանաւք:

Ապողինար ասէ. ընդէ՞ր ասես խաչիլ՝ կամաւոր չարչարանաւք¹²:¹³ Այլ է խաչն եւ այլ է կամաւոր չարչարանքն:

Բարսեղ ասէ. կարի քաջ:

Ապողինար ասէ. եւ զիա՞րդ:

¹ B նոյնպէս] սոյնպէս

² C միտքն

³ C մարմինս

⁴ B կատարելոցդ

⁵ C լինի

⁶ C արդօք

⁷ C ծնանել

⁸ C գնալ

⁹ D փակելօք

¹⁰ C մարմնոյն

¹¹ C մանուկն

¹² C չարչարանաւքն

¹³ C այլ... չարչարանքն]

Բարսեղ ասէ. զի մարմին հոգեւոր բանական¹ խաչել² կարէ, իսկ չար-չար/162բ/անս³ ընդունել կամաւորապէս ոչ կարէ, որ ոչ է հոգեւոր բանական: Եւ այս է ամբարշտութիւն ասողացն, զի ասեն, թէ հոգի ոչ ունէր: Քանզի մարմնոյ⁴ ոչ կարացելոյ զգալ զկամաւոր չարչարանս⁵ առանց հոգւոյ⁶, հարկաւոր է բանին փոխանակ հոգւոյ⁷ լեալ⁸ չարչարանս ընդունել եւ կամ⁹ ոչ բնաւ գոլ զգայութիւն¹⁰ կամաւոր չարչարանացան:

Ապողինար ասէ. եւ ո՞չ չարչարեցաւ բանն:

Բարսեղ ասէ. միացուցեալ ընքեան¹¹ զկարելին չարչարել մարմին, որպէս զի գոլ զչարչարանսն տնաւրէնութեանն եւ ոչ բնութեան բանին: Զոր աւրինակ վաստակեցաւ յուղեգնացութեան¹², ոչ բնութիւն աստուածութեանն, այլ միաւորութիւն տնաւրէնութեանն: Ապա թէ ոչ՝ որ արարն զերկինս եւ զերկիր առանց աշխատութեան եւ զնայր¹³ ի վերայ թեւոց հողմոց. զիւրոք արդեաւ¹⁴ աշխատեցաւ, եթէ ոչ միացոյց ինքեան զկարելին՝ վաստակել մարմին: Զի մարմին առանց հոգւոյ¹⁵ ո՞չ աշխատի, ո՞չ վաստակէ: Զոր աւրինակ, նորա մարմինն է, զոր միացոյցնն ընքեան հոգեւոր մարմին ոչ բնութեամբ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: Սոյնպէս նորա¹⁶ աշխ/163ա/ատու-թիւնն ոչ բնութեամբ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն եւ նորին չարչարանքն ոչ բնութեամբ (քանզի անչարչարելի է բնութիւնն¹⁷), այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: Վասն զի յաղագս չարչարանացն էր միաւորութիւնն, եւ յաղագս փրկութեանն էին չարչարանքն: Քանզի կեցուցանել կամելով՝ չարչարեցաւ, եւ չարչարել կամելով¹⁸ միացոյց, եւ միացուցեալ ոչ եթող, զի նոյնպէս եկեացէ, զոր աւրինակ, տեսէք զնա երթեալ յերկինս եւ հայեցեալ տեսցեն¹⁹, զոր խոցեցինն:

¹ A բանական]

² C խաչիլ

³ C զչարչարանս

⁴ C մարմնոյն

⁵ C չարչարանսն

⁶ A հոգոյ

⁷ A հոգոյ

⁸ B լիալ B տալ

⁹ BD կամ]

¹⁰ C զգայութիւն] սգայութիւն

¹¹ C ընքեան] ընդ ինքեն

¹² C յուղեգնացութեանն

¹³ C զնա

¹⁴ C արդեաւք]

¹⁵ A հոգոյ

¹⁶ C նորա]

¹⁷ C բնութեամբ

¹⁸ C կամեցաւ

¹⁹ C տեսցեն] տեսին

Ապողինար ասէ. այլազգաբար արդեաւ¹ ոչ կարէր ապրեցուցանել:

Բարսեղ ասէ. այլ այնպէս կամեցաւ ապրեցուցանել՝ յիմարութեամբ քարոզութեանն:

Ապողինար ասէ. եթէ զմիտս մարդոյ ունէր՝ կարէր եւ մեղանչել:

Բարսեղ ասէ. եթէ ոչ էր միացեալ ընդ աստուածութեանն միտքն՝ այո:

Ապողինար ասէ. փոփոխելի² ուրեմն էր Քրիստոս:

Բարսեղ ասէ. մի՛ լիցի:

Ապողինար ասէ. զի եթէ կարէր մեղանչել՝ փոփոխելի էր:

Բարսեղ ասէ. յիշեա՛ զասացեալն, քանզի ասացի թէ՛ ոչ էր միացեալ ընդ աստուածութեանն միտքն, այո՛: Քանզի Քրիստոս Յիսուս² առանց միաւորութեանն ո՛չ իմանի |163բ| Քրիստոս Յիսուս³, այլ Աստուածն բան⁴, որդի Աստուծոյ գոյացեալ: Եթէ կարիցես գտանել անձնաւոր մարմին առանց միաւորութեան բանին՝ ի նմա փոփոխումն, ապա թէ միանգամայն մարմին, միանգամայն Աստուծոյ բանին հոգեւոր բանական մարմին, զի⁵ խնդրես փոփոխումն:

Ապողինար ասէ. եթէ զմիտս⁵ մարդոյ ունէր եւ մոռացումն, եւ զանգիտութիւն ունէր, եւ⁶ մեղանչել կարէր:

Բարսեղ ասէ. եթէ ոչ էր միացեալ ընդ աստուածութեանն, այո⁷: Եւ մի՛ ասէր միտս մարդոյ ունէր, քանզի ոչ զայլոյ ուրուք՝ զմարդոյ ունէր միտս, այլ թէ⁸ ասա զմարդկային միտսն ընկալաւ բանն, զոր աւրինակ զմարդկային մարմինս:

Ապողինար ասէ. զիա՞րդ կարէր մարդկային միտքն ոչ փոփոխել:

Բարսեղ ասէ. որպէս մահկանացու այս՝ զգենլով⁹ զանմահութիւն՝ ոչ եւս մեռանի, եւ ապականացու այս՝ զգենլով¹⁰ զանապականութիւն՝ ոչ եւս ապականի. սոյնպէս եւ միտքն՝ աստուածացեալք միաւորութեամբ Աստուծոյ բանին՝ ոչ փոփոխի:

Ապողինար ասէ. ապա ուրեմն եւ սուրբքն անփոփոխելի⁹ ունէին զմիտս:

Բարսեղ ասէ. ո՛չ:

Ապողինար ասէ. ընդէ՞ր. ո՞չ եւ ի նոսա էր բանն:

¹ C արդօք

² D Յիսուս Քրիստոս

³ D Յիսուս Քրիստոս

⁴ C աստուածն բան] աստուած բանն

⁵ C միտս

⁶ C եւ]

⁷ C այո] այլ

⁸ D թէ] + արդեօք

⁹ C զգենլով] սգենլով

¹⁰ C զգենլով] սգենլով

Բարսեղ ասէ. այլ ի սուրբսն¹ ոչ ըստ միաւորութեանն էր, այլ ըստ Հոգւոյն² շնորհի, զանազանաբար ի նոսա³ նորա |164ա| զաւրանալով, իսկ աստ ամենայն լիութիւն աստուածութեանն: Եւ սուրբքն ընդունակ բանին էին, իսկ աստ բանն ընկալաւ զմարդկութիւնն:

Ապողինար ասէ. ասա արեան եւ մարմնոյ՝ որպէս եւ զբեցաւն:

Բարսեղ ասէ. սովորութիւն է Գրոց զբովանդակ զմարդն մարմին եւ արիւն կոչել, որպէս յորժամ ասէ՝ ոչ վերագրեցի արեան եւ մարմնոյ,⁴ եւ ի վերջին աւուրս Հեղից յոգւոյ⁵ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ, եւ դարձեալ ոչ մնասցէ Հոգի իմ ի մարդկան յայդմիկ յազագս գոլ զդոսա մարմին, եւ որ ինչ այսպիսիք⁶:

Ապողինար ասէ. զի՞նչ է՝ սուրբքն ընկալան զբանն, եւ Աստուած բանն ոչ ընկալաւ: Զի՞նչ է զանազանութիւնն:

Բարսեղ ասէ. զի սուրբքն յառաջագոյն գոյացեալք եւ ապա յայնժամ ընկալան զԱստուածն բան, իսկ աստ ոչ ասպէս, այլ որ էրն նախ քան զյաւիտեանս Աստուածն⁷ բանն՝ կամեցեալ մարդանալ⁸, սրբեաց զԿոյսն եւ միացոյց ինքեան մարմին՝ գոչ յառաջագոյնն գոյացեալ⁹ եւ ապա միացեալ, այլ ի նմին միութենէ գոյացոյց:

Ապողինար ասէ. երկուք ուրեմն իշխանք են ի մարմնին՝ Աստուածն բան եւ միտքն մարդկայինք:

Բարսեղ ասէ. այլ ինքն բանն առաջնորդ էր մտ|164բ|ացն:

Ապողինար ասէ. զիա՞րդ կարէր:

Բարսեղ ասէ. զոր աւրինակ սպիտակութիւն ասրու ներկեալ գունով ծիրանոյ ոչ երկու գոյն¹⁰ է, այլ մի: Նոյնպէս եւ¹¹ միտքն՝ պայծառացեալք եւ աստուածացեալք՝ մի է, ոչ եւ երկուք առաջնորդականք: Քանզի ոչ այլ ինչ խաւսին միտքն եւ այլ՝ բանն: Այլ որպէս երաժշտական գործին ոչ երկու երաժշտականք¹², այլ մի, սոյնպէս¹³ Աստուածն՝ բանն եւ միտքն՝ մարդկայինք

¹ ABC սուրբն
² AC Հոգոյն
³ C ի նոսա]
⁴ C եւ... իմմէ]
⁵ A յոգոջ
⁶ C այսպիսիքս
⁷ C աստուած
⁸ AB մարդանալ] մարկանալ
⁹ C գոացել
¹⁰ C երկու գոյն] երկնագոյն
¹¹ ABD նոյնպէս եւ սոյնպէս
¹² C ոչ երկու երաժշտականք C երաժշտականքն D երաժշտականն D + եւ
¹³ C սոյնպէս] + եւ

ոչ երկուք իշխանականք, այլ մի: Քանզի փոխանակ գործուոյ¹ միտքն մարդկայինք եւ նովիմբք վարէր բանն:

Ապողինար ասէ. այլ գործի երաժշտականին առանց մտաց է:

Բարսեղ ասէ. եւ երաժշտականն՝ մահկանացու, իսկ աստ բանն անմահ էր², եւ մտաւքն վարի գործով³: Եւ, զոր աւրինակ ի մեզ միտքն մարմնով⁴ վարին գործով, զի ի ձեռն մարմնոյն⁵ կատարելութիւն, ⁶նոյնպէս եւ անդ բանն մտաւքն վարէր գործեալ⁷, զի ի ձեռն մտացն կատարելութիւն:

Ապողինար ասէ. եւ զի⁸նչ եւս մարմնոյն պետք էին:

Բարսեղ ասէ. յաղագս բազմաց, զի երեւել կամեցաւ եւ զի երկաքանչիւրովքն էր կորուսեալ, եւ նմանովն զնմանն ապրեցուսցէ խաչիւն, եւ կամաւոր չարչարանաւքն հաճեցաւ, եւ ի կամաւոր չարչարանս մտ/165ա/աւքն վարեցաւ, որպէս յառաջն ասացի, գործեալ⁸ իսկ՝ ի մարմնականսն մարմնովն: Եւ այսպէս խնդրելով եւ գտանելով միացոյց եւ ապրեցոյց զկորուսեալն:

Ապողինար ասէ. որո՞վք ասեք մարմնականաւք:

Բարսեղ ասէ. խաչիւն, թաղմամբն, գնալովն, շաւշափելովն, կերակրովն, ըմպելեալն⁹ եւ որ այդոցիկ զհետ երթան:

Ապողինար ասէ. Աստուած էր բանն, որ ծնաւն ի Մարիամայ:

Բարսեղ ասէ. էութիւնն ծնեալն ի Մարիամայ ի նորա¹⁰ բնութենէն, ոչ էր բնաբար Աստուած, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն:

Ապողինար ասէ. եւ զի¹¹րդ՝ «աւրհնեալ պտուղ որովայնի քո» ասի:

Բարսեղ ասէ. վասն զի, որ ի բնութենէ չաւր էր Աստուածն, բան ի բնութենէն Մարիամայ, էառ պատկեր ծառայի եւ ձեռով գտեալ իբրեւ զմարդ՝ պտուղ որովայնի նորա գտաւ:

¹¹Ապողինար ասէ. յարեցա՞ւ ուրեմն բանն ի ծնեալ ¹²մարմինն ի Մարիամայ՝ իբրեւ զկենդանի:

Բարսեղ ասէ. իբրեւ զկենդանի ոչ գրեցաւ, այլ իբրեւ զԱստուած ի տաճարի կենդանուջ¹³:

¹ ACD գործոյ

² C է] էր

³ C գործօք

⁴ C մարմնովն

⁵ D մարմնոյն] մտացն

⁶ D նոյնպէս... կատարելութիւն]

⁷ C գործով

⁸ C գործե

⁹ C ըմբելովն

¹⁰ C նորա] նոյն

¹¹ D Ապողինար... ծնեալ]

¹² C մարմինն... կենդանուջ]

¹³ A կենդանուջ

Ապողինար ասէ. եւ յիւրաքանչիւր ումեք ի սրբոցն այսպէ՞ս է՝ որպէս ի տաճարի կենդանւոջ¹:

Բարսեղ ասէ². ոչ այնպէս է: Քանզի իւրաքանչիւր ոք ի սրբոցն այնքան եղեն տաճարք, որքան կարացին |165բ| առաքինութեամբ եւ ճգնութեամբ ուղղել: Իսկ աստ ամենայն լիութիւն աստուածութեան բնակէ, եւ սուրբքն զպատկեր Աստուծոյ առաքինութեամբ ուղղեալք, բայց աստ բանն զպատկեր ծառայի էառ:

Ապողինար ասէ. այն, որ ի հոգւոյ³ եւ ի մարմնոյ գոյացաւ տաճարն, մարդ էր:

Բարսեղ ասէ. եթէ առանց բանին իմանի, այո՛, իսկ եթէ ոչ է, յորժամ առանց բանին իմանի, ոչ է մարդ սոսկ, այլ Աստուած՝ միաւորութեամբ բանին:

Ապողինար ասէ. ծնեալն ի Մարիամայ տաճար ոչ թափուր ծնաւ եւ ունայն, այլ հանդերձ⁴ բնակչաւն, յաղագս որոյ եւ ինքն է Յիսուս, որով ամենայնք:

Բարսեղ ասէ. արդ՝ ո՛չ զտաճարն կոչեմ Յիսուս՝ առանց բանին եւ ոչ զբանն՝ առանց տաճարին, այլ յայնմ հետէ Յիսուս բանն⁵ կոչեցաւ, յորմէ հետէ բժշկեաց զբեկուծն ժողովրդեանն իւրոյ: Եւ յայնժամ բժշկեաց, յորժամ արժանաւորեաց զպատկեր ծառայի առնուլ: Արդ, այս բան, որ այժմ Յիսուս⁶ յաղագս տնաւրէնութեանն կոչեցաւ, նոյն է, որով⁷ ամենայնքն: Եւ որպէս զհրացեալն երկաթ հուր եւ երկաթ իմանամք, սոյնպէս զՅիսուս Աստուածն բան մարդացեալ:

Ապողինար ասէ. տաճա՞րն, որով ամենայնք, թէ՞ որ ի տաճարին:

Բարսեղ ասէ. մի՛ բաժանէր զ|166ա|տաճարն ի բնակողէն⁸, քանզի եթէ՝ «որ յարին ի Տէր, մի հոգի են» բազում առաւել, յորժամ Տէրն ասի լեալ⁹ մարդ եւ հաւատարիմ է միաւորեալ պատկէր ծառայի, մի է եւ նոյն Աստուած եւ մարդ:

Ապողինար ասէ. ո՞չ ուրեմն է մարդ ծնեալն ի Մարիամայ:

Բարսեղ ասէ. միայն մարդ՝ ոչ:

Ապողինար ասէ. այլ եւ զի՞նչ:

Բարսեղ ասէ. եւ Աստուած, քանզի որպէս ոչ է մարմին միայն Սաակ ծնեալն յԱբրաամէ եւ ոչ այլ ոք ի մարդկանէ, այլ եւ հոգի եւ մարդ ի մարդոյ

¹ AC կենդանոջ

² A ասէ]

³ A հոգոյ C հոգոյն

⁴ AE հանդերձ]

⁵ C բան

⁶ C Յիսուս] Աստուծոյ

⁷ C որովք

⁸ A բնակաւղէն

⁹ B լիալ

ծնեալ իւրաքանչիւր ոք ի մէնջ է բանական կենդանի, բայց ոչ ծնեալ հոգւոյն¹ բանականի:

190. Սուլյն Հարցումի բնագրում «Բարսեղ ասէ»-ի փոխարեն ամենուր ունենք պարզապէս «ուղղափառ»:

191. Միաւորութեամբ ընթերցման փոխարեն բնագրում ունենք տնայրեանութեամբ (տե՛ս էջ 1249):

192. Արդ... առձիւն միտքը բնագրային հիմք չունի. այն հավանաբար թարգմանչի հավելում է, որը նույնությամբ պահպանվել է բոլոր գրչագրերում:

193. Բնագրում Քրիստոսի փոխարեն ունենք «τοῦ Κυρίου» (էջ 1552):

194. Բնագրում «ապա գիւրգ կարելի»-ի փոխարեն ունենք գիարդ (πῶς, էջ 1253):

195. Սուլյն հատվածի հայերեն թարգմանութեան և բնագրի միջև մասնակի անհամապատասխանություն կա:

196. Բնագրում իբրև շարունակություն ունենք ևս մեկ հարց և պատասխան, որը բացակայում է հայերեն թարգմանութեան ձեռագրերում: Ահա այն. «Ὁρθ· φυσικῶς μὴ γένοιτο! Ἀπολλ. Ὁλωσ ἐ'παθεν» (էջ 1253):

197. Այս, ինչպէս նաև շարունակութեան աստուածութեան ընթերցումները բնագրով չեն հաստատվում (տե՛ս էջ 1256), ուստի և թարգմանչի (կամ գրչի) միջամտութեամբ են հայտնվել հայերեն թարգմանութեան տեքստում:

198. Բնագրի շարունակութեան «ὁ Χριστὸς»-ը (էջ 1256) հայերեն թարգմանութեան ձեռագրերում բացակայում է:

199. Բնագրի հարցադրումը այս դեպքում մի փոքր այլ է՝ «πῶς οἶόν τε μὴ εἶναι δύο» (էջ 1257):

200. Բնագրի պարբերությունների համարակալման շփոթ կա. վրիպմամբ այս և նախորդ պարբերությունները ունեն միևնույն 5 թվահամարը:

201. Հայերեն թարգմանութեան բոլոր ձեռագրերով ավանդված այս և հաջորդ մտքի «Ի Մարիամս»-ն հավանաբար թարգմանչի միջամտութեան արդյունք են: Երկու դեպքում էլ բնագրում ունենք «αὐτῆς» (= նորա, էջ 1257):

202. ԶԱստուած ընթերցումը թեև բնագրային հիմնավորում չունի (տե՛ս էջ 1257), սակայն պահպանվել է բոլոր գրչագրերով և, թվում է, հայերեն թարգմանութեան համար արդարացված միջամտություն է:

203. Բնագրում տաճար-ին հաջորդում է Յիսուս անվանումը (էջ 1257), որը բացակայում է հայերեն թարգմանութեան ձեռագրերում:

204. Բնագրի համընթաց շարունակություն ակնկալելու դեպքում պիտի ունենայինք Աստուծոյ բան (տե՛ս էջ 1266), սակայն օտարվել է Աստուծոյ ընթերցումը և կապակցությունը պահպանվել է բանն մարդացեալ տեսքով:

¹ AC հոգոյն

205. Հմմտ. ծան. 201: Այս և շարունակության Ի Մարիամայ ընթերցումների դիմաց բնագրում ունենք «αὐτῆς» (էջ 1260):

206. Հունարենի նմանությամբ կազմված ի մարդու (= ἐν ἀνθρώπῳ, էջ 1261) հոլովածև սույն Հարցումում հանդիպում է երեք տարբեր առիթներով: «Պահոց գրքի» մյուս նյութերում, որքան մեզ հայտնի է, այդ հոլովածև այլևս չի հանդիպում:

207. Աստուած և արհայտությունը գրեթէ բոլոր ձեռագրերով ավանդված թարգմանչի կամ, թերևս, գրչի ձեռքով կատարված ընդմիջարկություն է: Բնագրում բուն կապակցությունը պահպանվել է գոյ մարդ (εἶναι ἄνθρωπον, էջ 1261) տեսքով:

208. Լինել բայածև վերականգնում ենք ըստ բնագրի (σάρκα γενέσθαι, էջ 1261) և բուն հատվածի թելադրանքով:

209. Հայերեն թարգմանություն բոլոր ընդօրինակություններում ի մարմնի լեալ կապակցությունը հաջորդում է հետևյալ միտքը. «մարմին ասի լեալ է՝ ոչ փոփոխելով ի մարմին, եւ ի մարդ լեալ», որը բնագրով չհաստատվելուց բացի, անհարկի ընդմիջարկության տպավորություն է թողնում, ուստի այն դուրս թողինք հայերեն թարգմանություն համապատասխան գրվագից:

210. Բնագրում Ուղղափառի հերթական պատասխանը սկսվում է հայերեն թարգմանություն համար բոլորովին անծանոթ հետևյալ ձևակերպմամբ. ո՛չ իցէ Աստուած եւ մարդ (οὐκ ἔστι Θεός καὶ ἄνθρωπος, էջ 1264):

211. Բնագրում ունենք Տեսուն մերոյ (τοῦ Κυρίου ἡμῶν, էջ 1264):

212. Զմիտսն Տերունական թվարկումը հայերեն թարգմանություն բոլոր ձեռագրերով ավանդված հավանաբար ոչ պատահական միջամտություն է:

213. Բնագրում ամեն-ը բացակայում է:

214. Սույն հիշատակարանաբնույթ հաղորդումը ըստ բնագրի ավարտվում է ընդունելով գմարդկությունն արտահայտությամբ, մինչդեռ հայերեն ձեռագրերի մի մասում այն ունի շարունակություն: Ահա այդ հատվածը. «Հավատամք ի ճշմարտականի Հայրն Աստուած ի ճշմարտական յՈրդին Միածին Աստուած, ի ճշմարտականի Հոգին Աստուած: Աստուած՝ երեքեան, արարիչ՝ մոյնք: Լոյս երեքեան, անմահութիւն երեքեան, կեանք եւ յարութիւն երեքեան եւ անսահմանական եւ մոյնք՝ ինքնաշարժք, մշտաշարժք, պարզք, անշաղք, անշարտդելիք: Եւ ամենայն, որ ինչ Հայր, մոյնք եւ Որդի եւ Հոգի: Ինքն Հայր եւ ոչ յումեքէ եղեալ: Եւ չիք ժամանակ, յորում ոչ էր, այլ է յառաջ, քան զամենայն յաիտեանս: Ծնունդն ասի Որդի Միածին եւ ճշմարիտ, այլ մայի էր ծնունդն, զի յորժամ Հայր էր ընդ մին եր Որդի: Եթէ ոք կարծէ մտաք իրովք խոնարհեցուցանել զՈրդի, խոնարհեցուցանել ջանայ եւ զՀայր, յորմէ հետէ էր արեգակն արդարութեան, ընդ մին եր եւ ճառագայթն ճառագայտոր: Ապա եթէ էր արեգակն, եւ լոյսն ճառագայթեալ էր եւ էր սպա, եւ մա գրկեալ էր ի լուսոյն: Եւ յորժամ ծնեալ ասի, այսպէս իմանամք զծնունդն՝ լոյս ի լուսոյ ծնեալ հոգեպէս աստուածային զարութեամք, անմիջորդապէս, անհատաբար, անբաժանաբարապէս, զի՝ եւ ի Հայր եւ Հայր՝ յիս,

որ ետես գիս, ետես զՀայր: Նորին Հայր բնութեամբ իմանի Որդին ճշմարիտ ըստ ասացելումն, թե՛ ես եւ Հայր մի եմք, զոր ունի Հայր՝ իմ է եւ իմիքն՝ Հայր եմ» (ձեռ. № 3710, էջ 374բ, հմմտ. ձեռ. № 497, էջ 470):

215. «Տեսութիւն Բարսղի եւ Գրիգորի զհաւատոց» գործի բնագիրը մեզ չհաջողվեց գտնել: Ութ տասնյակից ավելի ձեռագրերով պահպանված սույն երկասիրութեան հայերեն թարգմանութիւնը միջնադարում հայտնի է եղել երբեք հիմնական խմբագրութեամբ. ա) «Հարցումն Բարսղի եւ սուրբ Գրիգոր Աստուածաբանին», բ) «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի եւ Բարսղի ասացեալ», գ) «Հարցմունք Գրիգորի Աստուածաբանի եւ սրբոյն Բարսղի»: Պարզվում է, որ մեզանում նախապես եղել է Բարսղի և Գրիգորի նշված աշխատանքի մեկ թարգմանութիւն՝ «Տեսութիւն յաղագս հաւատոյ...» խորագրի տակ: Այնուհետև միջնադարում որոշակի միջավայրի ու անհրաժեշտութեան թելադրանքով առաջացել են հիշյալ, այսպես կոչված՝ Կեդծ խմբագրութիւնները, որոնք «սակս ընդունելութեան» վերագրվել են Բարսեղ Կեսարացուն և Գրիգոր Նազիանզացուն: Սակայն, ինչպէս և սպասելի էր, նշված Կեդծ խմբագրութիւնները անծանոթ են հայ մատենագիրներին, մինչդեռ «Տեսութեան...» հայերեն թարգմանութիւնից բառացի քաղում է կատարում Ստեփանոս Ասողիկը (մանրամասն տե՛ս Կ. Մ. Մուրադյան, էջ 57-69):

216. Բնագիրը տե՛ս PG, t. 32, էջ 953-968 (Օπτίμω ἐπισκόπω):

217. Բազմախմբաւ (πολυθρόυλλητος, էջ 956) բառի բացատրութեան առիթով վկայած Նոր հայկազյան բառարանագիրների միակ օրինակը սույն կիրառութիւնն է:

218. Բնագրում հայերեն թարգմանութեան եղբարն ընթերցման դիմաց ունենք «τοῦ Ἄβελ» (էջ 957):

219. Հայերեն թարգմանութիւնից կրկին օտարվել է Աբել անձնանունը, որը կա հունարենում «Ἄβελ ὁ ἀδελφός» (էջ 957):

220. Բնագրում ունենք եաթն գմեղսն (ἐπτά ἀμαρτήματα, էջ 960):

221. Աստուած եւ Տէր անվանումների փոխարեն բնագրում ունենք միայն «Δεσπότης» (էջ 960):

222. Հայերեն թարգմանութիւնից օտարվել է բնագրի հետևյալ միտքը. «οὐ γὰρ ἐδίδου τὴν ἰσχύν» (էջ 961):

223. Սույն հատվածում բնագրի և թարգմանութեան անհամապատասխանութիւնն կա:

224. Հատվածիս հայերեն թարգմանութիւնը պակասավոր է: Համեմատութիւնը ցույց է տալիս, որ բնագրի մի ոչ մեծ հատված (ἀνδρα ἀπέκτεινα ... αὐτός διηγείται, էջ 961) ուղղակի մեխանիկական ճանապարհով դուրս է մնացել հայերեն թարգմանութիւնից. դրան նպաստել է, թերևս, այդ բառով կազմված նույնատիպ կապակցութեան մերձավոր կրկնութիւնը բնագրում:

225. Բնագրում սույն թվարկումը շարունակվում է՝ «καὶ τό μέγεθος τῆς ὀργῆς τοῦ Θεοῦ» (էջ 964), որը չունեն հայերեն թարգմանության ձեռագրերը:

226. Սույն թղթի բնագիրը մեզ չհաջողվեց գտնել:

227. Թարգմանության ճանապարհով առաջացած աղբյուրների բառը անձանոթ է մեր բառարանագրությանը:

228. Բնագիրը տե՛ս Saint Basile, *Letters*, t. I, Paris, 1957, էջ 5-13 (Γρηγορίω ἐταίρω), Հմմտ. PG, t. 32, էջ 234 (Βασίλειος Γρηγορίω): Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ հայերենը նման չէ հունարեն ձևակերպումներին: Հայերենում առկա վերջընթեր «յազագս վարուց» բնորոշումը տեղական միջամտության արդյունք է և պայմանավորված է թղթի բուն բովանդակությամբ:

229. Դժուարսոսիական (δυσέρωτος, էջ 6) բառի նոր հայկազյան բառարանագիրների բացատրության միակ օրինակը սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 620):

230. Ներդեպի-ը (բնագրում՝ ἐγγινομένας, էջ 7) հունարենի հիմքի վրա առաջացած եզակի կիրառություն է:

231. Ցրտացեպի-ը (բնագրում՝ καταψηχθέντα, էջ 7) ևս հունարենի նմանությունը կազմված եզակի վկայություն է:

232. Թարգմանության ճանապարհով առաջացած ժանտարկու (ιοβόλος, էջ 7) բառը անձանոթ է հայ բառարանագրությանը:

233. Բարիորդութիւն (καλλίπαις, էջ 9) բառը նոր հայկազյան բառարանագիրներին ծանոթ է միայն սույն կիրառությամբ (տե՛ս ՆՀԲ, Ա. 459):

234. Հատվածիս հայերեն թարգմանությունը համընթաց չէ հունարենի հետ. մասնավորապես նկատելու է, որ «արի ըստ Աստուծոյ» կապակցության դիմաց բնագրում ունենք «τὸν Δαβὶδ γενναῖον» (էջ 9):

235. Անկարծական բառը այլուր վկայված չէ, ուստի և անձանոթ է գրաբարի բառարանագիրներին: Սույն եզակի վկայությունը առաջացել է հունարենի «ἀπροσδόκητος» (էջ 10) բառը թարգմանելու ճանապարհով:

236. Լաւարարդութիւն բառն անձանոթ է նոր հայկազյան բառարանագիրներին: Թարգմանական ճանապարհով առաջացած սույն բառի հիմքը հունարեն «εὐγνώμωνος» (էջ 10) ընթերցումն է:

237. Հայերեն թարգմանության ձեռագրերը չունեն բնագրում իբրև շարունակություն ընթերցվող հետևյալ միտքը. «Πανταχοῦ τὸ τραχύ, κὰν ἐπιτιμῆσαι δέη, ἀπωθοῦμενον» (էջ 11):

238. Օրագիշեր (ἡμερονύκτιον, էջ 12) բառի միակ վկայությունը այս նույն կիրառությունն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 1031):

239. Հմմտ. ՆՀԲ, Բ. 277:

240. Բնագիրը տե՛ս Saint Basile, *Letters*, t. I, էջ 52-57 (Περί τελειότητος βίων μονάχων): Խոսելով Սեանում, Սանահնում և այլուր գործող վանական հաս-

տատությունների մասին՝ Ասողիկը նկատում է, որ այդ հոգևոր միավորումները ձևավորվել և գործում էին «ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի» (տե՛ս «Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 181): Պրոֆ. Վ. Հակոբյանը ենթադրում է, որ Ասողիկը նկատի ունի Բարսեղ Կեսարացու այս նույն կանոնական թուղթը: Նա գրում է. «սակայն այն փաստը, որ այս կանոնախումբը վանականների կենցաղավարութեան մասին է, և այդ հարցի մասին Բարսեղ Կեսարացուց մեզ այլ բան հայտնի չէ, ենթադրում ենք, որ Ասողիկը ակնարկել է սույն կանոնախմբին («Կանոնագիրք Հայոց», Բ. աշխատասիրութեամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ CXI, ծան. 4, հմմտ. էջ 377):

241. Թղթիս հայերեն թարգմանութեան սկզբնամասը, մինչև առաջին պարբերութիւնը, թարգմանչի հավելում է, հավանաբար ըստ Բարսեղ Կեսարացու ինչ-որ գործի:

242. Հայերեն թարգմանութեան որոշ գրչագրեր սույն կանոնական թվարկումները ներկայացնում են համարակալված տեսքով: Հունարենում առկա է առանց համարակալման պարզ թվարկում, որին և հետևում ենք:

243. Սույն միտքը «Պահոց գրքի» հայերեն ձեռագրերում երկու առանձին կետերի բաժանելու ձգտում կա: Հունարենում այն մեկն է:

244. Հայերեն թարգմանիչը բնագրի «διαβάλλω» (էջ 53) բառը թարգմանել է չարախաւսութիւն, որի հիմնական, բուն նշանակութիւնը բոլորովին այլ է (տե՛ս ԸԴ-ՄԿ, I, 363): Մինչդեռ սույն և հաջորդ կետերում առկա է «καταλαλιά» (էջ 53) բառը, որը իրոք նշանակում է չարախաւսութիւն:

245. Ծղուալան (πέριπερος, էջ 55) բառի միակ վկայութիւնը սույն կիրառութիւնն է: Նոր հայկազյան բառարանագիրները այն բացատրում են «կօշիկ զարդարուն, մոյլ պաճուճազարդ՝ կանացի» (ՆՀԲ, Բ. 481):

246. Հմմտ. ՆՀԲ, Ա. 807:

247. Հայերեն թարգմանութեան բոլոր գրչագրերում սույն կետը նախորդի հետ ընդհանրացված տեսքով է ներկայացվում: Սակայն բնագրում գրանք մատուցվում են առանձին, որին և հետևում ենք: «Պարտ է» եղանակավորող ձևը վերականգնել ենք ըստ բնագրի. դա մասամբ հաստատվում է նաև D գրչագրի տվյալներով:

248. Հայերեն թարգմանութիւնն այս մասում ընդհատվում է. բնագրում սույն կետը շարունակվում է: Ավելին, իբրև բուն թղթի շարունակութիւն հետևում է նույնաբնույթ յոթ կետ ևս (տե՛ս բնագիր, էջ 57):

249. Բնագիրը տե՛ս Saint Basile, Letters, t. II, Paris, 1961, էջ 88-92, հմմտ. PG, t. 32, էջ 622-628: Երկու հրատարակութիւնում էլ խորագիրը նույնն է՝ «Διόδωρον»:

250. Հմմտ. «Կանոնագիրք Հայոց», Ա. էջ 620 որք իսկ գրան:

251. Հմմտ. «Կանոնագիրք Հայոց», Ա. էջ 620ժ գրան էտո:
252. Հմմտ. «Կանոնագիրք Հայոց», Ա. էջ 621Ղ գի առ:
253. Հմմտ. «Կանոնագիրք Հայոց», Ա. էջ 621Ղ ճաճեմ:
254. Այս և հաջորդ կիրառությունները վերաբերում են խորթ մոր գործու-
նեությանը:
255. Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 217-237:
256. Բնագրում՝ «συνείροσιν» (էջ 220). ունի «ի տող արկանել, շարել, դա-
սաւորել հետզհետէ, կարգել, հիւսել, յեռուլ, յաճախել, կուտել» իմաստները
(ՆՀԲ, Բ. 888):
257. Բնագրում՝ «ὁ Ἀπόστολος» (էջ 221):
258. Հայերեն թարգմանության գրչագրերում աւետարանական ընթերցումը
միակն է, որի դիմաց բնագրում ունենք «ἀγγελικῶν» (էջ 224):
259. Բան եւ զարուբիւնք կապակցության դիմաց բնագրում ունենք բանի զա-
րուբիւն (λόγου δύναμιν, էջ 224):
260. Հմմտ. ՆՀԲ, Բ. 254:
261. Հմմտ. ՆՀԲ, Ա. 1128:
262. Ի Պաղոսէ մասնավորեցումը տեղական միջամտության արդյունք է:
263. Բնագրում ունենք՝ «ἀδελφέ μου» (էջ 225):
264. «Եւ համայն... զարթուցից զնա» հատվածի հրատարակությունը տե՛ս
«Կնիք հաւատոյ», էջ 259:
265. Ղազարէ-ն հունարեն կոչական հոլովածէն է (Λάζαρε, էջ 228) նույնու-
թյամբ փոխանցված հայերենի:
266. Հմմտ. ՆՀԲ, Բ. 899:
267. Սգաւիրութիւն (φιλοπενθές, էջ 229) բառի կիրառության միակ օրինակը
սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 704):
268. Բազմարտաւար (πολύδακρυς, էջ 229) բառի վկայության այլ օրինակ ծա-
նոթ չէ հայ բառարանագրությանը (տե՛ս ՆՀԲ, Ա. 417):
269. Հմմտ. ՆՀԲ, Ա. 164:
270. Հայերեն թարգմանությունից ինչ-ինչ պատճառով դուրս է մնացել
մագերը չփետելու մասին բնագրի հետեյալ հաղորդումը. «οὐ κατετίλατο
κόμην» (էջ 232):
271. Նոր հայկազյան բառարանագիրներին սմպատակ (= փորձաքար, բնագ-
րում՝ «λίθος», էջ 236) բառի կիրառության ուրիշ օրինակ ծանոթ չէ (տե՛ս
ՆՀԲ, Բ. 724):
272. Բնագրում՝ «τοῦ Ἀποστόλου» (էջ 236):
273. Հայերեն թարգմանության լատիներէից-ը բնագրային հիմնավորում չու-
նի:
274. Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 237-261:

275. Հմմտ. բնագիր՝ «ἀνδρειότεραν» (էջ 237):

276. Հմմտ. ՆՀԲ, Բ. 987:

277. Բնագրում՝ «Ἰεριχουντίους» (էջ 241):

278. Հայերեն թարգմանության ձեռագրերում գնախաճառ ընթերցումը միակն է, որի փոխարեն բնագրի թերադրանքով սպասելի էր աղաւթք - «προσευχή»: Այժմ դժվար է գնախաճառ բառի կիրառության շուրջ որեւէ բացատրություն առաջադրել, բայց մի բան պարզ է, որ այն չի պատճառաբանվում հունարենով (բնագրում ունենք՝ τὴν προσευχὴν, էջ 244):

279. Հմմտ. ՆՀԲ, Ա. 616:

280. Բնագրում ունենք պարզապես գՏԷր մեր (տե՛ս էջ 249): Շարունակության Յիսուս Քրիստոս-ը հավանաբար թարգմանչի հավելում է կամ հետագա ընդմիջարկություն:

281. Ըստ կենցաղոյս արտահայտությունը, դատելով բնագրից (κατὰ τὸν βίον, էջ 249) և սույն ճառի հայերեն թարգմանությունում եղած համաբնույթ այլ օրինակներից («ըստ հաւասարութեան կենաց», էջ 211ա, «իմն հաւասարութեամբ կենաց», էջ 212բ) ճիշտ կլինե՞ր պահել ըստ կենաց տեսքով: Սակայն հայերեն ձեռագրերը այդ հնարավորությունը չեն տալիս, ուստի այն պահում ենք ավանդված տեսքով:

282. Բնագրի նմանությամբ հասկանալու է ստրուկ, աճազատ իմաստով (οἰκέτης, էջ 252):

283. «Եւ զի՞նչ... անկելոցս» հատվածի հրատարակությունը տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 349:

284. Յուլիպաուֆ (φιλόστοργον, էջ 256) բառի վկայության միակ օրինակը սույն կիրառությունն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 367):

285. Հմմտ. ՆՀԲ, Բ. 907:

286. Նոր հայկազյան բառարանագիրներին սգաւեր (φυλόλυπος, էջ 260) բառի վկայության այլ օրինակ հայտնի չէ (ՆՀԲ, Բ. 704):

287. Գիսելեզ (ὄινοφλυξ, էջ 260) բառի միակ վկայությունը «Պահոց գրքի» սույն կիրառությունն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 553):

288. Նոր հայկազյան բառարանագիրներին հասարակակից (ἄρτιος, էջ 261) բառի կիրառության այլ օրինակ ծանոթ չէ (տե՛ս ՆՀԲ, Բ. 53):

289. Հայերեն թարգմանությունից ինչ-ինչ պատճառով օտարվել են գաւրութիւն (τὸ κράτος, էջ 261) և յաիտեմից (τῶν αἰώνων, էջ 261) բառերը:

290. Մեզ չհաջողվեց գտնել սույն ճառի հունարենը: Մաշտոցի անվան Մատենադարանի երկու գրչագրերում (№ 3782, Ճառընտիր, ԺԲ. դ., էջ 242բ-244ա, № 6228, Ժողովածու, ԺԹ. դ., էջ 39ա-40ա), պահպանվել է սույն ԻԸ. ճառի մեկ այլ խմբագրություն, որը համանուն ճառի հրատարակվող բնագրի հետ ընդհանուր նշմարներ ունի միայն: Ստորև ներկայացնում ենք այդ տար-

բերակը ըստ № 3782 ձառընտրի, միաժամանակ արտացոլելով № 6228 ձեռագրի տարրնթերցումները:

(242բ) Դրուատ ի սուրբն Ստեփաննոս Ասխավկայ Քրիստոսի¹

Մեծ է աւր յիշատակիս, եւ զամենեսեան յարուցանէ կոչել ի սպասաւորութիւն բանի, հատուցանել զպատիւ սիրոյ այսր նահատակեցելոյ: Զի ոչ փոքր ինչ է այսմ աւուր սքանչելւոյս այսորիկ խորհրդոյ առ ի շահ աւկտի² հոգեւոր մրցանաց՝ ի հանդիսական ճգնութիւնս հետեւելով՝ ի մեծավաճառաշահութեան վերաբերութեան սպասաւորութիւն, որ առաւել փարթամացուցանէ քան զայնոսիկ, որ զմարգարիտս պատուականս ընծայեցուցանեն ի ծովավաստակ աշխատութեանց՝ ի պատիւ թագաւորաց: Իսկ այս առաքելական մարգարիտս պսակ թագի պարծանաց կազմեալ ի դասու երկոտասան առաքելոցն³ մատուցեալ պարգեւեն Տեառն իւրեանց՝ ի նորին չարչարանաց պտուղ նմին շնորհելով անուանի յամենայն խումբս հաւատացելոց ընտրեալ յառաքելականն վերացեալ բարձրացեալ պատիւ:

ժամանեաց յեւթանցն վերակացուաց (243ա) սեղանոյն ի տեսչութիւն որդոց⁴ եւ այրեաց՝ հանդերձ բազմութեամբ ուսմկին ըստ եւթնարի շնորհեաց Հոգւոյն սրբոյ առաւել փայլէր նա՝ զհրաշալին ընկալեալ զյորջորջումն անուն, այսինքն է Ստեփաննոս, ըստ հելլենականին՝ պսակ, առաքելականին այնորիկ եկեղեցւոյ: Սա, ասէ, լցաւ հոգւով սրբով իբրեւ զգետ ինչ յորդառատ ի ձմեռնային կապանաց արձակեալ ի ձեռն յարութեանն Քրիստոսի, առնէր նշանս եւ արուեստս ի ժողովրդեանն: Սա յանդիմանէր զանաւրէն մոլորութիւն հրէական ազգին, յորոց եւ ձգեալ լինէր յատեան քահանայիցն, գերագոյն եւ հրաշալի տեսլեամբ զվերաբնակեցելոցն բերեալ զնմանութիւն տեսակի:

Իսկ ամբոխ ժողովրդեանն ամպարչտեցելոց⁵ կացուցին վկայս սուտս եւ պարտաւորէին զարի եւ զանպարտելի վկայն զհայհոյութեան⁶ ունել յինքեան զմոլորութիւն, զնոյն բանս հայթայթանաց ի նա ձգելով, զոր եւ ի Տէր եւ ի Տէր⁷ նորա ի ժամանակին, որ վասն տաճարին է բանն: Իսկ նորա զկարծիս մոլորութեան նոցա բանիւ յանդիմանեալ կարծեցուցանէր՝ ի նախնեացն առեալ սկիզբն պատմութեան: Եւ ընդ նմին զխստապարանոցութիւնն եւ զամպարհա-

¹ դրուատ... Քրիստոսի] Բարսղի եպիսկոպոսի Ի Նախավկայն Ստեփաննոս. ամենեքեան որք սիրելեացն ճաշոյն յաւրինեն՝ Դրուատ ի սուրբն Ստեփաննոս նախավկայ

² աւգտի

³ առաքելոց]

⁴ սրբոց

⁵ ամբարչտեցելոց

⁶ զհայհոյութեանն

⁷ եւ ի Տէր]

ւաճութիւն¹ յանդիմանեաց: Եւ այսու բանիւ զկարկեալ լեզուս նոցա՝ դարձեալ յինքն բորբոքեալ յարուցանէր:

Յայնժամ համբարձմամբ տեսարանացն յերկինս երեւի նմա բացեալ երկնային հաստատութիւնն, զտեսութիւն ծնաւդին Աստուծոյ տեսեալ: Եւ ցնծայր յաղագս իւրոյ չարչարանացն. պտուղ Աստուծոյ ընծայէր Ստեփաննոս: Եւ արդ՝ աստանաւր փոքր ինչ հանգուցանեմ, որ ի կարգիս զչարագրութիւն բանիցս, քանզի սովորութիւն է հրէական ազգին, եւս առաւել քահանայապետիցն, յորժամ ոք ամպարչտեալ հայհոյութիւնս ձկտեցուցանէր² ի Մովսէս եւ յԱստուած, պատառէին զպատմուճանս իւրեանց՝ առ ի ջատագով լինել աստուածային աւերինադրութեանն: Իսկ աստ ի չարչարանս մարմնացելոյն եղծաւ ամենայն կարգ պաշտաման նոցա, եւ թափուր, եւ ունայն եղեն ի հայրենի նախախնամութենէն: Եւ ինքեանք յինքեանքս մոլեալք զպէսպէս եւ զազգի ազգի մոլորութեան³ զհայհոյութիւնս յայտնէին եւ ի ժամ խաչելութեանն ասէին՝ արդ վասն զի ոչ գտաւ յամպարիշտ ազգէն, որ զմոլորութիւնն հաստուցանէր զպարտս պատումամբ զգեստուն, ցելեալ լինէր վարագոյր տաճարին՝ խայտառակելով զնոցա պաշտամունս՝ ի հնոյն ի նորոյ փոխելով: Եւ այսոքիկ մինչդեռ կենդանին էր ի վերայ խաչին: Իսկ յորժամ աւանդեաց զչոքին՝ ի մեռեալ մարմինն թշնամանս ձգէին: Յայնժամ վէմք պատառէին, եւ գերեզմանք բացեալ լինէին: Եւ այսոքիկ ըստ մարմնական տեսողութեանն:

Իսկ յետ հրաշալի յարութեանն եւ աստուածային համբարձմանն եւ Հոգւոյն սրբոյ գալստեանն ի դասս առաքելոցն ոչ բաւական եղել նոցա զՈրդւոյ մարդոյ խաւսել բանս հայհոյութեան, այլ եւ ի սուրբ Հոգին ձգեցին զբանս մոլորութեան, եւ յայնոսիկ, որք ընդունակ եւ աւթեանք էին սուրբ Հոգւոյն: Յայնժամ պատառեալ լինէր երկնից հաստատութիւնն ոչ յանարգութիւն ինքեան եւ չարչար(243բ)եցելոյն, այլ ի նախատիս եւ ի կործանումն ազգին կուրացելոյ եւ ի փառս եւ ի պատիւ ընդհանուր հաւատացելոց: Այս տեսութիւն ի վեր է, քան զամենայն հրաշս երեւեալ սրբոցն: Իսկ որ վկայէրն ոչ զանխլաբար ծածկէր զահաւոր զայն տեսութիւն⁴, այլ բարբառեցաւ ի լսելիս նոցա ամենեցուն մեծաւ աղաղակաւ⁵:

Այս ձայն գտրտմութիւն բարկութեան նոցա յորդորեաց ի վերայ սքանչելոյն այնորիկ, որպէս ի ժամ խաչին զքահանայապետիցն զցասուճնն ըստ Տեառն բանից, եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ՝ նստեալ ընդ աջմէ զաւրութեանն, որ եւ զնոյն բան հաւատարիմ վկայս հաստատեաց: Եթէ տեսանեմ զերկինս բացեալ եւ զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ, վասն որոյ ի

¹ զամբարահաւաճութիւն

² ձգտեցուցանէր

³ մոլորութեանցն

⁴ տեսութեան

⁵ աղաղաւ

ձեռն այս բանից գտաւ արտաքոյ քաղաքին ի քարկոծման տեղիսն: Եւ ընդունէր զարկուածս քարանցն իբրեւ զցաւղ զուարթագին: Ոչ խորհէր չար փոխանակ չարի, այլ զնորին հակառակն, նմանեալ Տեառն իւրում, զի Տէրն ի չարչարանսն ասէր՝ Հայր թող սոցա, զի ոչ գիտեն զի՞նչ գործեն: Եւ աստ երանելիս՝ նմանեալ Տեառն իւրում, ասէր՝ Տէ՛ր, մի՛ համարիր սոցա զայս մեղս: Ո՞վ բարիք միտք եւ բարք աշակերտին զվարդապետին բարբառեալ զբարբառն: Ո՞վ ողջակէզ բոլորապտուղ քարամբք կատարեալ: Ո՞վ զենումն պատարագի ի հոտ անուշից Տեառն: Ո՞վ առաջին վկայ, յետ առաջնոյ վկային ի խաչն եղելոյն: Ո՞վ բանաւոր ընծայեալ զենումն, հետ բանին կատարեալ զենման, առ քեզ կատարի բանն աւետարանական, թէ ուր ենն եմ¹, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի:

Դու այսաւր սկիզբն ճանապարհաց վկայիցն, դու բացող աղիսեալ դրանն երկնից, դու նախահաւրն լուսեղէն եւ առաջին կերպարանաւքն զարդարեալ, դու վերստին զկողոպտումն լուսեղէն զգեստուն Ադամայ զգեցար, զոր ի ձեռն աւճին մերկացաւ: Դու առաւել մեզ ուրախութիւն, դու քոյին վարդապետացն յորդորիչ ի հանդիսական ասպարիսին: Դու քոյին աղաւթիւք գառաջնորդ մոլորութեան եւ զառիթ սպանմանն յամաւթ արարեր զբանսարկուն: Դու քոյին առաջնորդութեամբ² նորոյ ուխտիս³ առիթ կենաց կացուցեր տիեզերաց եւ ընտրութեան թագաւորին կազմեցեր զպատերազմակիցն: Ստացար երբեմն զհայհոյիչն, եւ զթշնամանիչն քարոզ եւ վերակացու կաթողիկէ եկեղեցոյ կացուցեր: Քեւ առաւել պարծին եկեղեցիք հեթանոսաց, եւ յաւէրժ զուարճանան հետեւեալքն զկնի քո հոգեւոր մարտիրոսական գնդին, որոյ դու սկիզբն երկնապաւղոտային: Քեւ ցնծան մանկունք սուրբ եկեղեցոյ: Քեւ մոլորեալք դարձեալ եղեն ի գիտութիւն ճշմարտութեան: Զքեզ ոչ երկիր ծածկեաց, այլ երկին ընկալաւ, զկատարեալդ ի կատարեալ սրբութիւնսն ի վերագոյնն, ուր կերպարան մեր եմուտ Քրիստոս վասն մեր եւ եցոյց մեզ աւրինակ անսուտ խոստմանն զառ ի մէնջ նախընծայն, զի ամենեքումբք նմանողք նմին, ընդ նմին եւ փառացն արժանաւոր փառաւորեսցեն զմշտնջենաւորին այնորիկ եւ երկնաւորին զանունն:

Այս քեզ առ ի յիմոց յանարժանութենէս պտուղ երջանիկդ եւ պատուականդ մեծարեալդ ի վկայս Քրիստոսի անհամեմատ յամենեսեան գերազանցելումդ ըստ երկուց մեծամեծ շնորհացդ, որ ի քեզ (244ա) զառաքելականին եւ զմարտիրոսականին ընկալեալ զպատիւ ոչ առատագոյն բանիւք իմաստասիրական տառիւք աճեցուցեալ, որ զքոյդ ներբողէր զհրաշիցդ տեսակս, զոր ամենեցունց տկարանալ գիտեմ առ ի զքոյդ բովանդակ բացայայտել զարժանա-

¹ իմ

² առաջնորդութեամբն

³ աւետիս

ւորութեանդ շնորհս: Այլ եւ ոչ ըստ արտաքնոցն տաւնից եւ նուիրաց, որք արեամբ ճենճերացն պատուէն զկուսմոլութեանն զմոլորութիւն: Եւ ընդ նոյն զորովայնից զհեշտութիւնս սպասաւորեն, որ է մայր թշուառութեան:

Այլ եւ փախչիցիս յայդպիսեացդ պատուոյ եւ ընծայաբերութեանց, այլ զիմ զաղքատիմաց եւ զդուզնաքեայս ընկալցիս զբանս մեծ բանին սպասաւորդ՝ որպէս Տէրն քո եւ վարդապետ, յոր դու հուպդ ես զերկուց լուծայիցն ընկեցեալ ի գանձանակն: Զի եւ իմ բանք առ քեզ եւ ի շտեմարան քո մթերեալ պողաբերեսցէ ինձ ի դոյզն սերմանցն ընդունել պտուղ հարիւրապատիկ ի քաջ եւ ի բարի մշակ եւ ընձեռեալ զամենեսեան զնոր ժողովուրդս. յիշեսջիր ընդ աջմէ Հաւր նստողին¹ ի քո նոր նահատակութեանդ ըստ նոր ուխտիս: Զի եւ սոցա զհին մարդն² ի բաց դնելով զնորն զգեհուցուն եւ անապական կենացն եւ փառացս արժանի լինիցին ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

291. Արտակերտել բառի կիրառութեան այլ օրինակ հայ բառարանագրութեանը ծանոթ չէ (տե՛ս ՆՀԲ, Ա. 577):

292. Հմմտ. ՆՀԲ, Ա. 606:

293. Սուլյն միտքը մասնակի փոփոխութեամբ օգտագործվել է Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի» գործում. «Արդ յայտ է, որպէս Բասիլ ասէ, թէ ուրանօր հօգին սուրբ, անդ հայր և որդի ճանաչի բնակեալ. որպէս ասէ մարգարէիւն, թէ «բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա» (տե՛ս Գրիգոր Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1840, էջ 352):

294. Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 508-525:

295. Հայերեն թարգմանությունն այս մասում անհարթ է, որովհետև ինչ-ինչ պատճառով դուրս է մնացել բնագրի «καὶ λογογράφοι» (= արձակագիր, պատմիչ, էջ 508) բառը:

296. ՆՀԲ, Բ. 695:

297. Հմմտ. ՆՀԲ, Բ. 89-90:

298. Հմմտ. ՆՀԲ, Բ. 35:

299. Հմմտ. ՆՀԲ, Ա. 769:

300. «Մարք զբարւոյն» կապակցութեանից սկսած մինչև ճառիս ավարտը № 3787 գրչագրում պահպանված համապատասխան հատվածը համեմատաբար շատ է միջամտվել, փոփոխությունն ենթարկվել: Ահա այսպիսի տեսք ունի այն. (236բ) Հասակակցացն նմանեսցեն մարք, բարի մաւրն տրտմութեանցն: Մայր միոյն յերանելեացն յայնցանէ՝ տեսեալ զայլսն վախճանեալ եւ զիւրն դեռեւ յոգւոջ եղեալ, առ ի չարչարանացն համբերութիւն թողեալ զնա դահ-

¹ նստաւղին

² մարտն

ճացն իբ(237ա)րեւ թէ կարող լինել նմա այլ ինչ խորհել, ինքնին բառնայր գՈրդին՝ տարեալ ընկնելով ի վերայ սայլիցն, ուր այլ սուրբքն հրաւիրեալք ի հուրն: Արդարեւ վկայի մայր: Քանզի ոչ արձակեցան անարգ արտասուս, ոչ բարբառեցաւ ինչ նուազ եւ անարժան ըստ ժամանակին, այլ ասէ՝ ե՛րթ ով որդեակ, զբարիոք ճանապարհն ընդ հասակակիցս քո եւ խորանակիցսդ, մի՛ մնար ի դասուէդ, մի՛ երկրորդեսցիս յայլոցդ ի յուզի անկցիս առ Տէրն: Արդարեւ բարի շառաւեղ ի բարի արմատոց, զոր ծնաւ եւ սնոյց բարեպաշտութեամբ, մանաւանդ աւրինաւք առաքելական կաթամբ: Եւ որ այսպէս սնաւ, այսպէս յղարկացաւ ի բարեպաշտ ի մաւրէն, իսկ սատանայ գնաց ամաչեցեալ: Քանզի գամենայն արարածս շարժեաց ի վերայ նոցա, յամենայնի եզիտ զինքն յաղթահարեալ յարանցն առաքինութենէն, զգիշերն դժընդակ աւգովն, զգաւառն ձմեռն, զժամանակն դառնաշունչ, զմարմնոցն զմերկութիւնն: Ո՛վ սուրբ դաս, ո՛վ ժողով նուիրական, ո՛վ վահանակցութիւն անքակ, ո՛վ միահավառնք պահապանք ազգի մարդկան, բարի կցորդք որդւոց, աղերսանաց գործակիցք, հրեշտակք զաւրեղք, աստեղք տիեզերաց, ծաղիկք եկեղեցւոյ: Զձեզ ոչ երկիր ծածկեաց, այլ երկին ընկալաւ, բացան ձեզ դրունք երկնից արժանաւորք հրեշտակաց գնդիցն: Աթոռակիցք հայրապետաց, մարգարէից, արդարոց, որ ի նմին ծաղկի երիտասարդութեան, զկեանս աշխարհիս արհամարհեցին, քան զՀարս եւ զՈրդիս զՏէրն սիրեցին՝ արհամարհելով զանցաւոր զկեանս աշխարհիս, զի փառաւորեցին զՏէրն ի մարմինս իւրեանց: Տեսիլ եղեն աշխարհի, հրեշտակաց եւ մարդկան, զգլորեալս հաստատեցին, զբեկեալս բժշկեցին, զսրբութիւնս կրկնապատիկ արարին: Ի սպասաւորութիւնս բարեպաշտութեան ամենեցուն կանգնեցին զնշան յաղթող միով յուսով եւ փառաց պսակաւն զարդարեցան ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, ընդ որում Հաւր միանգամայն եւ Հոգւոյն սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ, եւ [յաւիտեանս]:

301. «Միշտ եւ յաւիտեանս» կապակցութեան դիմաց բնագրում ունենք «յաւիտեանս յաւիտեանից» (αἰῶνας τῶν αἰῶνων, էջ 526):

302. Բնագիրը տե՛ս PG, T. 31, էջ 489-508:

303. Հմմտ. ՆՀԲ, Ա. 453:

304. Նոր հայկազյան բառարանագիրներին սույն եզակի վկայակոչութիւնն ինչ երեւում է, որ Բառարանագիր (πεζὸς, էջ 492) բառի կիրառութեան ուրիշ օրինակ նրանց հայտնի չէ, այլապէս կհղեին (տե՛ս ՆՀԲ, Ա. 74):

305. Գրիգոր Նազիանզացու «Առ որս» գրքի հայերեն թարգմանութիւնն ինչ վերջված ճիշտ նույնաբնույթ օրինակով (գրաբեժամ դիր քաղաքիդ) են ՆՀԲ բառարանագիրները բացատրում բարեժամ բառը (ՆՀԲ, Ա. 447): Բառարանագիրները «Պահոց գրքի» սույն վկայութեանը չեն դիմել, ուրիշ օրինակ էլ չեն ունեցել, այլապէս կհղեին: Սակայն առկա բարեժամանակ-ը ևս նույն իմաստն ու-

նի, բնականաբար հունարենում նշված հուշարձանների թարգմանությունը դիմաց էլ ունենք միևնույն «εὐκόλιος» բառը (էջ 492):

306. Հայերեն թարգմանությունն այս մասում պակասավոր է, այդ իսկ պատճառով նախադասության իմաստը՝ դժվարընկալելի: Հայերեն տեքստի համար ևս, հունարենի նմանությունամբ, սպասելի էր Յուդայից մասնավորեցումը (տե՛ս τοῖς Ἰουδαίοις, էջ 497):

307. Եւ խստացեալ-ը թարգմանչի (հնարավոր է նաև գրչի) հավելում է:

308. Հայերեն թարգմանության բոլոր ձեռագրերում սույն ոչ-ի փոխարեն ունենք եւ, որը ըստ բնագրի (էջ 500) և ս. Գրքի ուղղում ենք ոչ:

309. Բնագրում սույն միտքը շարունակվում է. «βασανιζέσθω ὡς ἂν ἐθέλητε» (էջ 500) = տանջեք զիարդ կամիք:

310. Վաճառակցութիւն (συνάλλαγμα, էջ 500) բառի կիրառությունն այլ օրինակ բառարանագրությունը ծանոթ չէ (տե՛ս ՆՀԲ, Բ. 775):

311. Բնագիրը տե՛ս PG, t. 31, էջ 424-444: Սույն ճառի հեղինակային պատկանելության շուրջ հայագիտության մեջ երբեք է կասկած է հայտնվել: Անվանի հայագետ Բարսեղ Սարգիսյանը հետևյալ կերպ է ընդհանրացրել առկա վերապահությունները. «Ճառիս հարազատութեան մասին բանաւոր տարակոյսներ կան դիտելով մանաւանդ յուներէնը, որ շատ աւելի ընդարձակ է... հայերէնով թերևս կարելի ըլլայ որոշել յոյնին հարազատ կամ անհարազատ ըլլալուն» (տե՛ս «Մայր ցուցակ», էջ 1266): Մի կողմ թողնելով հայագետի ակնարկած «բանաւոր տարակոյսները», պիտի նկատել, որ ճառիս հունարենի ընդարձակ լինելու վարկածը իրական հիմք չունի: Բնագրի և թարգմանության համեմատությունը ցույց է տալիս, որ հայերենը մյուս ճառերի և թղթերի նման հիմնականում համընթաց է հունարենին. առկա առանձին բառաոճական տարբերությունները տարբեր խմբագրությունների ենթադրության հնարավորություն չեն տալիս:

312. Հմմտ. ՆՀԲ, Ա. 447:

313. Նկատի ունի գատիկի տոնը՝ «τῆς ἡμέρας τοῦ Πάσχα» (էջ 424):

314. Բնագրում ունենք՝ «ἐὰν μὴ παρέλθῃς διὰ τοῦ ὕδατος» (էջ 428), ուր խոսքը գետում մկրտվելու իրողություն մասին է:

315. Հմմտ. ՆՀԲ, Ա. 175:

316. Հմմտ. ՆՀԲ, Ա. 502:

317. Հմմտ. բնագիր՝ «ἀυτός σεαυτὸν ἀδικῶν» (էջ 429):

318. Անագաբար (ἀγεννῶς, էջ 432) բառը, դատելով նոր հայկազյան բառարանի վկայակոչությունից (Ա. 102), միայն սույն կիրառությամբ է հայտնի:

319. Սույն մասնավորեցումը բնագրային հիմք չունի, այլ պայմանավորված է հայերեն թարգմանությամբ: Հունարենում մեզ հետաքրքրող բառի դիմաց ունենք պարզապես ցանձ (θησαυρός, էջ 422):

320. Սրտի չափանդված ընթերցումը վերականգնում ենք ըստ բնագրի (καρδία, էջ 437): Հայերեն թարգմանության ձեռագրերում սիրտ (սրտիւ) բառի դիմաց ունենք սերտ (սերտիւ) գրչական հիմքի վրա աղավաղված տարբերակը:

321. Թարգմանության ճանապարհով առաջացած ἀνδάνωψις արական (ψυχագωγία, ψυχագωγούσα, էջ 440) բառը անձանոթ է հայ բառարանագրությանը:

322. Հմմտ. ՆՀԲ, Բ. 1023:

323. Տվյալ մտքի համար Φρηστυσι ընթերցումը ընդմիջարկություն է թվում, հասկանալի է, որ այն չկա հունարեն նախօրինակում (տե՛ս էջ 441), սակայն պահպանվել է հայերեն թարգմանության բոլոր ձեռագրերում, ուստի դժվարանում ենք սրբագրել:

324. Բնագրում «արդար է դատաստանն Աստուծոյ» միտքը հաջորդում է «հրոյ մատնեցայ» կապակցությանը: Հայերեն թարգմանության առկա գրչագրերում առաջարկվող շարադասությունը միակն է:

325. Հունարենում ունենք՝ ψαυτοειδής ψαυτοειδής (էջ 444):

326. Բնագիրը տե՛ս PG, T. 31, էջ 329-353:

327. Հունարենում ունենք պարզապես «ήν... δωδεκατω ψαλω» (= յերկոտասան Սաղմոսին, էջ 329): Հայերենում ամենուր առկա է «յերկոտասան երրորդու Սաղմոսին» մասնավորեցումը, որը ճիշտ չէ և ըստ Ս. Գրքի ընդգծված բառը ուղղում ենք երկրորդու: Նման շփոթի գրչական ճանապարհով առաջանալու հնարավորությունն ինքնին անկհայտ է:

328. Հայերեն թարգմանության «վաղվաղակի փոփոխի» արտահայտությունը հունարենում նախորդում է մի ընդարձակ հատված (տե՛ս καὶ δι' ὅλου ... πρόσωπόν σου ἀπ' ἐμοῦ, էջ 329), որը դուրս է մնացել հայերեն թարգմանությունից:

329. Նկատի ունի քրիստոնեական հավատի նորագարձ (προσήλυτος, էջ 329) հետևորդներին:

330. Ամենասակառուցի (πανολεθρία, էջ 331) բառի կիրառության միակ օրինակը սույն վկայությունն է (տե՛ս ՆՀԲ, Բ. 66):

331. Բնագրի նմանությունը հայերեն թարգմանությունում ևս սպասելի էր Աստուծոյ արարածք (Θεοῦ ποιήματα, էջ 332), որը, սակայն, ինչ-ինչ պատճառով անհրաժեշտ չի նկատվել:

332. Նոր հայկազյան բառարանագիրներին անխառնափնդոր (ἀσύγχυτον, էջ 332) բառի կիրառության այլ օրինակ ծանոթ չէ (տե՛ս ՆՀԲ. Ա. 159):

333. Հմմտ. ՆՀԲ, Ա. 863:

334. «Արդ չար... բնաւորեցան» հատվածի հրատարակությունը տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 287:

335. Կապակցութեանս դիմաց հայերեն թարգմանութեան բոլոր գրչագրերը ունեն պարզապէս հրոյ, որի պատճառով համապատասխան հատվածի միտքը մասամբ թերի է, ուստի այն ըստ հունարենի վերականգնում ենք արարիչ հրոյ (տե՛ս πυρός δημιουργόν, էջ 336):

336. Բնագրում ի նախդիրից առաջ ունենք «παρὰ Κυρίου» (ի Տեառնէ, էջ 337), որը հայերեն թարգմանութիւնում չի պահպանվել:

337. Դիքսապոս (εὐολίσθητος, էջ 340) բառի կիրառութեան միակ օրինակը «Պահոց գրքի» սուլյն վկայութիւնն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 634):

338. «Քանզի»-ին նախորդող բնագրի սուլյն նախադասութիւնը «βάρβαρον ... ὑποῖραγεντων» (էջ 340) հայերեն թարգմանութիւնից օտարվել է:

339. «Եւ ոմն փայտեղէն» կապակցութիւնը վերականգնում ենք ըստ հունարենի (τὸ δὲ ξύλινον, էջ 340): Հայերեն թարգմանութեան ձեռագրերը վերականգնող ընթերցման որևէ տարբերակ չեն պահպանվել: Սակայն առաջադրվող միջամտութիւնը հաստատվում է ոչ միայն բնագրի ուղղակի վկայութեամբ, այլև նույն հատվածի թե՛ բնագրի և թե՛ թարգմանութեան շարունակութեամբ:

340. Հունարենում իբրև շարունակութիւն ունենք «οὐτε οὐσίαν αὐτῆς ἐνυπόστατον παρασῆσαι ἔχομεν» (էջ 341), որը հայերեն թարգմանութիւնում բացակայում է:

341. Հմմտ. ՆՀԲ, Բ. 744:

342. Հայերեն թարգմանութեան բառք ընթերցման դիմաց բնագրում ունենք «οἱ λόγοι» (էջ 345), որը անկասկած վրիպակ է և ըստ հայերեն տեքստի պիտի ուղղել «οἱ λόγοι»:

343. Հայերեն աշխարհի ընթերցման դիմաց հունարենում ունենք «σόσμου» (էջ 352), որը հավանաբար վրիպակ է և հայերեն թարգմանութեան օգնութեամբ պիտի սրբագրել «κόσμου» (κόσμος), մանավանդ որ նույն հատվածի շարունակութեան մեջ երկիցս օգտագործված աշխարհիս այսորիկ արտահայտութեան դիմաց ունենք «τοῦ κόσμου τούτου» (էջ 352):

344. Աստուծոյ ընթերցումը բնագրային հիմք չունի. այն, թերևս, հետագա միջամտութեան արդյունք է (Հմմտ. Ղուկ., ԺԹ. 38):

345. Սուլյն ճառի հունարենը մեզ չհաջողվեց գտնել:

346. Կոճոտանալ (կոճոտի) բառի բացատրութեան առիթով Նոր Հայկազյան բառարանագիրների վկայած միակ օրինակը «Յաղագս ողորմածութեան» ճառի սուլյն վկայութիւնն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 1114):

347. Հմմտ. ՆՀԲ, Ա. 1114:

348. Հմմտ. ՆՀԲ, Ա. 586:

349. Դրոյլ բառի կիրառութեան միակ օրինակը սույն վկայութիւնն է (տե՛ս ՆՀԲ, Ա. 643): Հմմտ. սույն ճառի ավարտը՝ «զարքայութեանն զգրոյլն կոչեցաւ» (էջ 270ա):

350. Ամենայն հավանականութեամբ գրչի հավելում է իբրև ավարտ ընդօրինակված հետևյալ միտքը. «Բացեալ է բժկարանն, դեղք առաջի կան, աւագանն զամենեսեան ընդունի, շնորհք սփռեալ են, հոգեւոր պատմուճանն ի Հաւրէ եւ յՈրդոյ եւ ի Հոգւոյն սրբոյ հաստատեալ տուաւ մեզ փառք Աստուծոյ յաւիտեանս. ամէն» (էջ 270ա):

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Աբել 319, 498
 Աբեդյան Մանուկ 5
 Աբրահամ *տե՛ս* Աբրահամ
 Աբրահամ (գրիչ) 46
 Աբրահամ 71, 127, 131, 164, 182, 253, 275, 294, 304, 308, 463, 495
 Աբրիոն 444
 Ագազ 188
 Ագաթանգեղոս 11
 Ադամ 12, 35, 36, 57, 239, 282, 287, 322, 448, 505
 Ադրազար 219, 220
 Աթանաս 481
 Ակինյան Ն. 7
 Ահարոն 182
 Ամադեկ 188
 Ամբրի 188
 Ամիր Սեթ 44
 Ամովն 219, 220
 Անանիա Մոկացի 11
 Անանիա Շիրակացի 5, 12
 Անանիա Սանահնեցի 37
 Անանյան Պողոս 8, 39, 49, 50
 Անասյան Յ. Ա. 5, 32
 Աննա 89, 284
 Անտոն քահանա (գրիչ) 44
 Ապողինար 7, 8, 12, 13, 15, 19, 21, 22, 29, 32, 33, 39, 42, 44, 49, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495
 Ապողինար *տե՛ս* Ապողինար
 Ապոլինար *տե՛ս* Ապողինար
 Առաքելյան Վարազ 11
 Ասափ 225
 Ավետ (գրիչ) 46
 Ալազ (գրիչ) 44
 Աքազ 276
 Աքայար 158
 Բադամ 280
 Բադակ 278
 Բադայան 278
 Բասիլ *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բասիլիոս եպիսկոպոս *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բասիլիոս *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բասիլ *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բասիլիոս եպիսկոպոս *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բասիլիոս *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բաստամեանց Վահան 12
 Բարսեղ Կապադովկացի *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բարսեղ Կեսարացի 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 47, 49, 50, 51, 54, 285, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 325, 341, 463, 465, 474, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 498, 500, 506
 Բարսեղ Կեսարու *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Բեկի 46
 Բեկիջան 46
 Բրաբիոն (գրիչ, նոտար) 43
 Գաբրիել 284, 308, 324, 449
 Գասպարյան Գուրգեն 4
 Գարեգին Ա. Կաթողիկոս 7
 Գարեգին Բ. Կաթողիկոս 2
 Գեորգ (Գեորգ) վարդապետ 43
 Գեորգ (գրիչ) 43
 Գեորգ փիլիսոփա 37
 Գերմանոս 37
 Գողիադ 195
 Գորգու 46
 Գորդիոս 407, 411, 414
 Գուլիջան 46
 Գրիգոր (գրիչ) 44
 Գրիգոր 45, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 465
 Գրիգոր Աստուածաբան 51, 327, 335, 498
 Գրիգոր աբեղա (գրիչ) 46
 Գրիգոր Խլաթեցի 46
 Գրիգոր Նազիանզանցի 6, 7, 21, 32, 35, 498, 507
 Գրիգոր Նարեկացի 25, 26, 27, 28, 37, 479, 506
 Գրիգոր Նյուսացի 6
 Գրիգոր քահանա (գրիչ) 44
 Դաթան 444
 Դանիել մարգարե 66, 74, 465
 Դաւիթ 35, 36, 126, 127, 183, 185, 195, 219, 225, 247, 248, 282, 332, 353, 370, 437, 444, 464, 478
 Դաւիթ քարզման Տարաւնացի *տե՛ս* Դաւիթ Տարունացի
 Դաւիթ Տարունացի 8, 39

- Դաւիթ Քոբայրեցի 6, 7
 Դեոդորոս Անտիոքի երեց 50, 341
 Դիթում 478
 Դիոդոր երեց Անտիոքացի *տես*
 Դեոդորոս Անտիոքի երեց
 Դիոնեսիոս 36
 Դրիեսսեն Ի. *տես* Տրիսսեն Իննովկեն-
 տիոս
- Եզաբել 189
 Եզեկիել (գրիչ) 39
 Եզեկիել Սարկավազ (գրիչ) 39, 40
 Եզեկիել 166, 222, 308, 352, 464
 Եզնիկ Կողբացի 5, 11, 12
 Եզրայել 158
 Եղիա 305, 400, 411
 Եղիազարու վանք 41
 Եղիաս 90
 Եղիշէ 11
 Եղիսաբէթ 284
 Եղիսէ 65, 364, 465
 Եման 225
 Ենովք 128
 Եսայի (գրիչ) 41
 Եսայի (ծաղկող) 45
 Եսայի մարգարէ 54, 102
 Եսայիաս 306
 Եսաւ 63
 Եվթիմիոս Աթոնացի 52
 Երեմիա մարգարէ 95
 Երեմիաս 352
 Եւա 35, 58, 426
 Եւսեբոս Եպիսկոպոս 50, 325
 Եփրեմ 221, 223, 423
- Ջարբհանայան Գ. 40, 481, 482
 Ջաքարիա (գրիչ) 47
 Ջաքարիա 278, 282
 Ջերեթ 43
- Էմին Ա. 30, 31
 Էմմանուէլ 275, 282-283
- Ըռայիս Խալիֆ 465
- Թադէոս 45
 Թամս 45
 Թեոդորոս Քոթնեավոր 37
 Թեոդոր սարկաւազակից 326
 Թեոդորետոս 481
 Թոմսոն Ռ. 11
 Թովմաս, Թոմաս 299, 489
 Թորոս (գրիչ) 44
 Թորոսեան Յ., Թորոսեան Յ., Թորոսյան
 Յ. 8, 16, 12, 40, 474, 475
- Թօփճեան Յ. 12
- Իդիթում 225
 Իսաակ 275
- Իսալիֆ 46
 Իսաղբակեանք 41
 Իսաչատուր վարդապետ 48
 Իսաչատրյան Պ. Ս. 479
 Իսաչիկ կաթողիկոս 37
 Իսաչիկյան Լևոն 5, 6
 Իսոսրովիկ Թարգմանիչ 37
- Ծաղիկ 466
- Կայեն, Կայեն, Կային 102, 194, 316, 317, 318,
 319, 321, 430
 Կարապետ Բերիացի (գրիչ) 47
 Կարապետ Բիւզանդացի 47
 Կարապետ Եպիսկոպոս 481
 Կիրակոս 46
 Կոռնել հարիւրապետ 39
 Կոռնելիոս 418, 458, 460, 461
- Հակոբյան Վազգեն 5, 11, 48, 50, 500
 Համազասպ կորապաղատ Մամիկոնէնից 39
 Հասրաթ 46
 Հեղիաս 64, 305, 425
 Հերովդէս 278
 Հովհան Մանդակունի 8, 12, 16, 17, 18, 37,
 474
 Հովհան Օձնեցի 5, 18, 20, 21, 23, 37, 38
 Հովհաննես Արքաեղբայր 44
 Հովհաննես Երզնկացի 35, 36, 37, 38
 Հովհաննես վանական Տավուշեցի 34
 Հովհաննես վարդապետ 39
 Հովհաննես քահանա 44
 Հովսեփյան Գ. 37, 40, 41
- Ղազար 58, 71, 224, 353, 354, 355, 455, 463,
 501
 Ղազարոս *տես* Ղազար
 Ղազիմյան Ա.Ա. 479
 Ղամեթ 321
 Ղարիպ գրագիր 45
 Ղաֆադարյան Կարո 7
 Ղուկայ 148, 322
- Մաթևոսյան Ա. Ս. 7, 39
 Մալխասյանց Ստ. 30, 31, 467, 470, 477, 479
 Մաղաքիա (գրիչ) 47
 Մայրագոմեցի 37
 Մաշտոց 41, 502
 Մատաթիաս 402
 Մատթէոս (գրիչ) 45
 Մատթէոս տպագրիչ 43

- Մարաբյան Սեդա 46
 Մարգարիտ 46
 Մարիամ 18, 19, 182, 272, 273, 274, 277, 278, 282, 284, 285, 286, 288, 292, 293, 294, 295, 298, 299, 302, 304, 308, 322, 323, 324, 484, 485, 488, 489, 490, 494, 495, 497
 Մարկեղեայ Գաղատացի 303
 Մարտիրոս 46
 Մաքսիմոս 481
 Մելիքսեթ-բեկ Լ. Մ. 34
 Մելքիսեդ (գրիչ) 44
 Մինաս աստուածաբան վարդապետ 43
 Մխիթար Այրիվանցի 42
 Մխիթար Գոշ 12
 Մովսես (գրիչ) 46
 Մովսես Խորենացի 6, 9, 15, 23, 37, 38
 Մովսես Կաղանկատվացի 11
 Մովսես 62, 73, 89, 109, 127, 182, 188, 222, 237, 253, 305, 308, 323, 331, 385, 408, 441, 442, 466, 504
 Մովսես մարգարտ 35
 Մուսէ 424
 Մուրադյան Կ. Մ. 3, 4, 5, 6, 9, 12, 18, 21, 39, 498
 Մուրադյան Պարույր 6
- Յակոբ (գրիչ) 46
 Յակոբ 44
 Յակոբ կրանաւոր 45
 Յակոբ, Յակովբ 93, 210, 222, 279, 303, 305
 Յեդուն 223
 Յիսուս Քրիստոս 15, 18, 28, 33, 41, 43, 44, 45, 56, 79, 80, 86, 94, 96, 108, 115, 116, 125, 129, 130, 133, 134, 165, 176, 177, 191, 206, 208, 217, 221, 223, 224, 227, 229, 234, 243, 244, 259, 271, 275, 278, 279, 284, 285, 287, 290, 293, 294, 295, 299, 300, 301, 322, 323, 324, 336, 339, 350, 352, 353, 357, 358, 360, 362, 370, 377, 379, 380, 385, 388, 392, 393, 398, 401, 402, 406, 409, 410, 417, 419, 422, 423, 424, 426, 433, 434, 436, 442, 453, 454, 478, 457, 458, 460, 461, 464, 466, 469, 484, 485, 489, 492, 495, 496, 497, 502, 503, 505, 506, 507, 509
 Յոր, Յովբ 88, 135, 305, 330, 357, 444
 Յոհան Եզնկաեցի 42
 Յոհան Մանդակունի *տես* Յովհան Մանդակունի
 Յոհաննես արեղա 46
 Յոհաննէս 422, 454
 Յոհաննիս 46
- Յոհաննէս 258, 259, 260
 Յոհաննէս վարդապետաց վարժապետ 39-40
 Յովաբ 219, 219, 220
 Յովանես 43
 Յովանես փիլիսոփոս 46
 Յովաննէս (գրիչ) 43
 Յովաննէս (ընթերցող) 41
 Յովաննէս Մկրտիչ 71
 Յովհան Իմաստասէր Աւծնեցի *տես* Յովհան Օծնեցի
 Յովհան Մանդակունի *տես* Յովհան Մանդակունի
 Յովհաննէս (գրիչ) 43, 44
 Յովհաննէս (Յոհաննէս) աւետարանիչ 71, 130, 284, 385, 463, 466, 467
 Յովնաթան 353
 Յովսէփ, Յովսէփ 137, 222, 272, 273, 274, 330, 408
 Յուդա 508
 Յուդաս 223, 308, 402
 Յուդիտայ, Յուդիտայ 361
 Յուդիտ 50
 Յուսէփ 196
- Լաբուբ 158
 Ներսէս վարդապետ 41
 Ներսէս Եպիսկոպոս Անկուրիոյ 42
 Ներսէս Շնորհալի 481, 482
 Նոյ 61
- Շալու 45
 Շարուհ 219
 Շօռոթ 47
- Ռհաննէս միայնակեաց (գրիչ) 45
 Ռափիմեայ Եպիսկոպոս 316
- Պատրոս Ղոնկլայեցի 47
 Պարոնիկ Ռախի 44
 Պաւղոս առաքեալ 71, 116, 130, 191, 194, 208, 223, 240, 241, 258, 299-300, 301, 307, 316, 322, 345, 350, 351, 352, 360, 377, 386, 391, 402, 463, 464, 466, 489, 501
 Պետրոս Աստապատցի 47
 Պետրոս առաքեալ 130, 131, 258, 259, 308, 317, 324, 385, 418, 460
 Պետրոս կրոնավոր (գրիչ) 48
 Պողարյան Ն. 8
 Պողշեանք 41
 Պօղոս *տես* Պաւղոս
- Ջալալեանց Ս. 7
- Ռովան 219

- Ա. Գեորգ 47
 Սաակ 495
 Սալչուկ 46
 Սահակ (գրիչ) 48
 Սահակ կաթուղիկոս 12
 Սահակ Պարթև 9, 13, 14, 15, 33, 37, 38
 Սամուէլ 63, 89, 188
 Սամսոն, Սամփսոն, Սամփսովն 63, 89, 175-176, 408
 Սանահին 499
 Սանահին 7
 Սարգիս (գրիչ) 40
 Սարգիս (գրիչ) 47
 Սարգիս 45
 Սարգիս բժիշկ 43
 Սարգիս վարդապետ 42
 Սարգիսեան Բարսեղ 11, 40, 482, 508
 Սարգսեան Գ. 11
 Սարգսյան Խորեն 5
 Սաւուղ 188, 195, 353
 Սեբերիանոս Եմեսացի Գաբաղացի 50
 Սեթ 35
 Սեմեի 185
 Սիմեովն, Սիմովն, Սիմեւան 7, 227, 284, 322, 324, 370, 460, 467
 Սողոմոն, Սողոմովն 26, 144, 197, 215, 377, 378, 407, 421, 453, 506
 Սոսթենես (գրիչ) 44
 Սուրբ Բարսեղ *տե՛ս* Բարսեղ Կեսարացի
 Սուքիաս վարդապետ 43
 Ստեփաննոս Վահկացի (գրիչ) 44
 Ստեփանոս (գրիչ) 41
 Ստեփանոս 26
 Ստեփանոս Ասողիկ 23, 28, 29, 30, 31, 32, 37, 38, 480, 498, 500
 Ստեփանոս եղբարք 45
 Ստեփանոս Նախավկայ 38, 45, 380, 381, 382, 383, 385, 386, 387, 388, 503, 504
 Ստեփանոս Սյունեցի 21, 22, 23, 24, 25, 28, 29, 30, 37, 38
 Ստեփանոս քահանայ 39
 Ստեփանոս Օրբելյան (Օրբելեան) 21, 37
 Վանական վարդապետ Տավուշեցի 34, 37
 Վանական վարդապետ *տե՛ս* Վանական վարդապետ Տավուշեցի
 Վարդ Խաթուն 466
 Վարդան Այգեկցի 32, 34, 37, 38
 Վարդան կրոնավոր (գրիչ) 46
 Տաբիթա 455
 Տեր-Պողոսյան Պ. 8, 26, 27
 Տէր Չաքարէ 466
 Տէր Յովաննէս Խան Խաթուն 466
 Տիմոթէոս Աղեքսանդրացի 49
 Տուած 44
 Տրիստեն Իննովկենտիոս 40
 Ուլուխոջյան Գաբրիելա 10
 Փաւստոս Բուզանդ 11
 Փարաւոն, Փարաւովն 196, 424, 445, 466
 Փեննէս 108
 Քաուի Պիտեր 41
 Քուրցիկիծե 9. 52
 Քրիստոսատուր աբեղայ 44
 Քրիստոսատուր քահանայ 44
 Agathange 11
 Basilio di Cesarea 10
 Driessen I. W. 40
 Garitte Gérard 11
 Mingne J.-P. 51
 Saint Basile 9, 51, 499, 500
 Uluhogian Gabriella 10
 Yves Coutonne 51
 Василий Кесарийский 51

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աղուանից աշխարհի 11	Մէջս գետոցն 219
Անթիլիաս 7, 40, 41	Մանաստ 128, 221, 223
Անի 40	Մոսկվա 6
Ասորեստան 311	Մովսէս 221, 223
Ասորիք 219	
Արաբիա 219, 477	Յուդայ 221
Արծկե 46	
Արմաշ 12	Նինուէ 126
	Նյու Յորք 41
Բաբելոն 65-66, 352, 465	Նոր Զուղա 8
Բաբելոն <i>տես</i> Բաբելոն	
Բաբլոն <i>տես</i> Բաբելոն	Շօռոք 47
Բեթղէմ 278, 280	
	Պաղեստին 445
Փաղաաղ 221, 223	Պետերբուրգ 28, 500
Փեղարդա վանք 42	
	Ռովք 219
Դամասկացոց քաղաք 39	
	Ս. Ղազար (կղզի) 11, 50
Եգիպտոս 93, 196	Սևան 499
Եդովմ 221	Սանահին 7, 499
Երևան 7, 9, 11, 27, 32, 35, 39, 39, 48, 49, 479, 500	Սերկիսի գյուղ 45
Երուսաղէմ 8, 43, 80, 252, 278, 353, 360, 375, 443	Սիկիմայ 222
Եփրատ 219	Սիոն 40
	Սիսական նահանգ 37
Էջմիածին 1, 3, 4, 6, 43, 48, 49	Սողոմ 443, 464
	Սովք 219
Թիֆլիս 7, 15, 21, 37	
	Վաղարշապատ 12
Իլով 44, 46	Վենետիկ 8, 11, 12, 16, 18, 26, 32, 39, 40, 41, 43, 50, 506
Իսրայել, Իսրայէլ 219, 275, 278, 279, 303, 322, 353, 384, 424	Վերին Նորավան 45
Իսրայել, Իսրայէլ 57, 189, 219, 222	Վիեննա 7, 8
	Տիֆլիս <i>տես</i> Թիֆլիս
Լիբանան 41	
	Փարիզ 9
Կ. Պոլիս 43, 47	Փիւնիկէ, Փյունիկէ 219, 477
Կաֆա 47	
Կեսարիա 458	Քաղկեդոն 49
Կոստանդնուպոլիս <i>տես</i> Կ. Պոլիս	Քիմճակ 44
	Քոթուկ 7
Հաղբատ 40	Քորեք 64, 411
Հռոմանց երկիր 42	
Հրեաստան, Հրեաստան 278, 279, 281, 422	Փարիզ 9, 499, 500
	Րոմա 11
Ղրիմ 42, 44	Երեւան 50

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ 5
ԵՐԿՈՒ ԽՈՍՔ..... 7
ԱՌԱՋԱԲԱՆ
 «Պահոց գրքի» հետքերը հայոց միջնադարյան գրականության մեջ11
 «Պահոց գրքի» ձեռագրերը 39
 «Պահոց գրքի» մասերի հրատարակությունները..... 49

ԲՆԱԳԻՐ

**Ա. ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՅ ԿԱՊԱ-
 ԴՈՎ ԿԱՑԻՈՅ ՅԱՂԱԳՍ ՊԱՀՈՑ** 54
Բ. Ի ՊԱՀՍՆ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴՍ 80
Գ. ԱՐԲԵՑՈՂԱՑ..... 95
Դ. ՀԱՅԵԱ՛Յ Ի ՔԵԶ..... 109
Ե. ՅԱՂԱԳՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ 124
Զ. ՔԱԿԵՑԻՑ ԶԻՄ ՇՏԵՄԱՐԱՆՍ..... 135
Է. ԱՌ ԸՆՁԵՂՍՆ 148
Ը. ԶՎԱՇԽՈՂԱՑ..... 166
Թ. ԶԲԱՐԿԱՑՈՂԱՑ 177
Ժ. ԶՄԱԽԱՆԱՑ..... 192
ԺԱ. Ի ՍԱՂՄՈՍՆ ԱՌԱՋԻՆ..... 204
ԺԲ. Ի ԾԹ. ՍԱՂՄՈՍՆ..... 218
ԺԳ. Ի ԿԱ. ՍԱՂՄՈՍՆ..... 225
ԺԴ. Ի ՃԺԴ. ՍԱՂՄՈՍՆ..... 235
ԺԵ. Ի ՃԺԵ. ՍԱՂՄՈՍՆ..... 244
ԺԶ. ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ 253
ԺԷ. «Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ»..... 260
ԺԸ. Ի ԾՆՈՒՆ Դ ՓՐԿԶԻՆ..... 268
**ԺԹ. ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ ՈՒՂՂԱՓԱՌԻ ԵՒ ԱՊՈՂԻՆԱՐԻ ՀԱՐՁՈՒԱԾՈ-
 ՂԻ ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՋՔ** 285
Ի. ՏԵՍՈՒԹԻԻՆ ԲԱՐՍՂԻ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ԶՀԱԻԱՏՈՑ 301
ԻԱ. ՈՊՏԻՄԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ՝ ԲԱՍԻԼԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ..... 316
ԻԲ. ԲԱՍԻՂԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒՍԵԲՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ 325
**ԻԳ. ԹՈՒՂԹ ԱՌ ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱ-
 ԶԻԱԶՈՒՐ ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ** 327

ԻԴ. ԹՈՒՂԹ ԱՌ ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱ- ԶԻԱԶՈՒ՝ ՅԱՂԱԳՍ ԿՐԱԻՆԱԻՈՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՑ.....	335
ԻԵ. ԲԱՐՄՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ՝ ՄԵԾԻ ԴԻՈԴՈՐԱՅ ԵՐԻՑՈՒ ԱՆ- ՏԻՈՔԱՑԻՈՅ.....	341
ԻԶ. ՅԱՂԱԳՍ ԳՈՀՈՒԹԵԱՆ.....	348
ԻԷ. Ի ՎԿԱՅ ՅՈՒՂԻՏԵԱՅ ԵՒ ՅԱՌԱՋ ԱՍԱՑԵԱԼ ԽԱԻՍՍՆ ՅԱՂԱԳՍ ԳՈՀՈՒԹԵԱՆ.....	361
ԻԸ. Ի ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՏԵՓԱՆՈՍ.....	380
ԻԹ. Ի ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՈՒՆ ՎԿԱՅՄՆ.....	389
Լ. Ի ԳՈՐԴԻՈՍ ՎԿԱՅՆ.....	407
ԼԱ. ԽԱԻՍՔ ՅՈՐԴՈՐԱԿԱՆՔ Ի ՄԿՐՏՈՒԹԻԻՆՆ.....	421
ԼԲ. ԹԷ ԶԷ ՊԱՏՃԱՌ ՉԱՐԵԱՑ ԱՍՏՈՒԱԾ.....	437
ԼԳ. ՅԱՂԱԳՍ ՈՂՈՐՄԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ ԱՂԱԻԹԻՑ.....	455
Ծանոթագրոււթյուններ.....	463
Անձնանունների ցանկ.....	513
Տեղանունների ցանկ.....	517

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Բ

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

ԳԻՐՔ ՊԱՆՈՑ

Աշխատասիրությամբ ԿԻՄ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

Հրատարակության պատրաստեց և անվանացանկերը կազմեց՝ Գ. Գասպարյանը
Խմբագիր՝ Գ. Տեր-Վարդանյան

Հրատարակչության տնօրեն՝ *Եզնիկ Արք. Պետրոսյան*
Համակարգչային աշխատանքները՝ *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Հրատարակչական բաժնի*

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2008